Գրքեր.am

ԱՆՏՈՆԻՆԱ ՄԱՀԱՐԻ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԱՆՏՈՆԻՆԱ ՄԱՀԱՐԻ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Թարգմանությունը՝ Լ. Մարգարյանի

Երևան 2011

ՀՏԴ 891.981.0:882-94 Մահարի
ԳՄԴ 83-3Հ+84Ռ-4
Մ 190

Մ 190 Մահարի Անտոնինա
Հիշողություններ և պատմվածքներ/Անտոնինա Մահարի,
թարգմ.՝ Լ. Մարգարյան. - Եր.: Էդիթ Պրինտ, 2011. -128 էջ

Անտոնինա Մահարին իր սրտի պարտքը համարեց գրել իր ու ամուսնու կյանքի արժանահիշատակ դրվագների մասին, որոնք լույս տեսան անգլերեն ու ռուսերեն: Ներկա գրքույկը մի թարգմանություն-ընտրանի է հեղինակի հուշագրությունների բավիղներից, որը, անշուշտ, լույս կսփռի Գուրգեն Մահարու շատ անհայտ ու ոչ միշտ ճիշտ լուսաբանված կողմերի վրա: Սա մի յուրատեսակ տարեգրություն-պատմություն է Մահարիների դաժան ճակատագրի ու ապրած կյանքի բարդ ճանապարհի մասին: Գիրքը անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվության աղբյուր կարող է լինել ՀՀ, Արցախի, Ջավախքի հայկական հանրակրթական դպրոցների աշակերտության, ուսուցիչների, բանասիրական կրթություն ստացող ուսանողության, առհասարակ հայ գրականությամբ ու նրա պատմությամբ ու կոնկրետ՝ Գուրգեն Մահարի գրող-բանաստեղծի կյանքով ու ստեղծագործական աշխարհով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 891-981.1:882-94 Մահարի
ԳՄԴ 83.3Հ+84Ռ-4

ISBN 978-9939-52-321-7

© Անտոնինա Մահարի, 2011 թ.
© Լուսինե Մարգարյանի թարգմանություն, 2011 թ.
© «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2011 թ.

Նախաբան

Անուրանալի է կնոջ դերը տղամարդու կյանքում: Հայտնի են բազում փաստեր, թե մայրը, կինը կամ սիրած աղջիկը որքան հաճախ են կարևոր դերակատարություն ունեցել իրենց որդու, ամուսնու կամ սիրած տղամարդու կայացման գործում՝ հաճախ դառնալով նրա ներշնչանքի աղբյուրն ու պաշտպան-հովանավորը, զոհողության պատրաստ անդավաճան նվիրյալը: Այդ հանգամանքն առավել զգալի ու գնահատելի է թվում հատկապես այն դեպքերում, երբ կինը կամ սիրած աղջիկը օտարուհի՝ այլ երկրի, այլ ժողովրդի դուստր է: Բազում օրինակներից հիշատակենք ընդամենը մեկ-երկուսը: Ռաֆֆի-ասորուհի Աննա, Ռուբեն Սևակ-գերմանուհի Յաննի Ապպել: Սակայն մի առանձնահատուկ ապրում-զգացում ես ունենում, երբ ծանոթանում ես Չարենցի անդավաճան ընկեր ու բարեկամ, աքսորյալ Գուրգեն Մահարու ու լիտվուհի ուսանողուհի, նույնպես ստալինյան բռնապետության զոհ Անտոնինա Պաուլայտիտեի զարմանալի ու հուզիչ կյանքի ողիսականին: Դեռատի ուսանողուհին բառացիորեն դարձավ հայ գրական անդաստանում ամենևին ոչ հետին տեղ գրավող բանաստեղծ-գրողի կյանքի փրկիչն ու պահապան հրեշտակը: Իսկ գրողի մահից հետո, գրողի խնդրանքին հավատարիմ մնալով, մնաց Հայաստանում՝ կրելով անլուր զրկանքներ, մեկուսացման ու իր անձի հանդեպ դրսևորած անարդար արհամարհանքի, անհասկանալի նախանձի ու թշնամության տառապանքներ: Ապրեց ամուսնու տանն ու, մասունք առ մասունք հավաքելով նրան վերաբերող յուրաքանչյուր երկտող, նկար, գործածած իր, վերածեց բնակարանի հյուրասենյակը տուն-թանգարանի:

Այդ ամենից զատ Անտոնինա Մահարին իր սրտի պարտքը համարեց գրել իր ու ամուսնու կյանքի արժանահիշատակ դրվագների մասին, որոնք լույս տեսան անգլերեն ու ռուսերեն: Ներկա գրքույկը մի թարգմանություն-ընտրանի է հեղինակի հուշագրությունների բավիղներից, որը, անշուշտ, լույս կսփռի Գուրգեն Մահարու շատ անհայտ ու ոչ միշտ ճիշտ լուսաբանված կողմերի վրա: Սա մի յուրատեսակ տարեգրություն-պատմություն է Մահարիների դաժան ճակատագրի ու ապրած կյանքի բարդ ճանապարհի մասին: Գիրքը անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվության աղբյուր կարող է լինել ՀՀ , Արցախի, Ջավախքի հայ-

կական հանրակրթական դպրոցների աշակերտության, ուսուցիչների, բանասիրական կրթություն ստացող ուսանողության, առհասարակ հայ գրականությամբ ու նրա պատմությամբ ու կոնկրետ՝ Գուրգեն Մահարի գրող-բանաստեղծի կյանքով ու ստեղծագործական աշխարհով հետաքրքրվողների համար:

Արժե նշել, ու թարգմանչուհին բավականին տքնաջան ու հետևողական աշխատանք է տարել ոչ ռուսերեն մտածողության տեր լիավուհու ստեղծագործության առանձին մտքեր, արտահայտություններ հայհունչ դարձնելու համար: Թարգմանությունը բավականին հաջողված է և այսուհետ կլրացնի մեծ գրողի ու բանաստեղծի մասին այն գրականության շարքը, որ հետաքրքրությամբ կկարդան մտավորականն ու ուսանողը, աշակերտն ու գրասանությամբ հետաքրքվող շարքային ընթերցողը:

Նվեր Վիրաբյան

Երկու պոետների՝ Գուրգեն Մահարու և Պարույր Սևակի բարեկամությունը

Տե՛ր Աստված, պահպանի՛ր ինձ բարեկամներից,
Իսկ թշնամիներից ես ինքս կփրկվեմ:
(Ժողովրդական առած)

Առաջին անգամ ես Պարույր Սևակին տեսա Մոսկվայի «Ինտուրիստ» հյուրանոցում, Սիբիրից վերադառնալուց հետո: Չնայած նա նման էր խափշիկի, ասես աֆրիկացի լիներ, բայց պարզվեց, որ իսկական ջենտլմեն է, խորագիտակ մարդ և նուրբ հոգու տեր մտավորական:

Մահարին Հ. Թամրազյանի և Պ. Սևակի հետ

Նրա և Գուրգենի հանդիպումը շատ բուռն էր ու ջերմ, նրանք երկար գրկախառնվում էին, համբուրվում և տաք-տաք խոսում անցյալի մասին: Հետո նա շտապեց իր տիկնոջ՝ Մայայի և փոքրիկ որդու՝ Հրաչիկի մոտ: Այդ ժամանակ Սևակը սովորում և աշխատում էր Մոսկվայում:

Երկու պոետներին կապում էր իսկական ընկերությունը: Հաճախ Պարույրը գալիս էր մեզ մոտ՝ հյուրանոց: Գուրգենը սիրով էր հիշում իր երիտասարդ ընկերոջը, նրան համարում էր տաղանդավոր պոետ, բայց շատ ծանր բնավորության տեր մարդ՝ անհանգիստ, անդադրում, միշտ ինչ-որ տեղ շտապող:

Մեր երևանյան բոլոր «արկածներից» հետո վերջապես մենք տեղափոխվեցինք .... երեք սենյականոց բնակարան, որը գտնվում է Կասյան փողոցի վրա: Ահա հենց այդ բնակարանում էլ կազմավորվեց իսկական բոհեմ: Այնտեղ հավաքվում էին Գուրգենի ընկերները, խմում էին, ծխում, շատ խոսում, վիճում: Այդպիսի կենսակերպի պատճառով Գուրգենը հիվանդացավ, և բժիշկները նրան Մոսկվայի բուժական սննդի ինստիտուտի ուղեգիր տվեցին:

Մենք մայրաքաղաք մեկնեցինք ապրիլին: Գուրգենը Պարույրին հայտնեց, թե որտեղ ենք մենք կանգ առել: Մենք կանգ էինք առել «Ուկրաինա» հյուրանոցում: Ես և Գուրգենչիկը տաքսիով մեր հայրիկին տարանք հիվանդանոց, և բժիշկները նրան 40 օրով պառկեցրին: Ես և որդիս մնացինք հյուրանոցում: Այն ժամանակ մեր որդին գրեթե 5 տարեկան էր՝ գեղեցիկ, կենսախինդ, բաց գույնի գանգուրներով և շատ բարի: Հիշում եմ՝ արտասահմանցի հյուրերը ուշադրություն էին դարձնում նրան, ջանում էին խոսել, կատակել տղայի հետ:

Ահա այդ ժամանակ Սևակը ցույց տվեց իսկական, անկեղծ բարեկամություն: Նա շատ ուշադիր էր հիվանդ Մահարու նկատմամբ: Ամեն կիրակի (դա հիվանդի հետ հանդիպման օրն էր) գալիս էր հյուրանոց, զանգում, ես և Գուրգենչիկը իջնում էինք ներքև, իսկ այնտեղ կանգնած էր պոետը՝ վարդերի մեծ փնջով: Պարույրը համբուրում էր իմ ձեռքը. «Տիկի՛ն Անտոնինա, գնում ենք Գուրգեն խանի մոտ»: Մենք տաքսի էինք նստում և գնում մեր թանկագին Մահարուն այցելության: Գուրգենչիկը ամբողջ ժամանակ փարվում և ամուր բռնում էր Սևակ քեռուն, կարծես թե վախենում էր կորցնել նրան:

Մենք արդեն ինստիտուտում ենք: Մեր որդին տվեց փունջը հայրիկին. «Սիրելի՛ հայրիկ, սա քեզ համար է: Ե՞րբ ես տուն վերադառնալու: Մենք կարոտում ենք քեզ: Իսկ այս ծաղիկները Սևակ հորեղբայրն է բերել»: Երբ Գուրգենը իմացավ, որ իր ընկերը գումար է ծախսում մեզ վրա, խստորեն ասաց. «Պարո՛ույր ջան, այլևս չանես: Չէ՞ որ դու ուսանող ես: Վարդերը շատ շքեղ են, շատ շնորհակալություն»:

Գուրգեն խանը երեքիս էլ համբուրեց, Պարույրից վերցրեց թերթերը և մեզ ասաց. «Հիմա դուք կարող եք զբոսնել այգում (Գուրգենը նույնպես այգում էր), իսկ ես կխոսեմ ընկերոջս հետ»: Ես և փոքրիկ Գուրգենը ուսումնասիրում էինք սքանչելի ծաղկանոցը, իսկ բժշկուհիները զարմացած մեզ էին նայում:

Պարզվեց՝ Սևակն արդեն եղել էր Երևանում, տարբեր նորություններ էր բերել, թարմ թերթեր, ամսագրեր: Գուրգենը երջանիկ էր, մենք լսում էինք նրա ծիծաղը, քրքիջը, և ես ուրախ էի, որ նա իրեն լավ էր զգում: Բայց Գուրգենչիկն այնքան էլ չէր ուրախանում.

- Մա՛մ, գնանք այնտեղ՝ հայրիկի մոտ: Մենք եկել ենք, որ նրա կողքին լինենք:

- Հիմա չի կարելի, փոքրի՛կս: Այնտեղ Սևակ քեռին է, նրանք կարևոր խոսակցություն ունեն:

Այո, այդ երկու Դոն Ժուանները, սրտակից երկու խենթ պոետները, լավ էին հասկանում իրար և ուրախ էին, երբ միասին էին: Երբ տեսակցության ժամանակն ավարտվեց, Գուրգենը կանչեց մեզ և ասաց. «Իսկ հիմա, թանկագի՛ն Անտոնինա, գնացեք հյուրանոց, կգնաք ռեստորան, և թող Պարույրը պատվիրի իր համար խմիչք՝ ինչքան սիրտն ուզում է: Ափսոս, որ ձեզ հետ չեմ լինի: Բարի ախորժակ և մինչ հաջորդ կիրակի»:

Նա համբուրեց բոլորիս, շոյեց Գուրգենչիկի գլուխը և ասաց.

- Բալի՛կ ջան, փոքրի՛կս, մի՛ տխրիր, ես շուտով ձեզ հետ կլինեմ:

- Պա՛պ, հիմա գնանք, բավական է այստեղ մնաս: Դու անընդհատ հիվանդանոցներում ես: Մենք կարոտում ենք քեզ: Մայրիկն անընդհատ լալիս է:

- Շուտով, շուտով, բալի՛կ ջան:

Տխրությամբ մենք թողնում ենք մեր հայրիկին հիվանդանոցում, մեկնում ենք հյուրանոց, գնում ենք ռեստորան: Սևակն իր համար օղի՞, թե՞ կոնյակ պատվիրեց, լավ ճաշեցինք, իսկ հետո գնացինք հյուրանոցի շուրջը՝ զբոսնելու: Եղանակը հիասքանչ էր, չորս կողմը այնպիսի գեղեցկություն էր: Գուրգենչիկը ամուր բռնել էր Սևակի ձեռքը. «Թող չգնա: Նրա հետ հետաքրքիր է, հայրիկի ընկերն է, գրող: Ես սիրում եմ Պարույր քեռուն»:

Նա ինքն էլ չէր շտապում տուն: Նա պատմում էր իր կնոջ՝ Մայայի, որդու՝ Հրաչիկի (որը Գուրգենչիկից մի քանի տարով էր մեծ) մասին: Պարույրը շատ էր սիրում իր ընտանիքը և կարոտում էր նրանց: Նա շատ էր խոսում Գուրգեն խանի մասին, հիանում նրա տաղանդով, հումորով, պատմում էր՝ ինչպես է սպասել նրա վերադարձին և հիմա ուրախ է, որ Գուգեն Մահարին արդեն Երևանում է:

«Շնորհակալություն, տիկի՛ն Անտոնինա, որ դժվարին օրերին չեք թողել հիվանդին մենակ և փրկել եք նրան մահվանից: Գուրգեն խանն ինձ ասել է, որ եթե չլինեիք Դուք, իր ոսկորները կմնային սիբիրյան հողում, ինչպես շատ ուրիշների հետ պատահեց: Դուք հերոսական կերպար եք և արեցիք ամեն ինչ, որ մահվան ճիրաններից փրկեք նրան: Դրա համար, տիկի՛ն Անտոնինա, ես հարգում եմ Ձեզ, հիանում եմ և երախտապարտ եմ, որ Դուք փրկեցիք հայ գրողին և այդպիսի հոգա-

տար վերաբերմունք ունեք նրա հանդեպ: Ամեն մեկը չէր կարող այդպես հիվանդին խնամել»:

Եվ այդպես ամեն կիրակի:

Գուրգենչիկը մեծ հիացմունքով էր նայում քեռի Սևակին. «Հայրիկն ասում է, որ Պարույրը մեծ պոետ է: Հավանաբար ես էլ պոետ կդառնամ: Կամ գուցե օդաչու, դեռ չեմ որոշել, կամ հնարավոր է ոստիկան, նա նույնպես պաշտոնյա է: Նա այնքան գեղեցիկ գլխարկ ունի»:

Պարույրը անսքող հարգանքով էր վերաբերվում ինձ, իսկ ես նրան նայում էի, ինչպես եղբոր (նա ինձանից փոքր էր ընդամենը մեկ տարով): Ես ուզում էի վերադաստիարակել իմ եղբորը, որպեսզի քիչ ծխեր: Իսկ նա ամբողջ ժամանակ ծխում ու ծխում էր: Լավ է, որ մենք թարմ օդում ենք: Պարույրն ասաց, որ անգամ գիշերն է ծխում:

- Իսկ ե՞րբ եք քնում, - հարցնում եմ:

- Ես էլ չգիտեմ: Ես այնքան շատ խնդիրներ ունեմ, որ քնելու ժամանակ չկա:

Ահա այսպես անմոռանալի ժամանակ ենք անցկացրել մենք հայ մեծ պոետի հետ:

Մի անգամ ահա, թե ես ինչ արեցի ռեստորանում: Լավ ճաշելուց հետո մենք զբոսնում էինք Մոսկվա գետի ափին: Բոլորը լավ տրամադրություն ունեին: Պարույրն ուրախ էր: Նա ինչ-որ բանաստեղծություն էր արտասանում հայերենով: Գուրգենչիկը հիացմունքով էր նայում պոետի երեսին և շարունակում էր բռնած պահել նրա ձեռքը: Իսկ Սևակը, որ ինքն էլ հայր էր, կարողացել էր գրավել մեր տղային:

Ահա այդ ժամանակ ես սկսեցի.

- Պարո՛ւյր, հիմա ես Ձեզ հետաքրքիր բան կպատմեմ: Ձեզ հաճելի կլինի իմանալ այդ մասին: Երբ մենք գալիս ենք Մոսկվա, ամեն տարի հյուրանոց է գալիս Հասմիկը՝ Ձեր դստեր հետ: Ի՜նչ լավ բալիկ է: Ի՜նչ գեղեցիկ աղջնակ է: Մենք շատ ենք սիրում ձեր դստերը: Իսկ Գուրգենչիկը երջանիկ է, երբ նրանք գալիս են. նրանք միասին խաղում են, իսկ մենք Գուրգեն խանի հետ հիանում ենք նրանց նայելով:

Պարույրը կանգ առավ: Տխրեց: Մռայլ ճակատին և դեմքին կարմիր գծեր երևացին: Ես հիմա էլ տեսնում եմ այդ ամենը: Մոռանալ չեմ կարողանում:

- Ուրեմն Գուրգեն խանը նույնպե՞ս գիտի դրա մասին: Իսկ նա ի՞նչ

ասաց, - հարցրեց նա բարկացած:

- Ապրե՛ս, Պարո՛ւյր: Այդպիսի լավ երեխա՜, իսկական հրաշք: Իսկ ի՞նչ նման է հորը: Մենք նրան շատ ենք սիրում, որովհետև նա մեր հրաշալի բանաստեղծի աղջիկն է: Հենց այդպես էլ ասաց Գուրգենը:

- Ախր նա խայտառակում է ինձ: Երեխային բերում է ինստիտուտ, որտեղ ես աշխատում եմ: Եվ ինձ հասցրեց նրան, որ ես հիվանդացա և պառկեցի հոգենյարդաբանական հիվանդանոցում և 3 ամիս խոսել չէի կարողանում: Ճիշտ է՝ բժիշկներն ինձ այնտեղ բուժեցին, բայց նյարդերս խախտված են, - ասաց Պարույրը ցավով:

Հիմա ես հասկացա, թե ինչ սարսափելի սխալ եմ գործել՝ նրա ցավոտ տեղը շոշափելով: Ես բառեր էի փնտրում նրան հանգստացնելու համար:

- Պարո՛ւյր ջան, (ես առաջին անգամ նրան այդպես դիմեցի) ես ոչ մի ամոթալի բան չեմ տեսել: Դուք պոետ եք, ավելի քան պոետ, սիրահարվող բնավորությամբ: Դուք սիրել եք մի կնոջ, նա սիրել է Ձեզ, և ահա ծնվել է ձեր սիրո պտուղ երեխան: Դուք սքանչելի աղջիկ ունեք: Իմիջայլոց, Հասմիկը սիրում է Ձեզ մինչև հիմա:

- Ինձ նրա սերը հարկավոր չէ: Նա թունավորեց իմ կյանքը:

Երկար ժամանակ մեծ բանաստեղծը փոթորկվում էր և ամբողջ ժամանակ ծխում՝ կարծես դրա մեջ փնտրելով մոռացում ու մխիթարություն:

- Ես ներողություն եմ խնդրում, որ դիպա Ձեր ցավոտ տեղին: Ես չգիտեի, որ ասածս այդքան ցավ կպատճառի Ձեզ: Խնդրում եմ՝ Գուրգենին չասել դրա մասին ոչինչ...

- Կարծես թե դա այնքան հաճելի թեմա է ինձ համար, որ կիսվեմ Գուրգեն խանի հետ: Ինձ համար տհաճ է խոսել դրա մասին:

- Բայց ներեցե՛ք ինձ, խնդրում եմ: Հուսով եմ, որ եկող շաբաթ կրկին կգաք: Գուրգենը կհուզվի:

- Ես ինչպես կարող եմ չգալ Գուրգեն խանի մոտ: Նա կսպասի ինձ: Մահարու հետ շատ հետաքրքիր է: Նա վառ անհատականություն է: Իմ հոգևոր հայրը:

Մի վերջին կիրակի էր մնացել, որ պետք է գնայինք բուժական սենյակի ինստիտուտ: Ես ու Պարույրը բարեկամաբար հրաժեշտ տվեցինք միմյանց: Նա համբուրեց իմ ձեռքը և ասաց. «Ներեցե՛ք, տիկի՛ն

Անտոնինա, ես տաքացա: Ասված իմ, ես ինչքան շատ սխալներ եմ արել...»: Խոստացավ գնալ Երևան, նորություններ բերել, թարմ թերթեր և ամսագրեր: Դա նրա պարտքն էր: Նա շոյեց Գուրգենչիկի մազերը, իսկ վերջինս ուրախ էր, որ Պարույր քեռին այդքան սիրում է իրեն:

Այդ պատմությունից ես ինձ համար հետևություն արեցի: Անվերջ կապվածությունը տարբեր կանանց հետ, սիրո պատմությունները տղամարդու կյանքում քաոս և շփոթություն են մտցնում, խարխլում են նրա առողջությունը, իսկ երբեմն նաև՝ վարկը: Բայց երբևէ այդ կնամոլները կսթափվե՞ն: Մեծ հարց է:

Երբ մենք մեր սենյակը գնացինք, Գուրգենչիկն ինձ սկսեց խրատել. «Մայրիկ, ինձ թվում է՝ դու շատ նեղացրիր Սևակ քեռուն: Ես տեսա, թե նա ինչպես բարկացավ և կարմրեց: Ես խղճում եմ նրան և վախենում, որ կհիվանդանա: Ես սիրում եմ Սևակ քեռուն: Նա հայրիկի ընկերն է»:

Պարույրն է ասել, որ մեր որդին ինձ շատ է նման: Ինչպես և ես, նա էլ է սիրում սովորեցնել: Մի անգամ չէ, որ Գուրգենին ասել է. «Հայրիկ, օդի խմելը հիմար սովորություն է և շատ վնասակար է առողջության համար: Ծխելը նույնպես վնասակար է: Մայրիկն է ասել»:

Կրկին. «Հայրիկ, ես ու մայրիկը քեզ դաստիարակում ենք, քանի որ վախենում ենք, որ դու կհիվանդանաս: Մեզ հոգնեցրել են «շտապ օգնության» մեքենաները»:

Ա՜յ այդպես: Երկու դաստիարակ Գուրգեն խանի գլխին: Բայց նա իսկական հայ դուրս եկավ, չէր զիջում: Դրա պատճառով էլ հիվանդանում էր:

«Ավելի լավ է հիվանդանալ, քան ձեզ լսել», - ասում էր նա:

Հաջորդ կիրակի Պարույրը կրկին զանգեց մեր սենյակ: Ես ու Գուրգենչիկը իջանք և հանդիպեցինք բանաստեղծին: Նա լավ տրամադրություն ուներ: Այս անգամ ծաղկեփունջը ես գնեցի: Արդեն վերջին անգամ էինք գնում ինստիտուտ: Երկուշաբթի Գուրգենին դուրս էին գրում: Ինչպես միշտ, Գուրգենչիկը ծաղիկները տվեց հորը: Վերջինս համբուրեց մեզ բոլորիս և ուղարկեց զբոսանքի: Պարույրի հետ նրա համար ավելի հետաքրքիր էր: Բայց մենք չէինք նեղանում, ուրախ էինք, որ նա իրեն լավ է զգում:

Երբ տեսակցության ժամանակն ավարտվեց, Գուրգենը գրկեց ինձ և որդուն, Պարույրին շատ ջերմ հրաժեշտ տվեց: Շնորհակալություն

ԱԱ

հայտնեց անկեղծ բարեկամության, ուրախ հանդիպումների համար: Նա խոստացավ այցելել մեզ Լիտվայից վերադառնալուց հետո:

Մեզ Պարույրը շատ ջերմ հրաժեշտ տվեց: Համբուրելով ձեռքս՝ ասաց. «Տիկի՛ն Անտոնինա, ես ուրախ եմ, որ Գուրգենը Ձեր ձեռքում է: Շնորհակալ եմ ամեն ինչի համար և մինչ նոր հանդիպում Երևանում»:

Գուրգենչիկին նա հայրաբար համբուրեց: Իսկ նա շատ ուրախ էր, որ Սևակ քեռին այդքան բարի է:

Ահա այդպես ամառն անցավ, և բոլորիս հիշողության մեջ հաճելի հուշեր մնացին: Երկուշաբթի ես և որդիս եկանք հիվանդանոցից տանելու մեր հայրիկին: Գուրգենչիկը անչափ ուրախ էր, Գուրգեն խանը՝ նույնպես, իսկ ես ուրախությունից ամբողջ գիշեր չէի քնել:

Ինստիտուտում իսկապես բուժել էին մեր հիվանդին: Գուրգենն իրեն լավ էր զգում:

Տոմսերը գնված էին, և հաջորդ օրը մենք մեկնեցինք Լիտվա: Փառք Աստծո, մենք կրկին միասին ենք: Պալանգայում Գուրգենը հանդիպեց իր գրչակից ընկերներին, լիտվացի գրողներին: Ես և Գուրգենչիկը լողում էինք ծովում, շատ զբոսնում էինք և վայելում էինք հրաշալի բնության գեղեցկությունը: Կարճ ասած՝ ամառը հիասքանչ անցկացրինք: Իսկ սեպտեմբերի սկզբին արդեն Երևանում էինք:

Գուրգենը մտածել էր գիրք գրել իր ծննդավայր Վանի մասին և վերադառնալուց հետո սկսեց գրել:

Հիմա Պարույրի հետ մենք հարևաններ էինք: Նրանք ապրում էին կողքի մուտքում: Սևակն արդեն երկրորդ անգամ էր ամուսնացել, Նելլիի հետ՝ Հասմիկի ընկերուհու: Իսկ Մայան, (հետո նա ինքն ինձ ասաց այդ մասին) իմանալով, որ ամուսինը Մոսկվայում ապօրինի երեխա ունի, նրան ներել չէր կարողացել, և նրանք բաժանվել էին՝ չնայած Մայան ամբողջ կյանքում սիրում էր Պարույրին:

Նոր ընտանիքում Սևակն արդեն որդի ուներ՝ Արմենը: Կյանքը շարունակվում էր:

Մի անգամ Պարույրը մեզ հրավիրեց իրենց տուն: Կարծեմ՝ իր ծննդյան օրն էր: Մենք այնտեղ հանդիպեցինք նկարչուհի Ռեգինա Ղազարյանին, Համո Սահյանին, Հրաչյա Հովհաննիսյանին, Էմինին իր տիկնոջ հետ և շատերի, որոնց ես չէի ճանաչում: Նելլին, պարզվեց, շատ լավ տնտեսուհի էր: Նա լավ ընդունելություն էր կազմակերպել:

Մենք ճաշակեցինք նրա պատրաստած հրաշալի կերակուրները, խորտիկները, իսկ տղամարդիկ խմում էին, ծխում և առավել բուռն վիճում, ինչպես միշտ...

Դա մի հրաշալի երեկո էր Սևակի բարեկամական ընտանիքում:

Մեր տանը ամեն ինչ լավ էր ընթանում: Գուրգենը գրում էր իր նոր գիրքը: Մեր որդին սովորում էր դպրոցում, նա հակում ուներ դեպի օտար լեզուները, ակադեմիական հիշողություն ուներ, բավական էր երկու անգամ կարդալ բանաստեղծությունը և անգիր էր արտասանում: Բայց, ցավոք, գործնական մտածողություն՝ մի գրոշի չափ էլ չուներ: Այդպես էին ախտորոշել ուսուցիչները: Իմիջիայլոց, ես նույնպես գործնական չեմ: Գուրգեն խանը ևս ավելի լավ չէր: Դրա համար էլ մեր բախտը չբերեց: Գուրգենչիկը լավ ձայն ուներ: Նա երգում էր և շատ երգեր գիտեր: Երգի դասերին նա մեներգում էր: Բոլորը հիանում էին: Նա արդեն 11 տարեկան էր: Լավ ուսանավորներ էր գրում: Սիրում էր պոեզիա, գրականություն:

Մեր տանը տղամարդիկ զբաղվում էին լուրջ գործերով, իսկ ես, ինչպես միշտ, ղեկավարում էի և փորձում նրանց դաստիարակել: Բայց, ավաղ, ոչ ոք ինձ չէր լսում:

Պարույրը հաճախ էր գալիս մեր տուն և մեղր էր բերում իր հայրենի գյուղից: Ինձ թվում էր, որ նա անչափ փոխվել էր: Իսկ օր ու գիշեր ծխելն անհետևանք չէր անցել: Նա սկսել էր հազալ, նոպաները դաժան էին, ուղղակի շնչահեղձ էր լինում, կարմրում, կապտում: Գուրգենը սարսափով էր նայում իր ընկերոջը և հասկացնում էր, որ ես չհեռանամ: Նա վախենում էր բանաստեղծի կյանքի համար: Բայց նույնիսկ այդ ծայրահեղ պահերին ծխախոտը ծխում էր նրա ձեռքին: Երբ նոպան անցնում էր, Պարույրը նորից էր սկսում ծխել: Հետո էլի խոսում էր Գուրգենի հետ և գնում: Մի օր Մահարին գլուխ գովեց, որ գիրք է գրում իր ծննդավայրի մասին: Չգիտեմ՝ Սևակն ուրախացա՞վ, թե՞ ընդհակառակը...

Մեր հյուրի գնալուց հետո ես Գուրգենին ասացի.

- Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է տառապում մարդը: Թող քեզ դաս լինի: Թո՛ղ ծխելը: Դրանից ի՞նչ օգուտ:

- Հեշտ ես ասում: Իսկ ես չեմ կարողանում առանց ծխախոտի ապրել: Բայց դու մի՞թե հասկանում ես մեզ: Մի՛ խմիր, մի՛ ծխիր, կանանց հետևից մի՛ ընկիր, թե չէ կմեռնես: Ահա քո քաղաքականությունը: Այդ

դեպքում ինչո՞ւ ապրել:

- Լավ, արա ինչ ուզում ես: Այլևս ոչինչ չեմ ասի: «Շտապ օգնություն» ինքդ կզանգես:

Աստված, ո՞վ է ստեղծել այս խենթ տաղանդներին, ովքեր այդպես անխղճորեն վատնում են իրենց առողջությունը: Իսկապես որ, նրանք խենթ են, անհորմալ, անբացատրելի: Ո՞ւր եմ ես ընկել:

Ամեն անգամ Լիտվա գնալիս մենք կանգ էինք առնում Մոսկվայում, ի դեպ՝ տարբեր հյուրանոցներում: Այնտեղ Գուրգենը հանդիպեց իր ընկերոջը՝ Աբրահամ Ալեքյանին: Նա Ֆրանսիայից էր եկել, ֆրանսերեն հրաշալի գիտեր և թարգմանիչ էր:

Մի անգամ Աբրահամը ցույց տվեց իր թարգմանությունները ֆրանսերենից հայերեն և ասաց. «Հասկանո՞ւմ ես, Գուրգե՛ն խան, Պարույրը խնդրեց ինձանից այդ թարգմանությունները, և ահա, տես, նա իր նոր գրքում դրել է ֆրանսիացի բանաստեղծի ստեղծագործությունները, որոնք ես եմ թարգմանել»: Եվ նա Գուրգենին ցույց տվեց Սևակի գիրքը:

Գուրգենը բարկացավ. «Դա գրագողություն է: Ինչպե՞ս է նա համարձակվել, ինչպե՞ս չի ամաչում: Ես Պարույրից այդպիսի բան չէի սպասում»:

Գուրգենը փոթորկվում էր և տաքացած մի հոդված գրեց այդ մասին՝ մոռանալով, որ դա անում է իր թանկագին, սիրելի ընկերոջ դեմ: Հոդվածը Գուրգենը հանձնեց ամսագրին: Իսկ խմբագիրը կարդացել էր և փոխանցել Սևակին: Նա սարսափելի փոթորկել էր և չէր կարողանում ներել Գուրգեն խանին, որին այդքան սիրում էր: Պարույրը սարսափելի վրեժխնդիր եղավ:

Մահարու «Այրվող այգեստանները» գիրքն արդեն լույս էր տեսել: Պարույրն այնպիսի փոթորիկ բարձրացրեց, որ հնարավոր չէր նկարագրել: Նրան միացան շատ վիրավորվածներ, որոնց Մահարին քննադատել էր: Եվ վայրի աղմուկ բարձրացավ: Դա սարսափելի որոտ էր, որ պայթեցրին հիվանդ, տանջված գրողի գլխին: Մանրամասն ես չեմ գրի, քանի որ դրա մասին գրվել է:

Գուրգենին լուրեր էին հասնում, որ Գրականության ինստիտուտում Սևակը ելույթ էր ունեցել և անաստվածորեն քննադատել Գուրգեն Մահարու գիրքը: Նրան անվանեցին դավաճան, թուրքերի ծառա և տարածեցին, իբր «Այրվող այգեստաններ»-ը թարգմանում են ....հա-

յերի դարավոր ոխերիմ թշնամիները և պետք է տպեն: Եվ նույնիսկ ինձ էր հիշել իմ թանկագին եղբայրը. «Այո՛, այդ նա է մեղավոր: Եթե չլիներ Անտոնինան, Մահարին այլ կերպ կգրեր...»: Այո՞, պարոն Սևակ, բայց չէ՞ որ ինքը՝ Գուրգեն խանն էր ասել Ձեզ, որ եթե չլիներ Անտոնինան, իր ոսկորները կմնային սիբիրյան հողում, ինչպես պատահել էր շատերի հետ...

Իսկ եթե Մահարու ոսկորները մնային Սիբիրում, այդ գիրքը չէր ծնվի, և Գուրգեն Մահարին Երևանում չէր լինի...

Իմիջիայլոց, Գուրգենը նույնպես ինձ էր մեղադրում. «Իզուր դու այն ժամանակ ջանացիր ինձ դուրս բերել հիվանդանոցից: Հիմա ես հանգիստ պառկած կլինեի այնտեղ, և ոչ մի տագնապ չէր լինի, ոչ մի վիրավորանք չէի լսի: Լավ կլիներ՝ հավերժ քնած լինեի»:

Գուրգենը շատ ծանր տարավ այդ ամենը. «Անտոնի՛նա, չկա ավելի մեծ վիշտ, քան քո գրական գործի նկատմամբ միտումնավոր տարածվող կեղտաշաղախն է: Եվ այդ անում են քո թանկագին գրչակիցները, սիրելի հայրենակիցները: Իսկ ո՞ւր են այն գրողները, ովքեր քեֆ էին անում մեր տանը: Ոչ մի բառ չասացին ի պաշտպանություն իմ գրքի: Կարծես թե ամեն ինչ գլխիվայր շրջվել է ...»:

Գիշերները մի անգամ չէ, որ Գուրգենը ցանկացել է դուրս նետվել պատշգամբից: Ես զգոն էի ու աչալրջորեն հետևում էի: «Դու կրկի՞ն այստեղ ես, - ասում էր նա, - Աստված իմ, նույնիսկ մեռնելու իրավունք չունեմ: Ինչ ճակատագիր է: Բոլորը դավաճանեցին ինձ, դու միակն ես հավատարիմ մնացել, իմ բարի՛ հրեշտակ: Հիմար էինք մենք, երբ վերադարձանք այստեղ: Կմնայինք Սիբիրում, արդեն որպես կամավորներ: Այնտեղ այնքան հրաշալի մարդիկ են: Հիմա էլ կգնայինք, բայց արդեն ուժ չկա...»:

Պալանգայում իր կյանքի վերջին օրերին Գուրգենը հաճախ կրկնում էր. «Բոլորին կներեմ, բայց Պարույրին՝ երբեք: Ես նրան որդուս պես էի սիրում: Ես նրա վրա՝ գրչով, իսկ նա ինձ `կացնով»:

Այդ հետապնդումը տևեց 3 տարի: Գուրգենի առողջությունը վերջնականապես քայքայվեց: Նա իրեն սարսափելի վատ էր զգում: Նիհարել էր, ընդամենը 40 կգ էր կշռում: Ոչ մի տեսակի խնամքը, քնքուշ խոսքերը չէին կարող մխիթարել մինչև հոգու խորքը վիրավորված գրողին: Ես աջ կողմից էի նստած, Գուրգենչիկը՝ ձախ.

- Հայրի՛կ, մի՛ հիվանդացիր, մի՛ հեռացիր: Ամեն ինչ լավ կլինի, ես ու մայրիկը քեզ շատ ենք սիրում, - հորը մխիթարում էր մեր որդին:

- Գուրգե՛ն ջան, իմ թանկագին, բարի՛ ընկեր, դու կարող ես հպարտանալ քո գրքով: Նշանակում է, որ դու այնպես հանճարեղ ես գրել, որ քո հակառակորդները նախանձից ոռնում են: Կգա ժամանակը, և քո գիրքը իր արժանի տեղը կզբաղեցնի հայ գրականության մեջ, - ասում էի ես:

- Գիտեմ, որ կգան այդ ժամանակները: Կգտնվեն «քաջնազարներ» և ճարպիկ գործարարներ գրականության մեջ, այդ ոլորտի վաշխառուներ: Նրանք իրենց համար օգուտ կքամեն իմ գրքից, իրենց համար փառք և բարեկեցություն կստեղծեն: Այսօր իմ ստեղծագործությունը նետել են ցեխի մեջ: Եվ ես այս կյանքից հեռանում եմ շատ դժբախտ, նեղացած և վիրավորված: Դուք երկուսդ էլ, սիրելինե՛րս, իմ պատճառով եք տառապում: Շնորհակալ եմ քեզանից, իմ բարի՛ փերի, որ միայն դու մնացիր ինձ հետ, անբաժան ու հավատարիմ, մինչև իմ կյանքի վերջին օրը», - ասաց նա հուզախառով և արտասվեց:

Գուրգենչիկը ևս արտասվեց: Նա շոյում էր հորը, համբուրում, խրախուսում: Հետո Գուրգենն ինչ-որ բան հիշեց և ասաց.

- Անտոնի՛նա, աղաչում եմ քեզ, մի՛ թող Երևանը: Դու միակ մարդն ես, ով կարող է իմ մասին ողջ ճշմարտությունը պատմել: Դու իմ դաժան կյանքի ուղեկիցն ես եղել: Խնդրում եմ, գրի՛ր հուշեր մեր մասին, միասին անցած օրերի մասին: Գրի՛ր և ոչ մեկին մի՛ խնայիր: Դա շատ կարևոր է սերունդների ու պատմության համար:

- Մի՛ հուզվիր, դժվարին օրերի իմ ընկեր, ես ամեն ինչ կանեմ քո հիշատակի համար: Եվ դու չես մոռացվի, - խոստացա ես մահացող բազեին:

Մեր տանը թագավորում էր խավար, իսկ անխիղճ մահը շրջում էր Գուրգեն Մահարու շուրջ: Մեր որդին տեսնում էր այդ ամենը, հասկանում, և այդ վիշտը ճնշում էր նրա մանուկ սիրտը: Կարելի է ասել՝ մեր տանը չկար ծիծաղ, չկար ուրախություն, չկային լուսավոր օրեր: Շուրջբոլորը մթություն էր: Նախանձը, ատելությունը և անհոգի մարդիկ շրջապատել էին մեզ:

Վերջ ի վերջո տեղի ունեցավ վատթարագույնը, այն, ինչից մենք այդքան վախենում էինք: 1969թ. հուլիսի 16-ին Գուրգեն Մահարին

վախճանվեց Պալանգայի հիվանդանոցում: Նրա տառապած սիրտը դադարեց բաբախել: Բժիշկներն արեցին այն ամենն, ինչ կարող էին, բայց հիվանդին փրկել չհաջողվեց: Ավելի ուշ նրանք ինձ ասացին. «Այդքան ծերերին պետք չի այդքան հեռու տանել: Նա երևի, արդեն 90 տարեկան կլինի»:

Ահա այդպիսի տեսք ուներ տառապած, ստորացած հայ դասակարը՝ Գուրգեն Մահարին: Այն ժամանակ նա 66 տարեկան էր:

Գուրգենչիկը շատ ծանր տարավ հոր կորուստը, նա պարզապես ծանր հոգեկան ցնցումի մեջ էր: Ես էլ լավ վիճակում չէի, բայց ես պետք է մխիթարեի մեր տղային: Նա 14 տարեկան էր. խիստ զգայուն ու վտանգավոր հասակ:

Եվ այսպես մեր թանկագին Գուրգենի խնդրանքով մենք մնացինք Երևանում:

Մենք՝ երկու որբերս, այստեղ էինք և ոչ մեկին պետք չէինք: Ոչ մեկը չցավակցեց, չհարցրեց՝ ինչպես ենք մենք ապրում: Հասկանում եմ, նախկինում Սևակը խոր հարգանքով էր վերաբերվում ինձ, հիմա իմ եղբայրը ինձ նայում էր բարկացած, ատելությամբ, չէր բարևում, ինչպես նաև կինը՝ Նելլին: Չեմ հասկանում, թե ո՞ր մեղքերիս համար էին նրանք այդքան ատում ինձ: Ես ինձ հանցագործ ու մեղավոր էի զգում: Իսկ այդ ժամանակ Պարույր Սևակի փառքը մեծանում էր ոչ թե օրեցօր, այլ ժամառժամ: Ամեն տեղ միայն կարելի էր լսել՝ Պարույր Սևակ, Պարույր Սևակ, կարծես բոլորը խանգարվել էին: Իսկ Գուրգեն Մահարուն բոլորովին դուրս էին մղել հայ գրականությունից: Պարզվում է՝ նա ոչ մի լավ բան չի գրել:

40 օրվանից հետո Համո Սահյանի խնդրանքով (թող սուրբ լինի նրա հիշատակը) գրողների միությունը մեզ Ծաղկաձորի 15-օրյա ուղեգիր տվեց: Ես ու Գուրգենչիկը գնացինք: Այնտեղ կային գրողներ, ովքեր քեֆ էին արել մեր տանը, բայց նրանցից ոչ մեկը անգամ չմոտեցավ մեզ, որպեզի ցավակցեր կամ հիշեր Գուրգեն Մահարու մասին: Մենք դարձել էինք «ազգի թշնամի»:

Մի անգամ Գուրգենչիկը դպրոցից վերադարձավ և դառն արտասվեց:

- Մայրիկ, այժմ բոլորն ասում են, որ Գուրգեն Մահարին թուրքերին է ծառայում, իսկ նրա գիրքն արդեն տպագրվում է թուրքերենով: Եվ այդ ամենն ասել է Պարույր Սևակն իր ելույթում: Մամա, չի կարող պատա-

հել: Սևակ քեռին այնքան էր սիրում հայրիկիս, նրա ընկերն էր: Մայրիկ ես չեմ հասկանում, թե այստեղ ինչ է կատարվում...

Ես ինչ կարող էի ասել բարի և միամիտ 14-ամյա տղային, որը չէր կարող հասկանալ մարդկային հիշաչարությունը, խորամանկությունն ու ստորությունը:

- Մի՛ անհանգստացիր, բալիկս: Այս կյանքում ամեն ինչ պատահում է: Փառք Աստծո, շուտով արձակուրդներ են, և մենք Լիտվա կմեկնենք: Մեր ընկերները սպասում են մեզ:

Իսկ կյանքը շարունակվում է: Ես ջանում էի Գուրգենի հիշատակի համար ինչ-որ բան անել: Սենյակում, ուր ապրել և աշխատել էր գրողը, որտեղ հավաքվել էին նրա ընկերները և քննարկել Հայաստանի և հայ գրականության հետ կապված կարևոր հարցեր, ես կազմակերպեցի մերժված հայ դասականի տուն-թանգարանը: Ինչպես նաև գրեցի հիշողություններ մեր՝ միասին անցած ճանապարհի մասին:

Այս ամենը գրվել է 1972 թվին, բայց գիրքը (գրքի ռուսերեն տարբերակը Լ. Մ.) լույս է տեսել 2003թ.-ին՝ գրողների միության նախագահ Լևոն Անանյանի շնորհիվ: Ամեն դեպքում ես զգում էի, որ մեզ ատում են այստեղ: Ցանկանում են, որ մենք չքվենք: Բայց մենք մնացինք Երևանում՝ ի հեճուկս մեր բոլոր թշնամիների:

Արդեն երկու տարի է, որ մենք երկուսով ենք ապրում: Ամբողջ ժամանակ տառապում էինք և հիշում մեր հայրիկին: Ամեն ամառ մենք մեկնում էինք Լիտվա: Այնտեղ դարմանում մեր վերքերը և ուժ հավաքում գոյատևելու համար:

Մի անգամ ամռանը, Պալանգայում, մեր հարևանը՝ մոսկվացի գրող, ցույց տվեց ինձ «Իզվեստիա» թերթը, որտեղ տպագրված էր հայ գրող Պարույր Սևակի ընտանիքի սարսափելի ողբերգության մասին:

Կարդացի: Դա մեծ հարված էր ինձ համար: Հավաքվեցին մեր հարևանները, հետաքրքրվեցին՝ ինչու է նա մահացել, արդյոք դա չի՞ եղել հատուկ կազմակերպված: Իսկ ինձ համար պարզ էր, որ Սևակին սպանել էր նա, ով տվել էր նրան ղեկին նստելու իրավունք: Կարճ ասած, նա, ով տվել էր նրան վարորդական իրավունք:

Պարույր Սևակը հուզախառով մեծ պոետ էր և ոչ միայն պոետ, այլև անհատ՝ խանգարված նյարդերով, հազի նոպաներով. իհարկե, նա չէր կարող մեքենա վարելու իրավունք ունենալ: Դա սպանեց նրանց երկու-

սին էլ՝ Պարույրին ու Նելլիին, և մնացին երկու որբեր:

Հայտնի հայ գրողն ուներ շատ բարդ բնավորություն, նույնիսկ իր համար էր դժվար գտնել իրեն: Նա միշտ լարված էր, խառնված, շարունակ թվում է՝ ինչ-որ տեղ էր շտապում: Նա շտապում էր ապրել, կարծես թե զգում էր, որ իրեն շատ չի մնացել ապրելու...

Պարույր Սևակը, եթե նա ընկեր է, իսկական ընկեր է՝ ուշադիր, նվիրված, բայց եթե նա դարձավ քո թշնամին, պաշտպանվիր: Նա անխղճորեն կոչնչացնի քեզ: Ահա այդպես Սևակը ոչնչացրեց Գուրգեն Մահարուն ֆիզիկապես, իսկ նրա գիրքը՝ «Այրվող այգեստանները», հայտարարեցին արատավոր, հայ գրականության խայտառակություն:

Մի անգամ Գուրգեն Մահարին փիլիսոփայաբար ասաց. «Տե՛ս, Անտոնինա, 100 տարի հետո չեն լինի նաև նրանք, ովքեր այսօր են ծնվել: Իսկ ամենաշատը 50 տարուց չեն լինի ոչ իմ բարեկամները, ոչ իմ թշնամիները... Ինչ բարդ կյանք է: Հարցնում ես, թե ինչու են մեզ վերաբերվում այսքան նախանձով, ատելությամբ, անհոգի ձևով: Բոլորս կգնանք այնտեղ, փառք Աստծո, ոչ ոք չի մնա: Չեն լինի ոչ մեր ղեկավարները, ոչ ՊԱԿ-ի գործակալները՝ սասանայի ծառաները, ովքեր տանջում են մեզ և մինչև հիմա հետևում: Ընկերներ, մենք բոլորս կհանդիպենք այնտեղ՝ Հավերժության թագավորությունում: Հույս ունեմ այնտեղ իմ ընկերոջը՝ Պարույր Սևակին տեսնել մոտ ապագայում, և այն ժամանակ այն աշխարհում կքննարկենք «Այրվող այգեստանները»: Մինչ հանդիպում»:

Բայց ամեն դեպքում վիրավորական ու ցավալի է, որ երկու մտերիմ ու տաղանդավոր, ազգի նվիրյալ գրողների այդպիսի հիանալի բարեկամությունը այդքան անհեթեթ ու ողբերգական ավարտ ունեցավ: .

20.07.2007թ.
Երևան

Հիշողություններ գրողի դառն ճակատագրի մասին

Իր հայրենի քաղաք Վանի մասին գիրքը Գուրգեն Մահարին սկսեց գրել, երբ ծանր հիվանդ էր: Այդ գրքի մեծ մասը գրվել է Պալանգայում, որտեղ մաքուր օդն ու մեղմ փափուկ եղանակը ուժ էին տալիս ստեղ-

ծագործել: Գուրգեն Մահարին աշխատում էր մեծ վերելքով և շատ էր շտապում: Նա հաճախ էր կրկնում. «Գոնե վերջացնեմ սկսածը, թե չէ վախենում եմ ավելի շուտ մահանալ... Ես ուզում եմ գոնե ինչ-որ բան անել իմ սիրելի ժողովրդի, ծննդավայր քաղաքի համար, Եղեռնի զոհերի հիշատակի համար»:

Այնուամենայնիվ, Մահարին հասցրեց գրել իր դասական ստեղծագործությունը, որը հետո գրական փոթորիկ բարձրացրեց: «Այրվող այգեստանները» գիրքը Գուրգեն Մահարուն շատ դառնություններ, վիրավորանք բերեց, հիասթափեցրեց իր ընկերներից: Հիվանդ, տառապած գրողի գլխին այնպիսի վայրի որոտ պայթեց, որ պարզապես նկարագրել հնարավոր չէ: Գիրքը պատռում էին, նետում խարույկը: Մեր պատշգամբ էին շպրտում քարեր, ձմերուկի կճեպներ, ամեն տեսակի կեղտ: Լինում էին հեռախոսազանգեր, անանուն նամակներ և հեղինակին սպառնացող գրություններ, որ մենք հաճախ գտնում էինք մեր փոստարկղում: Իհարկե, շատ բաներ ես թաքցնում էի Գուրգենից: Բայց նա այդ մասին ամեն ինչ իմացավ, շատ բարկացավ և սկսեց ինձ «խրատել»: «Այդ ամբողջ կեղտը դու պետք է պահպանես պատմության համար: Ոչ մի բան մի՛ ոչնչացրու: Եվ ոչ մի բան մի՛ թաքցրու ինձնից: Ես պետք է ամեն ինչ իմանամ, թե ինչի են ընդունակ իմ թանկագին եղբայրները: Երևում է՝ այդպես է իմ բաժին ճակատագիրը, և ես դատապարտված եմ իմ բաժին դառը բաժակը մինչև մրուրն ըմպել»:

Երբ մենք ամռանը Պալանգայում էինք, Գուրգենը սպառնալից նամակ ստացավ Երևանից. «Մի՛ վերադարձիր, անիծյալ թուրք: Միևնույնն է՝ մենք քեզ կսպանենք...»: Գուրգենն իսկապես վախենում էր վերադառնալ տուն: Բայց ես ստիպում էի և համոզում.

- Դու մի՛ անհանգստացիր այս աղմուկից: Այս ամենը գրական նախանձ է: Նշանակում է՝ դու ստեղծել ես ինչ-որ մեծ բան, դրա համար էլ այդքան թշնամիներ ես վաստակել: Կգա ժամանակ, և քո գիրքն իր արժանի տեղը կգրաղեցնի հայ գրականության մեջ: Դե, կտեսնես:

- Ես գիտեմ, որ այդպիսի ժամանակներ կգան, բայց, ավաղ, ես չեմ լինի, - ասում էր Գուրգենը, և նրա աչքերում հայտնվում էր անսահման ցավ և վիրավորանք:

Մի անգամ, Պալանգայում, Գուրգեն Մահարին նամակ ստացավ Նորենցից, որտեղ շատ դաժան քննադատել էր «Այրվող այգեստաննե-

լը», նամակի վերջում գրված էր. «Ես՝ որպես կուսակցական կազմակերպության քարտուղար, պահանջում եմ, որ դու հրապարակայնորեն հրաժարվես քո գրքից»:

Գուրգենը ցնցված և վիրավորված էր. «Ո՞ր գրողը կհրաժարվի իր գրքից, այն էլ այնպիսի գրքից, ինչպիսին «Այրվող այգեստաններ»-ն է: Ես կուզենայի իմանալ՝ ինքը կհրաժարվե՞ր, եթե կարողանար գրել այդպիսի գիրք. օ՜, մարդի՛կ, օ՜, ժամանակնե՛ր», - ասաց Գուրգենը: Իհարկե, այդ նամակը շատ վշտացրեց նրան: Եվ դա իմ թանկագին ընկեր Նորենցը, որի հետ մենք վերադաձանք Սիբիրից:

Ես կցանկանայի հարցնել բոլոր այդ «հայրենասերներին», մի՞թե նրանք ավելի են սիրել Վանը, քան Գուրգեն Մահարին, ով փոքր տարիքում անցել էր այդ բոլոր ճանապարհները հայրենի Վանից մինչև Երևան՝ ապրելով թուրքական դաժանության ամբողջ սարսափները: Ինչպես էր Գուրգենը կարոտում Վանը: Հիշում եմ՝ միշտ ինձ պատմում էր. «Գիտե՞ս, Անտոնի՛նա՝ ինչպիսի՜ այգիներ կան այնտեղ: Իսկ մրգե՜ր, իսկ ծաղիկնե՜ր, հեքիաթային են: Այդպիսին դու չես տեսել: Իսկ ի՜նչ բույր ունեն: Աշխարհում չկա ավելի լավ քաղաք, քան Վանը: Եթե միայն կարողանայի Վան գնալ, պառկել մի որևէ տեղ՝ ծառի տակ, ապա միանգամից կառողջանայի»: Եվ այդպես՝ ամբողջ կյանքում: Միայն հայրենի հողի համար էր պոետի հոգին կեղեքվում:

Երբ Մահարին գրում էր «Այրվող այգեստանները», նա ապրում էր իր հիշողություններով և գտնվում էր նրանց գրկում... Գիշերը նրան երազում տանջում էին մղձավանջները և կոտորածի սարսափը: Այդ սարսափելի հիշողություններից նրա մոտ ստամոքսի խոցի սրացում եղավ:

Ուժեղ ցավից նա գոռում էր. «Մայրի՜կ ջան, ես մեռնում եմ»: Ես սարսափելի անհանգստանում էի: Կանչեցի «Շտապ օգնություն»: Բժիշկները սրսկեցին, ցավերը մեղմացան: Իսկ վաղ առավոտյան Գուրգենը վաթաթվում է իր երկար խալաթի մեջ, նստում գրասեղանի առաջ, որպեսզի շարունակի իր սկսած գործը: Մտածո՞ւմ էր արդյոք ստեղծագործ գրողը, որ իր շնորհակալ ձգտումը՝ տալ իր գրական պարտքը սիրելի Վանին, Եղեռնի զոհերին, ինչը ծանր աշխատանք էր հիվանդ գրողի համար, կբերեր այդքան վիշտ, վիրավորանք եւ ստորացումներ: Իսկ Մահարու մահից հետո նրա հակառակորդներն սկսեցին տանջել ինձ: Դրանք նաև վանեցիներն էին, մեր թանկագին վանեցիները:

Ահա, օրինակ, ուշ երեկոյան, հեռախոսը զանգեց: Ես շտապեցի սենյակ և վերցրի լսափողը: Լսափողից լսվում է ծերունական խռպոտ ձայն.

- Դու ինչո՞ւ ես այդքան ուշ վերցնում լսափողը: Ես ուզում եմ խոսել քեզ հետ: Ասա, ինչո՞ւ է Գուրգենն այդպես գրել: Այդ ամենը քո պատճառով է: Եթե դու չլինեիր, նա այլ կերպ կգրեր...

Հետո հաջորդեցին վիրավորանքներն ու հայհոյանքները Մահարու հասցեին, ինձ էլ բաժին հասավ... Ես աշխատում էի զսպել ինձ.

- Պարոն, եթե Դուք ցանկանում եք ինչ-որ բան ասել Գուրգեն Մահարուն, գնացեք խնդրեմ այնտեղ՝ գերեզմանաթմբի մոտ, որտեղ նրա այժմյան նստավայրն է: Հենց հեղինակից էլ կիմանաք, թե ինչու է նա այդպես գրել: Ես ի՞նչ կապ ունեմ:

Նորից զանգեց.

- Դու՛, ինչ է, չե՞ս լսում, որ այդքան երկար լսափողը չես վերցնում: Ես ուզում եմ քեզ հարցնել, թե ինչու Գուրգենն ընդունվեց կուսակցության շարքերը, եթե նա այդքան լավն է:

Հարցն ինձ շատ դուր եկավ: Իսկապես, ինչո՞ւ նախկին քաղբանտարկյալը, որ տարել էր այդքան տառապանքներ, ճնշումներ, ընդունվեց կուսակցության շարքերը: Ահա հենց նոր պարոնն ասաց, որ ամեն ինչ իմ պատճառով է, որ ես եմ ստիպել իմ ամուսնուն կուսակցական տոմս վերցնել: Եվ բոլորին հայտնի է, թե ինչպես եմ ես ղեկավարում: Այդ անծանոթ հայի այդպիսի ճշմարիտ հարցին ես, իհարկե, ջանացի պատասխանել: Եվ այսպես բացատրեցի նրան: Ուզում էի, որ իմ բառերը հասնեին հայ ժողովրդին, որը մեղադրում է իր մեծ դասականին: Ցանկանում եմ, որ դուք իմանաք, իմ սիրելի հայեր, որ ես չեմ ստիպել ձեր Մահարուն ԽՄ Կոմունիստական կուսակցության շարքերն ընդունվել, այլ Սերո Խանզադյանը, որը այն ժամանակ կուսակցության կազմակերպության քարտուղարն էր՝ գրողների միությունում: Այդ նա ագիտացիա արեց Գուրգեն Մահարուն, թե ինչպե՞ս կլինի, որ այդպիսի տաղանդավոր գրող և՝ անկուսակցական: Տեսնո՞ւմ ես, մենք բոլորս կուսակցական ենք, հանուն կոմունիզմի: Ես պետք է ասեմ, որ Գուրգեն Մահարին իմաստուն էր, բայց ժամանակ առ ժամանակ՝ նաև միամիտ: Նա տրվեց ագիտացիային և ինձ ասաց.

- Ստալինը չկա, ուրեմն կուսակցությունը փոխվել է: Ինչո՞ւ կուսակցական չլինել:

Իսկ ես դեմ էի այդ կուսակցությանը: Գուրգեն Մահարին 17 տարի տանջվել և տառապել էր այդ կուսակցության պատճառով և այդ բոլոր տառապանքներից հետո ընդունեց այդ կարմիր գրքույկը: Այդ կարմիր գրքի պատճառով մեր տանը իսկական պատերազմ պայթեց: Բայց, ինչպես միշտ, կուսակցությունը հաղթեց, և Գուրգեն Մահարին դարձավ նրա անդամ:

Դա պատահեց Խրուշչովի ժամանակ, բայց այդ ժամանակ քաղաքական մթնոլորտը քիչ թե շատ բարվոք էր: Բայց ահա սկսվեցին բրեժնևյան ժամանակները: Եվ «ամենաերիտասարդ կուսակցականի» տեսլապատկերը ցնդեց: Մի անգամ Գուրգենը վերադարձավ կուսակցական ժողովից շատ բարկացած, նեղված և ճնշված տրամադրությամբ և ահա, թե նա ինձ ինչ ասաց.

- Անտոնինա՛, ես պարզապես հիմարացա այս կուսակցության առումով, իմ ինչի՞ն էր այն հարկավոր, միայն անդամավճար մուծելու համա՞ր: Իմացիր, կոմկուսն ինչպես եղել, այնպես էլ մնացել է՝ արնախում, ժողովուրդների բռնապետ, դահիճ: Կուսակցությունը հեղել է մարդկայինն արյուն և միլիոնավոր մարդկանց կյանք կործանել: Կուսակցությունը ՊԱԿ-ի ձեռքերով մեզ տանջեց: Եվ ես ինչպես կարող եմ լինել մի կուսակցության մեջ իմ դահիճների հետ: Չէ՞ որ ՊԱԿ-ի բոլոր աշխատակիցները կուսակցական են: Ստալինն ու Բերիան նույնպես կուսակցական են եղել: Չէ՞ որ կուսակցությունը երկնեց այդ մարդակերներին, սադիստներին: Ի՞նչ սխալ եմ ես թույլ տվել: Ինչպես եմ ես հիմարացել: Ինչո՞ւ դու ինձ հետ չպահեցիր այդ անմիտ քայլից: Դու նույնպես: (Ինչպես տեսնում եք, միշտ սլաքավարն է մեղավոր): Հիմա այդ սև բիծը ընդմիշտ կմնա իմ կյանքի էջերում:

Գուրգեն Մահարին շատ էր ցավում, որ դարձավ կուսակցական: Եվ իր կյանքի վերջին երկու տարում նա չէր մուծում անդամավճար և չէր ուզում ընդհանուր ոչինչ ունենալ կուսակցության հետ: Փաստացի, Գուրգեն Մահարին ինչպես անկուսակցական եղել էր, այնպես էլ անկուսակցական մահացավ: Եվ այդ կարճ կապը կոմունիստական բլոկի հետ պարզապես ճակատագրի հեգնանք էր: Ինչպես միշտ, նա ծաղրեց տառապած ճակատագրի տեր գրողին: Իսկ հիմա շարունակեմ իմ «հաճելի արկածները»՝ կապված իմ ամուսնու «մեղքերի» հետ:

Կրկին անակնկալ: Վաղ առավոտյան դռան զանգ: Կարծես Գուրգենի ընկերները եկել են տեսնելու նրա տունը, իհարկե, ընկերների համար

դուռը միշտ բաց է: Մտան, երկուսն էլ՝ Վանից և միանգամից սկսեցին վիրավորել Մահարու հիշատակը: Ես ինչ ասես լսեցի նրանցից: Գուրգեն Մահարուց ավելի վատը ոչ մեկ չկար այս աշխարհում: «Ախ, դու դեռ թանգարան էլ ես ստեղծել նրա՝ այդ թուրք շան համար, դավաճանի համար: Դու նույնպես...»:

Իմ բարկությունը սահման չունի, ես ցանում եմ նրանց դուրս անել, բայց սրիկա անկոչ հյուրերը չեն ցանկանում գնալ: Նրանցից մեկը ձեռք բարձրացրեց ինձ վրա: «Հիմա կխփեմ, կիմանաս: Այստեղ քո տեղը չի...»: Բայց և այնպես չխփեց: Գնալիս թքեց դռան վրայի ցուցանակին, որտեղ գրված էր Գուրգեն Մահարու անունը: Եվ հայհոյելով նրանք ներքև իջան:

Ես շատ նեղացած և վիրավորված եմ Գուրգենի ճակատագրի համար, ինչպես նաև իմ: «Վալոկարդին» խմեցի, քանի որ զգում էի, որ սիրտս կարող է պայթել: Իսկ ես այնպես էլ ուզում ապրել, որպեսզի հասնեմ լավ օրերի: Ո՞ւմ հետ կիսեմ իմ տխրությունը: Ինչպե՞ս Մահարու բարի գործերը և իմ անսահման ինքնազոհողությունը ցեխի մեջ գցեցին:

Բոլոր նրանք, ովքեր այդպես անխղճորեն տանջեցին հայ դասականին, վաղուց արդեն կենդանի չեն, քանի որ դեռևս այն ժամանակ նրանք ծեր էին: Հեռացել էին կյանքից (շատ հանելուկային իավիճակում, և ինքը՝ կազմակերպիչը այդ հրեշավոր ծրագրի):

Վաղուց արդեն չկա հավերժ տանջվող Գուրգեն Մահարին: Եվ այստեղ՝ գերեզմանոցում, հանդարտվեցին նրա տառապանքները, մեծ ցավը և վիրավորանքները: Իսկ ինձ համար հիմա միակ մխիթարությունն այն է, որ նա այլևս չի տանջվում:

Ճիշտ է՝ եկան նոր ժամանակներ, փչեցին ազատ քամիներ: Հայաստանն արթնացավ երկար լեթարգիայից, ուղղեց իր թևերն ու ձգտում է անկախության: Ինչ լավ է, որ ժողովրդի երազանքը կատարվում է: Եվ ցավալի է, որ Մահարին չապրեց մինչև այս օրերը: Բայց այս լավ փոփոխությունները նա կանխատեսել էր: Եվ նրա մարգարեական բառերը մինչև հիմա ապրում են իմ մեջ: Մի անգամ իր մահվանից ոչ շատ շուտ Գուրգենն ինձ ասաց. «Հիշի՛ր, Անտոնինա՛, իմ բառերը: Այս բռնակալությունը երկար չի ձգվի: ՍՍՀՄ-ը լի է ճամբարներով և բանտերով, այն դատապարտված է կործանման: Չար կայսրությունը վերջապես կփլուզվի: Համակարգը և իշխանությունը, որոնք գոյատևում են շնորհիվ դավաճանների և արյունարբու գործակալների, գոյության իրավունք չունեն և

շուտով տապալվելու են: Եվ կսկսվի նոր դարաշրջան, հայը կդառնա իր երկրի, իր հայրական տան տերը, և ճշմարտությունը կհաղթանակի, և ես վերջապես հասկացված կլինեմ, բայց, ավաղ, այլևս չեմ լինի...»:

05.03.1991թ.
Երևան

Անավարտ վիպակ, վերջին ծխախոտ..

Իր «Երիտասարդություն»- վիպակը Գուրգեն Մահարին սկսել է գրել 1952թ. Սիբիրում: Ավելի ուշ տարբեր գրական գործեր ստիպեցին այն մի կողմ թողնել:

Բայց իր կյանքի վերջին տարիներին Գուրգեն Մահարին կրկին անդրադարձավ «Երիտասարդությանը»՝ այն ավարտելու միտումով: Ցավոք, թույլ առողջական և հրատապ գրական գործերի պատճառով այդ վիպակը դանդաղ էր առաջ գնում:

Երբ մենք ողջ ամառը թողնում էինք Երևանը, մեկնում Մոսկվա և Լիտվա, Գուրգենն իր հետ վերցնում էր ծոցատետրը՝ կիսատ մնացած վիպակով և շարունակում էր այն գրել Մոսկովյան հյուրանոցներում, Վիլնյուսում, Պալանգայում: Եվ որտեղ որ մենք մեկնեինք, նրա «Երիտասարդությունը» ուղեկցում էր մեզ ամենուր:

1969թ. ապրիլ: Երևան: Երբ ես ճամպրուկներն էի դասավորում մեկնելու համար, Գուրգենն ինձ տվեց ծոցատետրը, ինքնահոսը, մի շիշ սև թանաք և ասաց. «Այս ամենը դասավորիր, Պալանգայում ես կաշխատեմ: Ափոս, այս տարի քիչ գրեցի, ինչ-որ անհանգստություն կա հոգումս: Մի՞թե ես... Ախ, գոնե վերջացնեի իմ վիպակը»:

Ամառ: Հուլիս: Լիտվա: Պալանգա: Գուրգենը նստած է գրասեղանի մոտ, հագին սպիտակ վերնաշապիկ է, շագանակագույն շալվար, զգացվում է նրա սիրած օծանելիքի՝ «Շիպր»-ի ուժեղ հոտը:

Ծոցատետրը, որի մեջ նա գրում էր իր «Երիտասարդությունը», բաց է, 68-րդ էջ, գրիչը և ծխախոտը՝ գունատ, նուրբ ձեռքում:

Սեղանի դիմաց պատուհանից երևում է գեղեցիկ ճանապարհը: Գուրգենը նայում է նրան, իսկ աչքերը տխուր-տխուր են, դրանցում մեծ վիշտ, ցավ, վիրավորանք կա: Եվ այդպես ժամերով նա նստել ու մտածում էր:

- Անտոնի՛նա, ինչո՞ւ ես չեմ կարողանում գրել: Մի՞թե ինձ վիճակված չէ ավարտել «Երիտասարդությունը»:

Հետո նա լռեց, ինչ-որ բանի մասին էր մտածում և կրկին խոսեց.

- Ահա թե քեզ ինչ եմ խնդրում, եթե ինձ հետ ինչ-որ բան պատահի, տար այս ծոցատետրը Երևան և միացրու այն վիպակի սկզբին, որը ես թողել եմ գրասեղանի ձախ դարակում: Միայն խնդրում եմ, թերթերը չկորցնես: Վատ չէր լինի այն ուղարկել Երևան, Կուրտիկյանին: Դու հիշո՞ւմ ես՝ մեկնելուց առաջ նա եկավ մեզ մոտ, ասում էր, որ ուզում է իմ գործերը տպագրել: Այն ժամանակ ես նրան խոստացա ևս մի բան գրել և ուղարկել, բայց արդեն ուժ չկա: Այս ի՞նչ տարի է, ի՞նչ տարի: Թևեքելյանն արդեն չկա, Սոլախյանը նույնպես հիվանդ է... Նաիրին էլ է հաճախ հիվանդանում: Եվ ես անգամ չգիտեմ, թե ինչ է նրան պատահել: Իսկ ես, երևում է, վաղուց արդեն պետք է արխիվում լինեի: Այո, տարին լավը չէ:

Իսկապես, դա սարսափելի տարի էր:

Ինչքան մոտենում էր նրա կյանքի մայրամուտը, այնքան դանդաղ էր առաջ գնում նրա վիպակը: Արդեն ոչ թե էջերով, ինչպես դա լինում էր առաջներում, այլ օրը միայն մի քանի դարձվածք, արտահայտություն: Բայց ամեն դեպքում վիպակը գրվում էր:

«Երիտասարդությունը» Գուրգեն Մահարու վերջին ստեղծագործությունն է: Մինչև իր վերջին շունչը նա նստել է այդ վիպակի առաջ, մտածել, հիշել, ջանացել գրել: Երբ հուլիսի 16-ին Գուրգենին տարան հիվանդանոց, այնտեղ կես ժամից ընդմիշտ դադարեց բաբախել նրա տանջահար սիրտը, ես տուն վերադարձա արդեն մենակ: Մեր սենյակում՝ սեղանին, դրված էր Գուրգեն Մահարու՝ ծոցատետրի մեջ գրած անավարտ վեպը՝ 68-րդ էջը բաց... Կողքին դրված էր ինքնահոսը, մինչև վերջ չծխված ծխախոտը, և ամենուր ես զգում էի «Շիպր» օծանելիքի բույրը... Բայց սեղանի մոտ արդեն նստած չէր գրողը, իսկ նրա «Երիտասարդությունը» արդեն որբացել էր... Որպես ամենաթանկ գանձ՝ ես խնամքով վերցրի ծոցատետրը, որի էջերի վրա դեռևս չէր չորացել թա-

նաքը և չէր անէացել ստեղծագործական շունչը, ինքնահոսը և վերջին, մինչև վերջ չծխած ծխախոտը:

Այդ ամենը տեղավորեցի ամենաապահով տեղում, որ բերեմ Երևան:

Մեր սիրելի Գուրգեն Մահարին գնաց և իր հետ տարավ իր անկատար երազները, իր չիրականացած գրական պլանները (նա դեռ այնքան շատ բան էր պատրաստվում անել), իր անսովոր տաղանդը, ինչպես նաև դառը վիրավորանքը, ցավն ու հիասթափությունը:

15.01.1973թ.
Երևան

Ռեքվիեմ... ռեքվիեմ...

Հաճախ ենք ես և տղաս գնում այն ճանապարհով, որ տանում է գերեզմանատուն, որտեղ հավերժ հանգչում է անսահման թանկ իմ ընկերը: Այդ ճանապարհով քայլելիս չի կարելի չմտածել կյանքի, նրա ունայնության, դատարկության և մեր ոչնչության մասին: Յուրի Լերմոնտովի բառերը հարություն են առնում հիշողությանս մեջ. «...իսկ կյանքը, երբ սթափ ուշադրությամբ շուրջդ ես նայում, այնքան դատարկ ու հիմար կատակ է...»:

Պարզվում է, որ մեր կաղապարները (մարմինները – Լ.Մ.) շատ փխրուն են ու հավերժական չեն: Իսկ մեր գործե՞ը: Մեր գործերը դարերով են ապրում: Իհարկե, եթե դու հասցրել ես ինչ-որ բան իմանալ... Մտազբաղ քայլում ես ճանապարհով: Շուրջբոլորը լռություն է: Միայն թռչուններն են «Ռեքվիեմ» երգում հավերժաբար քնած քաղաքի բնակիչներին:

Քայլում ես, մտածում, հիշում... Իսկ սիրտդ ցավից կտրատվում է: Չորս կողմից հուշարձանները լուռ քեզ են նայում: Հուշարձանները քարից են, բրոնզից: Նրանց վրա անուններ են, տարեթվեր: Իսկ սառը քարերի տակ հանգչում են մարդկանց աճյունները, որոնք, ինչպես և մենք, ապրել են, սիրել, տառապել, իսկ երբեմն էլ՝ ուրախացել: Բայց նրանք բոլորը մահացել են, և մնացել են միայն հուշարձանները: Մի մասը ժա-

մանակից շուտ մահացել են չափից ավելի տառապելու պատճառով, մյուսները՝ չափից շատ ուրախությունից: Բայց թե՛ նրանք, թե՛ սրանք գնացել են նույն այս ճանապարհով, որտեղից ոչ մեկն այլևս հետ չի վերադառնում...

Եվ հարազատները ջանացել են քարի կամ բրոնզի վրա պատկերել նրանց համար թանկ գծեր, անուններ, և ահա, նրանց հոգատարության շնորհիվ, վեր է բարձրացել քաղաքը՝ հանգուցյալների քաղաքը: Այստեղ և՛ փողոցներ կան, և՛ ծառուղիներ և՛ հավերժական նստավայրեր:

Ահա ինձ քաջ ծանոթ անուններ: Ինչքան շատ ծանոթներ են արդեն եկել այստեղ, տեղափոխվել են հավերժական բնակության լռության քաղաք...

Գերեզմանաթմբի տակ Գուրգեն Մահարու հավերժական նստավայրն է, որին հասնելու համար մենք այնքան հաճախ ենք քայլում այս քաղաքով: Մարմարե սալիկի վրա մեծ տառերով փորագրված է ինձ համար թանկ անուն: Իսկ ես չէի ուզենա այս անունն այստեղ տեսնել: Բայց ավա՜ղ, ավա՜ղ:

Այստեղ՝ գերեզմանոցում, ես միշտ հիշում եմ Գուրգենի խոսքերը: Երբ ես ստիպում էի նրան հանգստանալ, նա ասում էր. «Մի՛ խանգարիր ինձ աշխատել, Անտոնինա՛, մի՛ ասա ինձ հանգստի մասին: Ես այն աշխարհում կհանգստանամ...»: Իրականում Գուրգենը հանգստանալ չէր կարողանում և չէր ձգտում հանգստանալ, նա միշտ ինչ-որ տեղ էր շտապում: Հիմա արդեն ես հասկանում եմ, թե ինչու էր նա այդպես շտապում. «Ինձ քիչ է մնացել ապրելու, բայց դեռ շատ բան պետք է ասել աշխարհին: Ահա դրա համար էլ շտապում եմ: Հետո կհանգստանամ...»:

Գրական դաշտի անդուլ մշակ: Քո անխոնջ աշխատանքով դու քեզ համար ստեղծեցիր անձեռակերտ արձան, որը ո՛չ ժամանակները, ո՛չ մարդիկ ավերել չեն կարող: Քո գրական ստեղծագործությունները դարերով կապրեն: Դու ծնվել ես, որպեսզի ստեղծագործես, գրես և տառապես: Քո առաքելությունը դու գերազանց կատարեցիր: Դու քո մուսային երբեք չես դավաճանել: Եվ դրա համար էլ քո գործերն անմահ են:

Ռեքվիեմ, ռեքվիեմ... Ննջի՛ր հանգիստ, մե՛ծն տառապյալ, խռովարար ճանապարհո՛րդ մեր աշխարհի, որ ավարտեցիր քո կյանքի ուղին: Այստեղ՝ այս գերեզմանոցում, հավերժ կհանդարտվեն քո տանջանքնե-

ը, քո ցավերն ու տառապանքները: Հավերժ ընդհատվեցին քո ձգտումները, երազանքներն ու մտորումները: Հիմա դու հանգիստ ես և չես տառապում...

Ռեքվիեմ, ռեքվիեմ: Հանգիստ ննջի՛ր, մեր սիրելի՛ Գուրգեն ջան, լեգենդա՛ր Գուրգեն խան: Նաիրի երկրի վերջին պոետ- փարավոն: Քո հայրենիքի զոհը...

Ռեքվիեմ, ռեքվիեմ... Եղրևանին լալիս է քո գերեզմանաքմբի վրա... Իսկ քամին մերթ մեղմ շոյում է քո գերեզմանաքումբը, ծաղիկները օրորվում են նրա վրա, մերթ մրրիկները պտտվում են քո հավերժական անկողնու վրա՝ հիշեցնելով ինձ քո կյանքի փոթորիկները... մերթ ոռնում, մերթ լալիս, մերթ ողբում և երգում են քո մասին ռեքվիեմ:

Ռեքվիեմ, ռեքվիեմ... Ողբում է իմ փշրված սիրտը քո գերեզմանին, սե՛ր իմ:

Հիմա դու լեգենդ ու երգ դարձար, ապրում ես քո ժողովրդի սրտում և հավերժ կապրես: Քո քնարի կախարդական հնչյունները անկարելի է մոռանալ: Արդյո՞ք կարելի է մոռանալ քո հրաշալի բառերը՝ ասված քո սիրելի քաղաք Երևանի մասին.

ԵՐԿՈՒ ԳԱՋԵԼ՝ ԵՐԵՎԱՆԻՆ

1

Այնքան կարոտ, այնքան կրակ պիտի թողնեմ քո փոշում.
Ու արնավառ այնքան երակ պիտի թողնեմ քո փոշում:

Թափառումներ հազարախոհ ու կարոտներ անորոշ,
Այնքան երգ ու այնքան դրոշ պիտի թողնեմ քո փոշում...

Այնքան պայծառ առավոտներ ու կեսօրներ արևոտ,
Իրիկնային այնքա՜ն կարոտ պիտի թողնեմ քո փոշում.
Այնքան կրակ, այնքան կարոտ, այնքան բոցեր դրոշի,
Ու անունս, որպես փոշի պիտի թողնեմ քո փոշում...

2

Ուր որ գնամ՝ հետս կգա սրնգահարող իրիկնային,
Աբովյանի պատին կոթնած սրնգահարող իրիկնային:

Բոլոր թողած կայաններում ես կլսեմ երգն այդ անկամ,
Որ երգել է հազար անգամ սրնգահարը իրիկնային:

Կկորցնեմ հազար անուն, որպես չեղած մի վարդարան,
Բայց գիտեմ, որ չեմ մոռանա սրնգահարը իրիկնային:

Օ՛, երկի՛ր իմ, երեկիդ պես դառնակսկի՛ծ ու վշտալուր,
Ներկայիդ պես այրող ու հուր սրնգահարը իրիկնային...

1924

Քո հրաշալի երգերը քամին ցրել է ողջ աշխարհով. ամենուր լսելի են նրանց թախծոտ մեղեդիները:

Քո էությունը, քո հումորը, քո դառը սատիրան, քո տխրությունը, սերն ու հմայքը դու թողեցիր արձակում, պոեզիայում, նամակներում, քո ստեղծագործություններում. նրանցում դու ապրում ես և կապրես հավերժ: Թանկագին Գուրգեն ջան, դու մեզանից չհեռացար, ինչպես թվաց ոմանց... Իրականում դու մեզ հետ ես: Հպարտ և ինքնավստահ քայլում ես արար աշխարհում՝ կարծես ոչինչ չի եղել...

Հիշողություններ երկու Գուրգենների մասին

Ես հոգուս մեջ կկրեմ
Իմ ցավն ու վիրավորանքը
Ու կանցնեմ կյանքի միջով՝
Ինչպես փոթորիկ:
(Մայրոնիս)

Կիրակի է: Արդեն առավոտվա ժամը 11-ն է, իսկ Գուրգեն խանը դեռ անկողնում է: Նա տրամադրություն չունի, որովհետև մեր սենյակում ամբողջ գիշեր Բոհեմն էր մոլեգնում: Ինքը՝ նույնպես:

Մեր հնգամյա որդին՝ Գուրգենչիկը, արդեն հասցրել էր բարի լույս ասել հորը, հիմա էլ կանգնել էր մահճակալի կողքին և շատ հանդիսավոր ասում էր.

Երկու Գուրգենները

-Հայրի՛կ, օդի խմելը հիմար սովորություն է, իսկ ծխելը շատ վնասակար է: Ես ու մայրիկն ենք ադպես որոշել:

-Ի՞նչ օրն եմ ընկել: Բավական չի, որ դու ես ինձ դաստիարակում առավոտից երեկո, հիմա էլ իմ տղան ինձ պետք է խելք սովորեցնի, - բարկացած ասում էր մեծ Գուրգենը:

-Հայրի՛կ, ես ու մայրիկը դաստիարակում ենք քեզ, որպեսզի դու չհիվանդանաս: Արդեն գարուն է, և արդեն ժամանակն է Լիտվա գնալու: Ես տեսել եմ՝ մայրիկը պատրաստել է ճամպրուկները:

- Քո մայրը ճամպրուկները հավաքել սկսել է դեռևս Նոր տարուց: Ես էլ եմ տեսել: Նա ցանկանում է գնալ հնարավորինս հեռու այստեղից, - ասում է Գուրգեն խանը:

- Մի՞թե դու չես հասկանում, քանկագին ընկեր, թե ինչո՞ւ պետք է մենք ամռանը գնանք այստեղից: Որովհետև դու այստեղ հիվանդանում ես, իսկ այնտեղ քեզ լավ ես զգում: Ինձ այնպես են հոգնեցրել «Շտապ օգնություն»-ներն ու հիվանդանոցները: Այդ սպիտակ խալաթները թունավորել են իմ հոգին: Այլևս չեմ դիմանում, - բողոքեցի ես:

- Մայրիկ, համբերի՛ր, ատաման կդառնաս, - խրախուսում է ինձ մեր փոքրիկ Գուրգենչիկը:

Այդպես էլ ապրում էին մենք երեքով: «Մեզ մոտ թագավորում են խաղաղությունը, բարեկամությունն ու սերը», - ասում էր մեր որդին:

Ամեն տարի մենք գնում էինք Մոսկվա, Լիտվա: Պալանգայում անցկացնում էինք ամբողջ ամառը: Գուրգեն խանը երբեք չէր հիվանդանում այնտեղ: Փառք Աստծո, «Շտապ օգնության», հիվանդանոցների կարիք չէր լինում:

Մեր Գուրգենչիկը մեծացել էր: Նա 10 տարեկան էր, արդեն դպրոց էր գնում: Ինչ հրաշալի շարադրություն էր նա գրել: Բոլորը հիանում էին: Մի անգամ, երբ նա կարդաց իր ստեղծագործությունը «Մոսկվա»

հյուրանոցում, մեր ընկերների համար, նրանք ասացին. «Նա տաղանդավոր տղա է, իսկական գրող»: «Կապրենք, կտեսնենք: Կյանքը ցույց կտա», - փիլիսոփայաբար ասաց Գուրգեն Մահարին:

Մենք մեզ լավ էինք զգում երեքով: Այդպես անցան տարիներ: Հետո լույս տեսավ այդ չարաբաստիկ գիրքը՝ «Այրվող այգեստանները», և մեր փոքրիկ աշխարհը գլխիվայր շրջվեց: Այդ մասին մանրամասն չեմ գրի, քանի որ արդեն շատ է գրվել: Մի խոսքով, Գուրգեն Մահարին չդիմացավ յուրայինների կողմից իրեն հասցված վիրավորանքներին և ստորացումներին: Նա հեռացավ մեզանից: Դա պատահեց Լիտվայում, Պալանգայում, 1969թ. հուլիսի 16-ին: Գնալիս Գուրգենը խոստացավ ինձ **Այնտեղից** հաղորդել, թե ինչ է **Այնտեղ** կատարվում: Բայց նա իր խոսքի տերը չեղավ: Կարծում եմ՝ ոչ իր մեղքով...

՝ Արդեն ծանր հիվանդ՝ նա ինձ գանգատվում էր իր ընկերներից, «Հիշի՛ր, Անտոնի՛նա, ամենաուժեղ հարվածն ու վիրավորանքն այն է, երբ յուրայիններդ քեզ չեն հասկանում, և անհոգի են վերաբերվում՝ մոռանալով, թե ինչքան շատ ես դու տառապել: Ես այլևս չեմ դիմանում այս ամենին: Ահա, ես գնում եմ այս դաժան աշխարհից, իսկ դու կապրես ևս 20 տարի: Իսկ ես չեմ լինի...», - ցավով ասում էր Գուրգենը:

Ինչո՞ւ նա ինձ նախանշեց ևս 20 տարի: Չէ՞ որ այն պայմաններում, որտեղ նա մեզ թողեց, այն չափազանց լարված իրավիճակում նույնիսկ 20 օրն էր դժվար ապրել, ուր մնաց՝ 20 տարի: Բայց մենք՝ երկու դժբախտ որբերս, ապրեցինք՝ ի հեճուկս բոլոր թշնամիների: Հիշում եմ՝ ոչ ոք այն ժամանակ մեզ չցավակցեց: Բոլորը խուսափում էին մեզանից: Եվ ես ինձ մեղսագործ էի զգում:

Մեր Գուրգենչիկը ծանր տարավ հոր կորուստը: Նա ամբողջ ժամանակ տառապում էր, լաց լինում, փնտրում հորը մերթ Երևանում, մերթ Լիտվայում:

- Հիշո՞ւմ ես, մայրի՛կ, հայրիկն ասում էր. «Բալի՛կ ջան, փոքրի՛կս, պարզապես ես չգիտեմ, թե դու ինչպես կապրես առանց ինձ: Դուք երկուսդ էլ այնքան անօգնական եք: Բալի՛կ ջան, դու զարդարեցիր իմ կյանքը, իմ բարի, սիրելի որդի: Ես շատ եմ ափսոսում, որ քեզ չեմ տեսնի: Հետաքրքիր կլիներ իմանալ, թե քեզնից ինչ կստացվի: Իմ կարծիքով դու գրող կդառնաս, բանաստեղծ: Դու ռոմանտիկ ես և անսահման բարի: Տեսնենք՝ ինչ ճակատագիր է սպասվում քեզ...

Իսկ ինձ Գուրգենն ասաց.

- Անտոնինա՛, իմացի՛ր, որ մորիցս հետո դու միակ կինն ես եղել, որ այդպես հոգատար, խնամքով, մայրաբար խնամել է ինձ: Այնպիսի հիվանդի հետ, ինչպիսին ես եմ, ոչ բոլորը գլուխ կդնեին: Ես հո լավ գիտեմ մեր կանանց: Եվ ես խղճում եմ քեզ, որ այդպիսի դժվարին ճակատագիր ունեցար... Երևանում նախանձը, ատելությունն ու անհոգի մարդիկ շրջապատել են քեզ միայն այն պատճառով, որ դու տեղացի՝ հայուհի չես: Իսկ որտե՞ղ էին իմ այդ հայուհիները այն ժամանակ, երբ ես այնտեղ մեռնում էի: Շնորհակալ եմ քեզ նրա համար, որ ես դեռ ապրում եմ, որ վերադարձել եմ և այդքան գրել: Շնորհակալ եմ քեզանից և երջանիկ եղիր: Դու արժանի ես դրան: Պահպանիր մեր Գուրգենչիկին: Նա նման չէ մյուսներին: Կարծես այս աշխարհից չլինի: Դաստիարակիր նրան... Ես այս կյանքից հեռանում եմ վիրավորված և դժբախտ: Իմացիր՝ դու իմ միակ հենարանն ես եղել իմ կյանքի ամենադժվարին պահերին:

Այդպես մենք հրաժեշտ տվեցինք իրար: Գուրգեն երկրորդի վրա կա՛մ թախիծն ազդեց, կա՛մ ինչ-որ մութ ուժեր վնասեցին նրան, չգիտեմ, բայց այդ ամենն ազդեց նրա հոգեկան աշխարհի վրա: Նա դարձավ ինքնամփոփ, կտրվեց այս աշխարհից, բայց ամեն դեպքում դեռ սովորում էր դպրոցում և ավարտեց 10-րդ դասարանը:

Ինձ համար նա միշտ եղել է հենարան, յուրային, հարազատ մարդ: Միակն աշխարհում: 15 տարի անընդհատ մենք մեկնում էինք Լիտվա և ամբողջ ամառն անցկացնում Պալանգայում, որտեղ մեր ընկերները մեզ շրջապատում էին սիրով, հոգատարությամբ և ուշադրությամբ: Այնտեղ մենք մոռանում էինք մեր տան մասին, և երբ գալիս էր վերադառնալու ժամանակը, մենք դժկամորեն էինք վերադառնում:

Ինչո՞ւ ես չմնացի Լիտվայում:

Դա Գուրգեն Մահարու կամքն էր: Իսկ մահացողի կամքը կատարելը սրբազան պարտք է:

- Անտոնի՛նա, աղաչո՛ւմ եմ, ապրիր Երևանում հանուն իմ հիշատակի: Քանի որ դու միակ մարդն ես, որը կարող է պատմել ճշմարտությունն իմ մասին: Իսկ դա շատ կարևոր է պատմության համար: Չէ՞ որ դու իմ կյանքի ուղեկիցն ես եղել: Թող նրանք իմանան. եթե դու չլիներիր, իմ ոսկորները կմնային սիբիրյան հողում, ինչպես շատերի հետ եղավ: Դու հերոսական կերպար ես, և հենց դու ես արել ամեն ինչ, որ դուրս քաշես ինձ՝ կենդանի

դիակիս, մահվան ճիրաններից: Շնորհակալ եմ քեզանից, իմ բարի՛ հրեշտակ: Թող Աստված քեզ պարգևատրի քո բարի գործերի համար…

Գուրգենը խոսում էր հուզախառով ձայնով: Իսկ Գուրգեն երկրորդը լսում էր այդ ամենը և ուզում էր արտասվել.

- Մի՛ լա, մի՛ լա, սիրելի՛ որդիս: Դու այնպիսի մայր ունես, որ կյանքում չես կորչի, - ասում էր Գուրգենը՝ շոյելով արտասվող տղային:

Թանկագին Գուրգեն, իմ մարտական ընկեր, մի՞թե ես կարող էի թողնել քեզ՝ վիրավորիդ, մարտադաշտում: Չէ՞ որ գթության քույրերն անում են ամեն ինչ վիրավորների համար և այդ կերպ շատերին փրկում: Դա բոլորի պարտքն է՝ օգնել անօգնականին: Բայց ես շատ վիրավորված եմ քո ճակատագրի համար, որ քո կյանքի վերջին տարիները թունավորեցին քո իսկ հայրենակիցները: Իսկ դու կարոտում էիր նրանց այնտեղ՝ Սիբիրում: Իսկ հիմա ես կկատարեմ քո կամքը և չեմ հեռանա Երևանից, չնայած այնտեղ ինձ համար շատ-շատ ծանր է: Չէ՞ որ քո հարազատներից ինչ-որ մեկն ուզում է, որ մենք չքվենք: Բայց քո կամքը կարևոր է ամեն ինչից, և ես կմնամ այստեղ, ինչպես դու ես ուզում: Խոստանում եմ: Եվ վստահ եղիր՝ ես ամեն ինչ կանեմ քո հիշատակի համար:

Դրա համար այն սենյակում, որտեղ Գուրգեն Մահարին ապրել և ստեղծագործել է, որտեղ հավաքվել են նրա ընկերները և քննարկել Հայաստանին վերաբերվող կարևոր հարցեր, ես ստեղծեցի մերժված հայ դասականի տուն-թանգարանը…

Ճիշտ է՝ Վարդան Աճեմյանը երբեք չմոռացավ մեզ: Ահա թե նա ինչ է գրել տպավորությունների գրքում. «Թանկագի՛ն Անտոնինա, ինչ բառերով քեզ հայտնեմ իմ շնորհակալությունը այն ամենի համար, ինչ-որ դու արել ես իմ սիրելի, հիվանդ եղբոր համար: Դու փրկել ես նրան մահից և կյանք նվիրել նրան…

Կգա ժամանակ, երբ Գուրգեն Մահարուն պատվանդանին կբարձրացնեն, և դու այն ժամանակ կստանաս փոխհատուցում և պարգևատրում այն ամենի համար, ինչ-որ արել ես հայ դասականի համար…»

Գուրգեն Մահարին գուցե արդեն պատվանդանին է, բայց ես չեմ կարծում, թե ինչ-որ մեկը կհիշի իմ մասին: Ես դրան չեմ սպասում, քանի որ ես հայուհի չեմ, և ինչքան էլ ջանամ, միևնույնն է, չեմ գոհացնում. չէ՞ որ ես օտար եմ, և դա իմ ամենամեծ «մեղքն» է: Հիմա մենք մնացել ենք երկուսով՝ շրջապատված ատելությամբ, նախանձով, անհոգի մարդ-

կանցով: Ոչ ոք չհիշեց մեզ, չխոնջաց: Ես երբեմն ասում էի.

- Տեսնո՞ւմ ես, Գուրգենչիկ, բոլորը մոռացել են մեզ, մենք ոչ մեկին պետք չենք: Մենք այստեղ օտար ենք և միայնակ:

- Մայրիկ, իսկ ինչո՞ւ ենք մենք օտար և ոչ մեկին պետք չենք: Սի՞թե մենք այդքան վատն ենք, - ասաց նա և լաց եղավ: - Մայրիկ, մայրիկ ջան, ես քեզ շատ եմ սիրում և երբեք չեմ մոռանա: Ոչ մեկը, մայրիկ, չի սիրի քեզ այնպես, ինչպես ես, - արցունքների միջից ասաց Գուրգեն երկրորդը:

- Բալիկ ջան, դրանում ես չեմ կասկածում: Չէ՞ որ դու իմ միակ և վերջին հույսն ես, - ասացի ես՝ ցավով և տխրությամբ:

1970թ. հուլիսի 16-ին մենք Պալանգայում կազմակերպեցինք Գուրգեն Մահարու մահվան տարելիցը: Չէ՞ որ նա այստեղ էր մահացել: Հրավիրել էինք նկարչուհի Ռեգինա Ղազարյանին, որը հանգստանում էր Պալանգայում: Նա իր հուշերը պատմեց մեր հայ դասականի՝ Մահարու մասին: Ես լիտվերենով Գուրգենի մասին հուշեր գրեցի. «Կովկասյան լեռներից, բիբլիական Արարատից մինչև Բալթիկ ծով»: Իմ հուշերը մեծ հաջողություն ունեցան: Ուրիշ լիտվացի գրողներ ևս Գուրգեն Մահարու տարելիցի մասին գրեցին մամուլում: Իմ Գուրգենչիկը 3 բանաստեղծություն արտասանեց, որոնք Գուրգեն Մահարին Սիբիրում գրել էր ինձ համար: Բոլորը հիանում էին տղայի հիշողությամբ և թե նա ինչ արվեստով էր ասմունքում: Դա հրաշալի երեկո էր՝ նվիրված հայ դասականի հիշատակին:

Անցան տարիներ: Մեր սիրելի Գուրգենը վաղուց արդեն չկա: Ես և Գուրգենչիկը կարոտում էինք և հիշում մեր հայրիկին: Իմ տղան հրաշալի հայր է ունեցել: Նա հրաշալի հիշողություններ ուներ: Ես կարդում էի ոտանավորները լիտվերեն, իսկ մեկ ժամից նա արդեն անգիր էր ասում այդ բանաստեղծությունը: Երբեմն մենք կազմակերպում էինք գրական երեկոներ: Մենք երկուսս էլ սնվում էինք պոեզիայով, երգերով և լուսավոր հիշողություններով...

Ահա իմ սիրելի լիտվացի պոետի, մեծն մտածող Մայրոնիսի բանաստեղծությունը.

Կմոռանան իմ երգերը.
Եվ այլ պետքեր
Կտիրուրեն ներշնչանք:
Ինչպես ինձ, նրանց ևս կլուսավորի այս նույն աստղը
Բայց ինչպես ինձ, նրանց նույնպես ևս կիսաբի:

- Մայրի՛կ, ի՞նչ հետաքրքիր բանաստեղծություն է: Մի՞թե այդ նույն աստղը մեր հայրիկին էլ խաբեց, - տխուր հարցրեց Գուրգենչիկը:

- Այո, բալի՛կ ջան, այդ նույն աստղը խաբեց Գուրգեն Մահարուն... Իսկ հիմա, բալիկ ջան, կարդա Լերմոնտով. «Ե՛վ տխուր է, և՛ ձանձրալի է, և ոչ մեկը չկա, որ ձեռք մեկնես...»:

Կարդաց մինչև վերջ և մտորումների մեջ ընկավ: Նա, ինչպես իր հայրը, սիրում էր երազել: Երկու բանաստեղծներ: Դրական երեկոն շարունակվում էր, հետո Պուշկին կարդացինք: «Դժնդակ օրերի իմ ընկերուհի», Եսենինի «Դու դեռ կենդանի՞ ես, իմ պառավ», կրկին Գուրգենչիկը ինչ-որ բանաստեղծություն հիշեց.

Ես հարցրի կոունկին
Որտե՞ղ է լավագույն երկիրը:
Նա թռչելով պատասխանեց
- Հայրենի եզերքից լավը չկա...

Հիմա ես ցանկանում եմ լիտվերենից թարգմանել իմ բանաստեղծությունը նրանց համար, ովքեր երազում են օտար ափերի մասին.

- Դու ոչ մի տեղ չես հեռանա այս լայնարշավ դաշտերից,
Որտեղ երկինքն է բիլ-լազուր, ինչպես գարնան ծաղիկ,
Պանդիտության մեջ, թեկուզ փողոցները լինեն ոսկեպատ,
Դու շնչահեղձ կլինես առանց հայրենի ծուխ ծխանի:
Եվ իզուր են քո մտքերը թռչում օտար ափեր,
Ամենապայծառ արևը մութ կլինի քեզ համար:
Այստեղ սև հողի գուղձը ոսկուց թանկ է ավելի,
Քանի որ նրա ամեն հյուլեում
Դու ինքդ կաս այստեղ...

Իրականում ես այս ամենը վտրձել եմ ապրել: Ամենապայծառ արևը խավար էր ինձ համար, իսկ հայրենիքի կարոտն իմ հոգին մաշում է մինչև հիմա:

Ես ինչ-որ ժամանակ կարդացել եմ Համո Սահյանի ոտանավորը ռուսերեն: Նա այնպես սիրով էր նկարագրում իր հայրենիքի քարե-

ը, կարծես նրանք կենդանի էին: Իրականում ամեն հարազատ բան անսահման թանկ է: Նույնիսկ հայրենի քարերը ոսկուց ավելի թանկ են:

Իմ որդին սիրում էր երգել: Նա այնքան շատ երգեր գիտեր: Նա ապրում էր գեղեցիկի վերապաց աշխարհում և չէր ցանկանում իջնել մեր մեղսավոր երկրի վրա: Հանկարծ նա անսպասելի հիվանդացավ, և ես ստիպված էի նրան հանձնել «սպիտակ խալաթավորների» ձեռքը: Նրանք դաժան վարվեցին քեզ հետ: Նույնիսկ շատ դաժան: Եվ ես դա երբեք չեմ մոռանա:

Դու հեռացար, իմ վերջին հարազատ, և մեր տանը կյանքը մեռավ: Այլևս չեմ լսում քո ձայնը՝ ո՛չ երգը, ո՛չ ասմունքը: Դու կենդանի պոեզիա էիր ինձ համար, լիրիկ, ռոմանտիկ, բարության աստվածն ինքը: Իսկ մյուսների համար դու ոչ մեկն էիր: Դու մերժված էիր հասարակությունից:

Ինչ կարող եմ ասել ես հիմա քեզ համար, բալիկ ջան: Քանի որ մենք երկուսս էլ այստեղ ոչ մեկին պետք չենք, պետք է միասին լինենք: Ես կգամ քեզ մոտ և մենակ չեմ թողնի քեզ: Այդ է ինձ բաժին ընկել. ընդմիշտ հանգչել օտարության մեջ: Եվ ես՝ քո դժբախտ մայրը, կգամ քեզ մոտ…

Թող սուրբ լինի քո հիշատակը, սիրելի որդիս, իմ միակ և վերջին հենարան: Թող հողը չճնշի քո բարի, երախտագետ սիրտը: Մի անգամ Գուրգեն խանը փիլիսոփայորեն ասաց. «100 տարի հետո չեն լինի նրանք, ովքեր այսօր են ծնվել: 50 տարուց չեն լինի թե՛ իմ ընկերները, թե՛ իմ թշնամիները: Արդպես է կյանքը…»:

18.03.2007թ.
Երևան

Տխուր հիշողություններ հիվանդանոցում

1968թ.-ն է: Մենք երեքս՝ երկու Գուրգենները և ես, Լիտվայից Երևան ենք վերադառնում: Հանկարծ գնացքի մեջ Գուրգենը տագնապ ունեցավ: Անհրաժեշտ էր բժշկական օգնություն: Ջերմությունը 40^0 էր: Ես այդ մասին հայտնեցի ուղեկցորդուհուն: Թբիլիսիում կանգնեցրին գնացքը, եկավ բժիշկ-ուրոլոգը և արեց հարկավոր ամեն ինչ: Ամեն ինչ մարդկայնորեն: Հետո ինձ ասացին. «Երևանում անմիջապես հիվանդանոց տարեք, անհապաղ վիրահատություն է հարկավոր: Մենք արդեն հայտնել ենք այնտեղ»:

Ես և Գուրգենչիկը սարսափի մեջ էինք. «Հայրի՛կ, դու կրկին հիվանդանոց ես գնում: Ինչո՞ւ մեր բախտը չի բերում»,- հեծկլտում էր 12-ամյա տղան: Երևանի կայարանում «շտապ օգնության» մեքենան արդեն սպասում էր մեզ: Մենք հրաժեշտ տվեցինք Գուրգենին, և նրան հիվանդանոց տարան,

Մահարիների ընտանիքը

Տանը մնացինք երկուսով՝ ես և Գուրգենչիկը:

Չնայած տաք սեպտեմբերյան օրեր էին, մեր բնակարանում ցուրտ էր ու դատարկ... Հիմա ամեն օր ես ու որդիս գնում էինք հիվանդանոց՝ մեր հայրիկին արցելության: Գուրգենին պատրաստում էին վիրահատության: Նա շոյում էր տղային և արցունքն աչքերին սսում.

- Դու ինչո՞ւ ես այդքան բարի, քնքուշ, զգայուն, կարծես այս աշխարհից չլինես: Մեծանում ես խելացի, ունակ, գեղեցիկ, բարձրահասակ, ինչպես կեչի: Չգիտեմ՝ ինչ է քեզ սպասվում այս դաժան աշխարհում: Միայն մի բան կարող եմ ասել, բալի՛կ ջան, որ դու զարդարեցիր իմ ծերությունը: Շնորհակալ եմ ճակատագրին, որ ինձ է ուղարկել այս թանկագին հրեշտակին՝ քո մայրիկին: Նա փրկեց ինձ և պաշտպանում է մինչև հիմա: Շնորհակալ եմ Աստծուց, որ քեզ պարգև տվեց, զավա՛կս:

- Հայրի՛կ, գնանք տուն: Առանց քեզ տանը դատարկ ու տխուր է,- աղաչում էր մեր որդյակը:

- Սպասի՛ր, համբերիր տեսնենք, թե բժիշկները ինչ կասեն, - պատասխանում էր հիվանդը տխրությամբ և թախիծով:

Մի անգամ վաղ առավոտյան Լիտվայից բերեցին Կոստան Զարյանին: Նա հանգստանում էր այնտեղի հանգստյան տանը: Նրա հետ պատահել էր նույն պատմությունը, ինչ՝ Մահարուն: Նրան ուղեկցում էր մի երիտասարդ բժիշկ - ուրոլոգ, բժշկական գիտությունների թեկնածու: Նա իմ հայրենակիցն էր, իսկական բժիշկ, իսկական մարդ:

Գուրգեն Մահարուն շտապ վիրահատեցին, որից հետո հիվանդին ուշակորույս բերեցին հիվանդասենյակ: Եվ ահա թե ինչ ասաց իմ հայ-

ընակիցը, որը ներկա էր եղել վիրահատությանը.

- Ես ապշած եմ, ցնցված և վրդովված բժիշկների անմարդկային վերաբերմունքից: Նրանք վիրահատությունն առանց ցավազրկման արեցին: Նրանք ծաղրում էին հիվանդին: Եթե մեզ մոտ՝ Լիտվայում, հիվանդի հետ այդ կերպ վարվեն, այդպիսի բժիշկները կզրկվեն բժիշկ կոչվելու իրավունքից: Ահա իմ խորհուրդը քեզ, քույրիկ, եթե դու ուզում ես, որ քո ամուսինը այստեղից կենդանի դուրս գա, ոչ մի վայրկյան նրան մենակ մի՛ թող: Հերթապահի՛ր գիշերուզօր: Հնարավոր է՝ դա փրկի հիվանդին: Բժիշկների վրա հույս մի՛ դիր: Այստեղ, չգիտեմ ինչու, շատ թշնամաբար են վերաբերվում Գուրգեն Մահարուն:

Իսկ ես գիտեմ...

Այդ տխուր միջադեպից ես ինձ համար եզրահանգումներ արեցի և հիմա ամեն օր խնդրում եմ Աստծուն, որ հեռու պահի ինձ բժիշկներից, հիվանդանոցներից, ՊԱԿ-ից և բանտերից: Եվ մինչև հիմա կրկնում եմ այդ աղոթքը...

Իմ թանկագի՛ն Գուրգեն Մահարի, պարզվում է, դու ընկել ես «հայրենասերների» ձեռքը: Նշանակում է՝ քո դեմ բարձրացած որոտը հասել է նաև «սպիտակ խալաթավորներին»: Հիմա պետք է մտածել, քեզ միայնակ չթողնել: Գուրգենչիկը 12 տարեկան է: Նրան ևս չի կարելի մենակ թողնել:

Փառք Աստծո, Գուրգենի զարմիկ Արամ Աճեմյանը սովորում է Երևանում, ճարտարապետական ֆակուլտետում: Շատ բարի և ազնիվ երիտասարդ, 20 տարեկան: Այդ ծանր օրերին Արամը մեծ հենարան էր մեզ համար: Ցերեկը նա հերթապահում էր Գուրգենի մոտ, մինչև ես գնումներ էի անում, ճաշ պատրաստում, սենյակը հավաքում: Իսկ գիշերը ես հերթապահում էի, Արամը Գուրգենչիկի հետ էր մնում, օգնում էր նրան կատարել տնային աշխատանքները: Նրանք երկու եղբայրների պես էին և շատ նման իրար: Ես երկու տղա ունեի: Գուրգենը շատ էր սիրում Արամին: Նա Կահիրեից էր: Արամը հիվանդի մոտ հերթապահելիս պատմում էր իրենց քաղաքի, հոր՝ Գուրգենի զարմիկի մասին: Գուրգենն էլ վերականգնվում էր, բայց դեռ ծանր հիվանդ էր, ջերմությունն էլ չէր իջնում:

Վիրահատությունից երկու օր հետո բժիշկներն ինձ հայտնեցին, որ Գուրգեն Մահարու վիճակն անհույս է: Թող գան հարազատներն ու ըն-

կերները հրաժեշտ տալու: Այդ ամենը նրանք ուրախությամբ էին ասում, կարծես հարսանիքի էին հրավիրում...

Գրողներից ոչ մեկը չեկավ: Ինչպես միշտ ամեն օր Վարդան Աճեմյանն էր գալիս: Հավատարիմ եղբայր, հավատարիմ ընկեր: Նա շատ վշտացած և անհանգստացած էր, որ իր հարազատ մարդը հեռանում է այս աշխարհից: Ես որոշեցի խրախուսել նրան.

- Վարդա՛ն Նիկիտիչ, ես կարծում եմ՝ դեռ ամեն ինչ կորած չէ: Ես և Արամը կհերթապահենք, ամեն ինչ կանենք, որ Մահարին դուրս գա այստեղից:

- Թանկագի՛ն Անտոնինա, ի՞նչ բառերով ես իմ երախտագիտություն հայտնեմ այն ամենի համար, ինչ-որ դու արել ես իմ հիվանդ եղբոր համար: Շնորհակալ եմ քեզանից, - ասաց Վարդանը՝ արցունքների միջից և գնաց:

Եկան Գուրգենի հարազատները՝ Էմման, նրա աղջիկը՝ Նատաշան և մեր փեսան՝ Արիկը: Հիանալի մարդիկ էին: Նրանք ինձ բարոյապես աջակցում էին:

Մի անգամ վաղ առավոտյան, երբ դեռ ես էի հերթապահում, ՀԽՍՀ առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը իր շքախմբով մտավ Գուրգեն Մահարու հիվանդասենյակ: Մահարին շատ ուրախացավ, և նրանք երկար զրուցեցին: Նա կատակում էր հիվանդի հետ, տանջված գրողին ուժ էր տալիս: Քոչինյանն ինձ ևս հաճոյախոսություն արեց, և նույնիսկ երախտագիտությունն արտահայտեց: Հետո հրաժեշտ տվեց և գնաց: Նրա աչքերում տխրություն և խղճահարություն կար: Նա բարի մարդ էր:

Մի անգամ՝ ուշ երեկոյան, Բայանդուրը եկավ որդու՝ Աշոտի հետ: Գուրգենը շատ ուրախացավ՝ գրական աշխարհից մարդ տեսնելով: Բայանդուրն ասաց, որ կարող եմ տուն գնալ, իսկ ինքը կմնա հերթապահության մինչև առավոտ: Ես հանգիստ էի, որ Գուրգենին թողել էի ապահով ձեռքերում: Աշոտը ինձ տուն ուղեկցեց, մենք ոտքով էինք գնում: Ուշ գիշեր էր, տրանսպորտ չկար: Աշոտը՝ 18-ամյա պատանի, նկարիչ՝ ուսանողը, մխիթարում էր ինձ ինչպես հարազատ, և ինձ համար հաճելի էր, որ Երևանում դեռ կան այդպիսի զգայուն, հրաշալի մարդիկ:

Ամեն օր Գուրգենչիկը լինում էր հիվանդանոցում կամ ինձ հետ, կամ՝ Աշոտի:

- Ես ուզում եմ հայրիկին տեսնել: Ես ուզում եմ հայրիկի մոտ լինել: Ինչո՞ւ նա տուն չի գալիս: Միշտ այդ հիվանդանոցները... Ա՜խ, ոնց ենք հոգնել մենք այդ ամենից:

Գուրգենն իհարկե չգիտեր, որ բժիշկները իր վրա խաչ էին դրել: Ես արտաքուստ ցույց չէի տալիս, որ մեր գործերը վատ են: Բայց, որպեսզի իմ պարտքը մինչև վերջ կատարեմ, մի անգամ ես Գուրգենին ասացի.

- Հնարավոր է, դու ուզում ես տեսնել այն կնոջը, ում սիրել ես: Ասա՛, ես կգտնեմ նրան:

Գուրգենը պատասխանեց.

- Կինը, ում ես ուզում եմ տեսնել և սիրում եմ, ինձ հետ է: Իմ սիրելի՛ Անտոնինա, ոչ ոք չի կարող փոխարինել քեզ: Աստված ինքն է ուղարկել ինձ այսպիսի բարի հրեշտակի՝ իմ կյանքի դժվարին օրերին: Դու երկրորդ կինն ես իմ մորից հետո, որ այդպես մայրաբար հոգ է տարել իմ մասին:

- Գուրգե՛ն, իսկ գուցե դու ուզում ես տեսնել Գրիգորի՞ն (արդեն 2 տարի է՝ մեր մոլորյալ որդին չի հայտնվել), ասա, ես կգտնեմ նրան և կբերեմ այստեղ:

- Եթե նա ինձ չի փնտրում, ուրեմն ինքը առավել ևս պետք չէ ինձ: Այն ժամանակ ես հիմար էի, երբ ամուսնացա: Իմ ինչի՞ն են նրանք պետք: Մինչև 32 տարեկան հասակս չէի ամուսնացել, իզուր այն ժամանակ հիմարացա, - պատասխանեց Գուրգենը բարկացած:

Հետո ասաց իր համար տհաճ շատ բաների մասին, որ մինչև այդ ժամանակ տանջում էին նրան...

Որպեսզի փոխեի հիվանդի համար տհաճ խոսակցության թեման, ես զրույց սկսեցի նրա «կախարդված» գրքի մասին:

- Գիտե՞ս, Գուրգե՛ն, քո գիրքը հանճարեղ է, քո թշնամիները նախանձից են ոռնում: Ապագայում դու կգնահատվես ըստ արժանվույն: Դու կարող ես հպարտանալ քո արվեստով:

Գուրգենը մտահոգվեց և ցավով ասաց.

- Ես գիտեմ՝ կգան ուրիշ ժամանակներ: Կգտնվի նաև «Քաջ Նազար» (ի՜նչ հանճարեղ գրող է մեր Թումանյանը, ինչպիսի կերպարներ է ստեղծել) և իմ անվան տակ հեռուն կգնա և նույնիսկ հերոս կդառնա: Բայց դա նրա վաստակը չէ, քանի որ նա ծանր օրերին այստեղ չի եղել: Իսկ ինչ վերաբերվում է իմ գրքին, ես վստահ եմ, կգտնվեն բիզնեսմեն-

ներ, գրական բնագավառում վաշխառուներ, որոնք իմ ստեղծածի միջոցով, որ գրված է սրտով ու արյունով, մեծ բիզնես կանեն: Տեսնո՞ւմ ես, Անտոնի՛նա, ով է աշխատում, տանջվում, իսկ դափնիներն ու հոնորարները ովքեր են վայելում: Դու գոնե լավ գիտես, թե ինչ «շնորհակալություն» ստացա ես այդ գրքի համար: Քեզ էլ բաժին հասավ, քանի որ դու իմ ծանր ճակատագրի ուղեկիցն ես:

Հիմա ուշադիր լսիր, թե ինչ եմ ասում քեզ: Դու միակ մարդն ես աշխարհում, ով իմ մասին ճշմարտությունը գիտի և կարողանում է տարբերել՝ ով է բարեկամ, ով՝ թշնամի: Գրի՛ր, թանկագի՛նս, ամեն ինչ, ինչ որ գիտես, ոչ մեկին մի՛ խնայիր: Այս հիվանդության մասին էլ գրիր, բժիշկների էլ: Ես ուզում եմ, որ աշխարհն իմանա, թե ինչ դաժան են նրանք վերաբերվել տանջված, խենթ գրողին: Գրի՛ր: Դա իմ խնդրանքն ու ցանկությունն է:

- Ոչ ոք չպետք է մոռացվի, ոչինչ չպետք է մոռացվի, - ասացի ես՝ ինչպես խոստում,- կկատարվի:

Մեկնելիս իմ համաերկրացին ինձ տվեց օգտակար խորհուրդներ, թե ինչպես հիվանդին փրկել թոքաբորբից, որ հաճախ է լինում վիրահատությունից հետո: Ես ուշադիր լսում էի նրա խորհուրդները, և սրբորեն կատարում: Նա գնաց՝ շատ զայրացած մեր բժիշկների վրա. «Նրանք խայտառակեցին սուրբ, մարդասիրական մեր մասնագիտությունը, և ես դա չեմ մոռանա: Այդպիսի անհոգի վերաբերմունք մեզ մոտ հնարավոր չէ...»:

Գուրգենն արդեն լիովին գիտակից վիճակում էր և սկսել էր վերականգնվել: Մի գեղեցիկ առավոտ բժիշկները ասացին. «Մահարուն կարելի է տուն տանել»: Եվ այսպես, ի հեճուկս բոլոր թշնամիների, հուրախություն բարեկամների և ի երջանկություն ինձ և Գուրգենչիկի՝ Գուրգեն Մահարին այսօր լքում է հիվանդանոցը: Քանի որ գիշերը ես էի հերթապահում, առավոտյան զանգահարեցի տուն և հայտնեցի ուրախալի լուրը: Իմ երկու որդիները երջանկացած եկան հիվանդանոց.

- Արա՛մ ջան, մենք հաղթեցինք: Եվ այդտեղ քո մեծագույն վաստակը կար: Առանց քեզ ես չէի կարող գլուխ հանել: Շնորհակալություն, շատ շնորհակալություն քեզ:

- Մորաքո՛ւյր Անտոնինա, ես այնպե՞ս էի ուզում և ամեն ինչ անում էի, որ միայն իմ հորեղբայրն ապրեր: Ես հետաքրքիր բաներ էի պատ-

մում Կահիրեի մասին, հորս մասին. ես տեսնում եմ, որ Գուրգեն Մահարին մեծ հետաքրքրությամբ էր լսում այդ ամենը:

- Շնորհակալություն, Արա՛մ ջան: Դու իմ երկրորդ որդին ես: Գուրգենն էլ քեզ շատ է սիրում, ինչպես հարազատ որդու, քանի որ դու դժվարին օրերին նրա կողքին էիր:

Իսկ Գուրգենչիկը հոր հետ էր անընդհատ, օգնում էր նրան հագնվել և անընդհատ շտապում էր. «Այա՛գ, արա՛գ, արի՛ դուրս գանք այստեղից...»:

Մեր սիրելի Արիկն իր մեքենայով եկել էր մեզ տուն տանելու: Հոգատարությամբ մենք Գուրգենին մեքենայի մոտ տարանք: Փառք Աստծո, կրկին մենք բոլորս տանն ենք: Մեր ուրախությունը նկարագրել հնարավոր չէր:

Վերջին պահին մեր մեկնելուց առաջ տարիքով սպիտակ խալաթով մի մարդ մոտեցավ ինձ և ասաց. «Շնորհակալություն, տիկին Անտոնինա: 90%-ով Ձեր վաստակն է, որ Գուրգեն Մահարին այստեղից կենդանի դուրս եկավ»:

Նշանակում է՝ նա «հայրենասերների» կուսակցությունից չէ: Ավելի ուշ ես իմացա, որ նա բժշկական գիտությունների դոկտոր է, հայտնի սրտաբան: Հաջողություն եմ մաղթում նրան:

Մենք արդեն տանն ենք: Գուրգենն, իհարկե, անկողնում է, իսկ Գուրգենչիկը հերթապահում է նրա կողքին: Արամը մեր ընտանիքի անդամն է: Գուրգենը նրան որդու պես է սիրում: Վարդան Նիկիտիչն ամեն օր գալիս է: Վահագն Դավթյանը և Համո Սահյանը մինչև վերջ մնացին հավատարիմ ընկերներ: Մեր բարեկամներ Էմման, Նատաշան և Արիկը մեզ հաճախ էին այցելում:

Նոր տարին՝ 1969թ., այնքան աղմկալից չէր, ինչքան առաջ: Նախկին ընկերներից միայն մի քանիսը եկան: Մեր սենյակում բոհեմներ այլևս չկան:

Տարօրինակ էր ու դատարկ: Բայց փառք Աստծո, մենք միասին ենք, և դա ուրախացնում է մեզ:

Մինչև Նոր տարի դեռևս Գուրգենն իրեն լավ չէր զգում: Նրան ուրոլոգիական օգնություն էր հարկավոր: Դժբախտաբար, մեր պոլիկլինիկայի ուրոլոգը մեկնել էր Տաշքենտ՝ դասընթացի (սեմինարների): Ինձ ասացին, որ միայն երկու հիվանդանոցում է հնարավոր գտնել մեզ

պետք եղած բժշկին: Վաղ առավոտ ես շտապեցի այնտեղ: Այնտեղ հանդիպեցի ուրոլոգի և խնդրեցի, որ գա ինձ հետ՝ ասելով, որ կվճարեմ: Երիտասարդ բժիշկը պատասխանեց, որ ինքը կգար, բայց գլխավոր բժշկի թույլտվությունն է պետք: Նա եկավ, ես բացատրեցի, որ Գուրգեն Մահարուն վիրահատությունից հետո հիմա կրկին բժշկական օգնություն է հարկավոր: Գլխավոր բժիշկը դարձավ խիստ և բարկացած. «Ո՞վ է Գուրգեն Մահարին, որ ես նրա մոտ ուրոլոգ ուղարկեմ: Ո՞վ է նա»,- բղավեց սպիտակ խալաթով գազանը: Ես վախեցա և հեռացա: Չեմ կարող ներկայացնել իմ վիրավորանքը: Գուրգե՛ն Մահարի, նշանակում է՝ դու ոչ մեկն ես:

Տուն եկա սարսափելի հոգեվիճակում, բայց հիվանդին չասացի այն, ինչ իմացել եմ: Ստում եմ, որ այնտեղից էլ բոլոր ուրոլոգները մեկնել են Տաշքենտ, բայց դու մի՛ հուզվիր, հիմա մեր տեղամասից բժիշկ կկանչեմ, և նա քեզ կօգնի: Այդպես էլ եղավ: Եկավ բժիշկը՝ շատ բարի, ուշադիր, նա օգնեց հիվանդին, հանգստացրեց նրան: Պետք է ասեմ, որ մեր բժշկական տեղամասում մեծ հարգանքով էին վերաբերվում Գուրգեն Մահարուն: Այնտեղ իսկական բժիշկներ էին, հիանալի մարդիկ:

Գարունը եկավ, ու Լիտվա գնալու ժամանակն էր: Ինձ անհանգստացնում էր Գուրգենի վիճակը: Հոգիս ծանրացած էր, վատ կանխազգացումը տանջում էր ինձ:

- Գուրգե՛ն, արի այս տարի Երևանում մնանք: Ես ուզում եմ երևանյան ամառը տեսնել: Ճանապարհներն ինձ հոգնեցրել են, - ասում էի ես ցավով:

- Ի՞նչ ես ասում, Անտոնի՛նա: Քո կարծիքով, ինչ է, ես դատապարտված եմ և պետք է մնա՞մ: Մեկնելու ենք, ինչպես միշտ, - պատասխանեց դատապարտվածը:

Մի անգամ Գուրգենչիկը դպրոցից եկավ շատ բարկացած, ընկճված: Գուրգենը քնած էր: Տղան ինձ սենյակ տարավ:

- Մայրի՛կ, խնդրո՛ւմ եմ, ոչինչ չասես հայրիկին այն մասին, ինչ ես կպատմեմ: Դպրոցում սարսափելի բաներ են խոսում Գուրգեն Մահարու մասին: Ասում են՝ ափսոս, որ դեռ ապրում է այդ թուրք շունը, դավաճանը, Հայաստանի թշնամին: Շուտ մեռներ: Իսկ Պարույր Սևակը ելույթ էր ունեցել Գուրգեն Մահարու դեմ: Իսկ ինչքան լավ ու բարի ընկեր էր: Հիմա դարձել է թշնամի: Ես ոչինչ չեմ հասկանում, թե ինչ է

կատարվում այստեղ: Իմ ընկերները նույնպես փոխվել են: Չեն ուզում խոսել, ընկերություն անել ինձ հետ: Նրանք ծաղրում են ինձ: Երանի շուտ գնայինք Լիտվա. այնտեղ սիրում, հարգում են հայրիկին, - ասաց Գուրգենչիկը ցավով և լաց եղավ:

Պետք է ասեմ, որ մեր որդու մանկությունը շատ տխուր է եղել: Միշտ բժիշկներ, հիվանդանոցներ, անհանգստություն սիրելի հոր կյանքի համար: Գուրգենչիկը չափազանց բարի էր, զգայուն այս դաժան աշխարհի համար: Նա կարծես լուսավոր ծիածան էր՝ սև երկնակամարի վրա: Նա բոլորին սիրում էր, բոլորին խղճում: Մեր մեկնումից մի քանի որ առաջ Նաիրի Զարյանը եկավ մեզ մոտ՝ ձեռնափայտը ձեռքին (նա հոդացավի տագնապ էր ունեցել, ցավերը տանջում էի նրան): Գուրգենը շատ ուրախացավ: Նրանք երկար ժամանակ գրկախառնված էին: Քանի որ ես հայերեն չգիտեմ, Նաիրին սկսեց ռուսերեն խոսել: Նա շատ վրդովվել էր, որ այդ «տղեկները» Գուրգենի գրքի դեմ հաչոց են բարձրացրել:

- Գուրգե՛ն ջան, դու հրաշալի գիրք ես գրել: Ամեն ինչ ճիշտ է և անկեղծ: Դա մեծագույն գիրք է, որը կապրի դարեդար: Դրա համար էլ այն առաջ բերեց այդպիսի վայրի նախանձ:

Նաիրին խոստացավ գրել Գուրգենին և վերցրեց մեր հասցեն:

- Դեռ չգիտեմ՝ ես ու Անժիկը որտեղ կհանգստանանք, բայց քեզ, Գուրգե՛ն ջան, միշտ կգրեմ:

Նա Գուրգենին իր վերջին գիրքը նվիրեց՝ գրելով. «Թանկագին Գուրգենին՝ իմ մանկության և ծերության ընկերոջը»: Իսկ ինձ Նաիրին ասաց.

- Ես գիտեմ, Անտոնի՛նա, թե դու ինչ ես արել Գուրգեն Մահարու համար: Այն բանի համար, որ նա ապրում և գործում է, քեզ շնորհակալություն:

Նրանք դեռ երկար խոսեցին, հիշեցին իրենց մանկությունը, քննարկեցին հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող տարբեր հարցեր: Բայց դրա մասին ավելի լավ է լռել: Եկավ հրաժեշտի ժամանակը: Նաիրին գրկեց իր ընկերոջը: Նաիրին թիկնեղ էր կաղնու պես, իսկ Գուրգենը՝ նիհար, տանջված, դժբախտ: Նաիրի աչքերին նայելով՝ ես հասկացա, որ նրանք բաժանվում են ընդմիշտ: Նաիրին վշտացած ու տխուր էր: Հրաժեշտի այդ տեսարանը շատ ցնցող էր, և ես արտասվել էի ուզում:

Նաիրի Զարյանին ես երկրորդ անգամ էի տեսնում: Երբ մենք բո-

լորս՝ Գուրգեն Մահարին, Ալազանն ու Մարոն, Նորենցը Կրասնոյարսկից վերադառնում էինք Մոսկվա, կայարանում մեզ դիմավորեց Նաիրին: Նա հագցրեց այս հերսներին և յուրաքանչյուրին տվեց 1000 ռուբլի: Այն ժամանակ ես առաջին անգամ ծանոթացա այդ դյուցազնի հետ: Հիմա տեսնում էի երկրորդ անգամ:

Հետաքրքիր էր՝ Նաիրին մտածո՞ւմ էր, կանխազգո՞ւմ էր նա արդյոք, որ այդ տարին նրա համար վերջինն էր, և ինքը կհեռանա կյանքից իր ընկերոջից 4 օր շուտ:

Գուրգենը գիտեր, որ Նաիրին երբեք չի վնասել իրեն, վատ բաներ չի գրել իր մասին: «Հայրենասերներին» միանալը նա իր արժանապատվությունից ցածր էր համարում:

Մենք արդեն Պալանգայում ենք: Գուրգենը ուրախ է, որ կրկին իր սիրելի քաղաքում էր: Հիմա Գուրգենչիկը միայն հոր հետ է շրջում: «Ես կհետևեմ, որ մեր հայրիկը չընկնի: Նա շատ նիհար ու թույլ է...»:

Մենք երեքով գնում էինք մեր սիրելի վայրերը, վայելում էինք հրաշալի բնությունը, ջանում էինք ուրախ լինել: Ես ուզում էի, որ Գուրգենը մոռանա իր չարաբաստիկ գրքի մասին: Ես պատմում էի տարբեր արկածների մասին, բայց ամեն ինչ իզուր էր: Գրողը չէր կարողանում մոռանալ վիրավորանքը, իր գրական աշխատանքի ստորացումը: Այդ ամենը տանջում էր նրա հոգին, նա մռայլ ու մտազբաղ էր: Գուրգենը զարմանում էր, թե ինչո՞ւ Նաիրին չի գրում, չէ՞ որ նա խոստացել է: Նա մեծ անհամբերությամբ էր սպասում իր ընկերոջ նամակին: Այն, որ ընկերը մոռացել էր իրեն տված խոստման մասին, նույնպես տանջում էր նրան: Եվ ահա մի անգամ նա նամակ ստացավ Համո Սահյանից: Կարդաց և գունատվեց:

- Ի՞նչ կա, - հարցնում եմ:

- Գործերը շատ վատ են, Անտոնի՛նա: Համոն գրում է, որ Նաիրին պառկած է հիվանդանոցում, այնտեղ, որտեղ ես: Նա սարսափելի ցավեր ունի: Նա պարալիզված է, քայլել չի կարողանում: Ցավից մոնչում է առյուծի նման: Չնայած նա 5-րդ հարկում է, բայց ներքևում լսելի են նրա սարսափելի աղաղակները. «Օգնեցե՞ք, օգնեցե՞ք: Ինչ է, դուք չե՞ք ուզում օգնել ինձ: Դուք ատո՞ւմ եք ինձ»: Եվ այդպես անվերջ գիշերուզօր: Համոն ասում է, որ բժիշկները սխալվել են ախտորոշման առումով. բուժել են հոդացավը՝ տաքացնելով, իսկ պարզվել է, որ նա տառապում

է ողնաշարի քաղցկեղից: Իրենց բուժմամբ նրանք արագացրել են այդ սարսափելի հիվանդությունը և առաջացրել ուժեղ ցավեր: Նույնիսկ մորֆին չի օգնում: Աստված, փրկիր բժիշկներից, - ցավով ասաց Գուրգենը և լաց եղավ, ապա նայեց ինձ և բարկացած ասաց.

- Ինչ է՝ դու ուրա՞խ ես: Չհամարձակվե՛ս: Նա իմ ընկերն է: Ես ուզում եմ տեսնել նրան:

Իմ աչքերում ուրախություն չկար, հաստատ: Միայն զարմանք: Ես զարմանում էի, մտածում էի, որ այդպիսի հսկան կապրի երկար-երկար, բայց դժբախտաբար, նա այդպիսի տառապանքով հեռանում է այս աշխարհից: Իսկ Գուրգենի բարկացած բառերը ասում են այն մասին, որ Նաիրին նրա համար շատ թանկ է, և ոչ ոք չի կարող վաշխառություն անել երկու մեծ գրողների փոխհարաբերության մասին խոսելիս:

Այս ամենը ես գրում եմ մեծ ցավով ու վիրավորանքով: Եվ գրում եմ ոչ թե նրա համար, որ ինձ համար հաճելի է հիշել այս ամենը, այլ գրում եմ, որովհետև ուզում եմ կատարել Գուրգեն Մահարու կամքը: «Անտոնինա՛, դու միակ մարդն ես աշխարհում, ով գիտի իմ մասին ողջ ճշմարտությունը: Գրի՛ր: Ես ուզում եմ, որ բոլորն իմանան այդ մասին»: Եվ ես գրում եմ...

Իմ աչքին Գուրգեն Մահարին մեծագույն տառապյալ է, դժբախտ, լեգենդար մարդ: Եվ շատ դժբախտ է նա, ով իր կյանքը նվիրաբերել է ծանր ճակատագրի տեր մարդու:

Դրա համար ես այդպես մայրաբար եմ խնամել նրան:

Գուրգենը մահացել է 1969թ. հուլիսի 16-ին, Լիտվայում՝ Պալանգայում:

Ես այս մասին մանրամասն գրել եմ: Այդ տարին՝ 1969թ.-ը, սարսափելի էր: Հայաստանը կորցրեց 10 գրողների ու գրական գործիչների: Երբ մենք բերեցինք Գուրգեն Մահարու աճյունը, Նաիրիի գերեզմանին ծաղիկներն արդեն թառամել էին: Պարզվեց՝ նա մահացել էր Գուրգեն Մահարուց 4 օր առաջ: Երևանը ցնցված էր: Մարդիկ հոգնել էին հուղարկավորություններից և տխրությունից: Գերեզմանատանը ես և Անժիկը հաճախ էինք հանդիպում: Նա հաստատեց այն, ինչ գրել էր Համոն Նաիրիի հիվանդության մասին:

Ես հաճախ էի հիշում նրանց վերջին հանդիպումը: Վերջին բաժանումը:

Շատ ցանկալի է, որ նրանք հանդիպեն այնտեղ՝ երկնային թագավորությունում: Թող սուրբ լինի քո հիշատակը, լեգենդա՛ր մարդ, և թող սուրբ լինի քո ընկերների հիշատակը, ովքեր սիրում էին քեզ:

Երևան 2007թ. դեկտեմբեր

Անհանգիստ հոգիները

Անտոնինա Մահարին աղջկա՝ Ռուբա-Նազիկի հետ

Ես հաճախ եմ մտածել մեր անցյալի մասին: Եվ քանի որ դա անսովոր կյանք էր, ես որոշեցի ևս մեկ անգամ գրել Գուրգեն խանի և նրա ընկերների մասին:

Ես վերադարձա,
Ես տանն եմ հիմա,
Ավելի լավ երջանկություն պետք չէ:
(պատերազմի տարիների երգ)

1954թ. անմոռանալի տարի: Մենք արդեն Երևանում ենք: Վերադարձանք ելեքով՝ Գուրգեն Մահարին, մեր աղջիկը՝ Ռուբա-Նազիկը և ես: Եվ էլի երկու գրող՝ Ալազանը (Մարոյի հետ) և Նորենցը: Գուրգենն այնտեղից բերեց թոքախտ, 12-մասնյա աղիքի խոց, հիվանդ սիրտ և նյարդերի կծիկ: Մեզ տեղավորեցին «Ինտուրիստ» հյուրանոցում, որտեղ գալիս էին Գուրգենի ընկերները՝ շնորհավորելու աքսորից վերադառնալու կապակցությամբ: Նրանք արդեն հայտնի գրողներ ու բանաստեղծներ էին՝ Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Լևոն Հախվերդյանը, Մարտին Քարամյանը և շատ ուրիշներ:

Գուրգենն ուրախությունից, որ ինքը Երևանում է, մոռացել էր, որ ինքը հիվանդ է, խմում էր, ծխում ու հուզվում: Նրա գործընկերները անսովոր մարդիկ էին և իրենց անսովոր էլ պահում էին: Իսկ ես կարծես երազում էի. սիբիրի դաշտերից, խոցերից ու հորթերից հետո ոչ մի

կերպ չէի կարողանում հարմարվել նրանց կենսակերպին: Մի անգամ Համո Սահյանը մեզ հրավիրեց իր նոր բնակարանը: Մեծ, դատարկ սենյակ էր՝ առանց կահույքի: Սենյակի մեջտեղում դրված էր մանկական մահճակալը, որի մեջ փոքրիկ տղա էր նստած՝ շատ նման հորը: Նա երկրորդ որդին էր՝ Արայիկը, իսկ մեծին՝ Նաիրին, մենք չտեսանք: Արայիկը շատ ուշադիր զննում էր մեզ: Գուրգենը մոտեցավ, շոյեց նրա մազերը և հայերեն ինչ-որ բան ասաց: Ահա այդպես նրանք ծանոթացան: Օրորոցի շուրջ պտտվում էր շատ գեղեցիկ երիտասարդ կին՝ Համո Սահյանի կինը՝ Մարիա Հակոբյանը՝ բանաստեղծուհի: Ավելի ուշ նա դարձավ մեր ընտանիքի բարեկամը:

Այդ նույն օրը մենք այցելեցինք նաև Հրաչյա Հովհաննիսյանին (այդ նույն շենքում): Նույնպես դատարկ սենյակ, պատուհանի մոտ դրված էր օրորոց, որի մեջ փաթաթված երեխա էր պառկած: Կողքին կանգնած էր Հրաչյայի բարձրահասակ, բարետես կինը՝ Աստղիկ Հովհաննիսյանը: Ես հետաքրքրվեցի՝ ինչո՞ւ է երեխան փաթաթված, չէ՞ որ այսքան շոգ է: Իսկ Աստղիկը պատասխանեց. «Սա իմ երրորդն է արդեն, և ես միշտ այդպես եմ մեծացրել»: Այդ փոքր էակը մեծացավ, դարձավ գեղեցկուհի դերասանուհի Թամարա Հովհաննիսյանը:

Այս երկու պոետների բնակարանամուտը մենք նշեցինք ռեստորանում և շատ աղմկոտ, շատ խմեցինք, խոսեցինք, նստեցինք մինչև գիշերվա ժամը 2-ը, մինչև դռնապանը խնդրեց մեզ գնալ:

Բայց մենք բաժանվել չէինք ուզում, և կրկին բոլորը եկան մեզ մոտ՝ հյուրանոց, և շարունակեցին քննարկել հայերին առնչվող հարցեր: Խմեցին, ծխեցին մինչև առավոտ: Ամբողջ սենյակը ծուխ էր, շնչելու օդ չկար...

... Այդ ժամանակ հիվանդանոցում մահանում էր մեր աղջիկը՝ Նազիկը: Մի քանի օր ես նրա կողքին էի գտնվում: Մի անգամ ինձ մոտեցավ բժշկուհի Անահիտը՝ գրող Սիրասի կինը և, և ասաց. «Սիրելի՛ս, այստեղ արդեն ոչնչով օգտակար լինել չես կարող: Մենք արեցինք հնարավոր ամեն ինչ, բայց ավա՜ղ: Սա տուբերկուլյոզային մինինգիտ է, բժշկությունն այստեղ անզոր է... Եթե չես ուզում կորցնել նաև Գուրգենին, արագ հյուրանոց վազիր, և կտեսնես՝ ինչ է այնտեղ կատարվում. սենյակը լի է դատարկ շշերով, սեղանին նոր, լիքը շշեր են: Ծուխ է, օդ չկա շնչելու, Գուրգեն Մահարու դեմքին կարմիր հետքեր են: Հենց հիմա գնա և

խիստ եղիր: Գնա: Նա այնտեղ կմեռնի...»:

Ես համբուրեցի աղջկա՝ իմանալով, որ նրան այլևս կենդանի չեմ տեսնի: Նա բացեց իր կապույտ աչուկները: Ինձ թվաց, որ դրանցում հանդիմանանք կա, և ես ինձ մեղավոր զգացի: Ես մահամերձին թողեցի և վազեցի՝ փրկելու օղու մեջ խեղդվողին: Անահիտը ինձ հուզված ուղեկցեց հիվանդանոցից, համբուրեց՝ ասելով. «Գնա՛, և նրա հետ խի՛ստ եղիր: Ամո՛ւր եղիր»:

Շնորհակալությո՛ւն, բարի՛ Անահիտ, որ դու հոգ ես տանում խենթ գրողների մասին: Պարզվեց՝ Սիրասը այցելել է Գուրգենին և, տեսնելով ինչ է կատարվում, կնոջ միջոցով տեղյակ է պահել ինձ, որպեսզի ես շուտ տուն վերադառնամ: Գրող Սիրասն ու Անահիտը հրաշալի մարդիկ էին: Թող սուրբ լինի նրանց հիշատակը...

Ես հյուրանոցում եմ: Սենյակում սարսափելի է: Գուրգենը հոգնածությունից թավալվում է: «Ինչպե՞ս է Նազիկը», - հարցնում է: «Վա՛տ, շա՛տ վատ»: Գուրգենի աչքերը տենդագին փայլում են: Նա ջերմություն ունի: Սենյակը լի է դատարկ շշերով: Սեղանին նույնպես դատարկ շշեր կան: Հացը ծածկված է ծխախոտի մոխրով: Ծուխ է ... պատուհանը փակ է: Ես հիշեցի մեր փոքրիկ խոզուկներին Սիբիրում: Գուրգենի համար նրանց հետ հեշտ էր. «Նրանք չեն խանգարում ինձ երազել, բանաստեղծություն գրել»: Եվ այստեղ իմ մեջ արթնացավ մարտական ոգին: Մեկ անգամ էլ փորձեմ, գուցե այս անգամ էլ փրկեմ նրան մահվանից: Ընկերներին ես խնդրեցի գնալ. «Գուրգենը հիվանդ է, դուք տեսնում եք»:

Ես անմիջապես հրավիրեցի բժիշկ Արշալույս Վարդազարյանին՝ այն ժամանակվա տուբդիսպանսերի գլխավոր բժշկին (տնօրենին): Նա հայտնաբերեց երկու խոռոչներ թոքերում՝ բաց տուբերկուլյոզ: Իսկ Սիբիրից մենք վերացարձել էինք փակ տեսակով: Հայտնաբերվեց նաև տասներկումատնյա աղիքի խոց՝ բաց, արնահոսող: Ահա թե ինչի հասցրեց մեզ ընկերների սերը: Պարզվեց՝ նրանք կերուխում են արել՝ օր ու գիշեր տուն չգնալով: Խմել են, ծխել, զրուցել, վիճել: Եվ ամեն դեպքում ես եկա այն եզրակացության, որ նրանք անկանխատեսելի են, խենթ ու խելառ: Բայց նրանք տաղանդներ են, և նրանց հետ չի կարելի հաշվի չնստել:

Բժիշկները շատ ուշադիր էին հիվանդի հանդեպ և թույլ չտվեցին նրան մեռնել, իսկ թե այդ ամենն ինչ արժեցավ ինձ համար, միայն Աստ-

ծուն է հայտնի...

Բժիշկները արգելել էին Գուրգենին խմել, ծխել և ծանրաբեռնվել, խորհուրդ էին տվել լինել մաքուր օդում հնարավորինս շատ և ամռանը Երևանում չմնալ: Դրա համար էլ ամառային ամիսները մենք անցկացնում էինք Կիսլովոդսկում, Ժելեզնովոդսկում կամ Մերձբալթիկայում:

Եկավ ձմեռը: Առաջին ձմեռը Երևանում: Բայց այն ժամանակ այնքան ցուրտ չէր, ինչպես հիմա, նույնիսկ ձյուն չկար: Մենք դեռևս հյուրանոցում էինք: Նազիկն արդեն չկար, և արևն ինձ համար խավարել էր: Գուրգենը շատ ծանր տարավ այդ կորուստը (այդ առթիվ գրել է տխուր բանաստեղծություն՝ «Դու մահացար»): Ահա այսպես սկսվեց մեր կյանքը ազատության մեջ:

Մի անգամ երեկոյան մեզ մոտ եկավ մի երիտասարդ, որ նման էր աֆրիկացու: Նա և Գուրգենը երկար գրկախառնվում էին, համբուրվում և հայերեն խոսում: Ես նույնիսկ զարմացա, որ այդ աֆրիկացին այդքան լավ գիտի հայերեն: Հետո Գուրգենն ինձ ծանոթացրեց նրա հետ: «Պարույր Սևակ, տաղանդավոր պոետ, այժմ սովորում է Մոսկվայում, Գրականության բարձրագույն դասընթացում: Մոսկվայից հատուկ ժամանել է, որպեսզի շնորհավորի ինձ վերադարձիս կապակցությամբ»: Պարույր Սևակն իսկական ջենտլմեն էր: Նա համբուրեց ձեռքս և ասաց. «Տիկի՛ն Անտոնինա, մենք շատ երախտապարտ ենք Ձեզ, որ Դուք փրկել և Երևան եք բերել մեր թանկագին Գուրգեն Մահարուն և այդպես հոգատարությամբ պահպանում եք նրան: Շնորհակալություն, շատ շնորհակալություն»:

Իմիջիայլոց, դրանք երախտագիտության եզակի խոսքեր էին, որ ես լսեցի և մինչև հիմա չեմ մոռանում, քանի որ այլևս նման բան ինձ բախտ չվիճակվեց լսել:

Գուրգենն արդեն կազդուրվել էր, ու կրկին՝ օրի և ընկերներ, ընկերներ և օրի:

Գարնանը, փառք Աստծո, մենք երկու սենյականոց բնակարան ստացանք Կիևյան փողոցում: Այստեղ հանգիստ էր, բայց միևնույնն է, Գուրգենի ընկերները մեզ չէին մոռանում:

Մենք ապրում էինք երրորդ հարկում, իսկ Ալազանը՝ երկրորդ: Արդեն ծանր հիվանդ Գուրգենը հաճախ էր իջնում այնտեղ և վերադառնում էր շատ հուզված. «Սարսափելի է: Գործունյա մարդ, էներգիայով լի,

ակտիվ, հիմա գամված է անկողնում և նույնիսկ դժվարությամբ է խոսում: Ահա այդպես էր նրան շնորհալություն հայտնում կուսակցությունը, որին նա այնպես հավատարիմ և ազնվորեն ծառայեց: Իսկ փոքրիկ Հասմիկն ու Սարոն այնպես հոգնած են, տխուր», - դառնությամբ ասաց Գուրգենը:

Այստեղ՝ այս բնակարանում ծնվեց մեր որդին, որին Գուրգեն անվանեցինք: Նա շատ գեղեցիկ էր, առողջ և ուրախ...

1960թ.-ին մենք տեղափոխվեցինք Կասյան փողոց, այնտեղ մենք ստացանք երեք սենյականոց բնակարան, սկսեցինք տեղավորվել, և շուտով ամեն ինչ կրկին շարունակվեց ինչպես առաջ:

Երեկոները հավաքվում էին հայ գրականության արծիվները, շատ խմում էին, ծխում և անվերջ խոսում: Սեղանին կոնյակ է, օղի, գինի և այլ խմիչքներ ու ինչ-որ ուտելիքներ: Եկան մեր առաջին հյուրերը՝ Վարդան Աճեմյանն ու իր գինակիրը՝ (ինչպես արտահայտվեց Գուրգենը) Լևոն Հախվերդյանը: Վարդան Նիկիտիչը չնստեց սեղանի շուրջ: Նա չխմեց, նա պետք է սթափ լինի, այսօր նա ներկայացում ունի: Վարդանն անընդհատ ժամացույցին էր նայում, հետո վերջապես ասաց. «Գուրգե՛ն ջան, ես պետք է գնամ թատրոն»: Ասաց և գնաց: Իսկ Լևոնը նստեց սեղանի շուրջ, սկսեցին խմել:

Հանկարծ հայտնվեցին Համո Սահյանն ու Վահագն Դավթյանը: Նրանք միասին եկան: Գալիս էր կապուտաչյա Հրանտ Թամրազյանը՝ կարծեմ գրականագետ, Երվանդ Հովհաննիսյանը, Հրանտ Մաթևոսյանը: Իսկ ամենից երիտասարդը՝ Նորիկ Ադալյանը, հաճախ չէր գալիս և ժամանակին գնում էր:

Հիմա նրանք չրխկացնում են բաժակները, ծխում են անաստված, զրուցում են, վիճում: Աղմուկ է, միայն լսվում է Չարենց, Բակունց, Թոթովենց, Ղարաբաղ: Այստեղ նրանք բարձրացնում են բաժակները, թափահարում՝ ինչ-որ մեկին սպառնալով: Մի խոսքով՝ բոհեմի եռուն շրջանն էր: Ղարաբաղն ինձ ամենից շատ հետաքրքրեց: Մի անգամ, երբ բոլորը գնացին, ես Գուրգենին հարցրի. «Այդ ձեր Ղարաբաղը գրո՞ղ է, ինչ է: Նա է՞լ է Սիբիրում եղել»: Գուրգենը երկար ծիծաղեց և ասաց. «Ի՜նչ գրող: Դա մեր հողն է, որ Ադրբեջանի ձեռքում է: Մենք պետք է ազատենք այդ տարածքը: Նրանք էլ անվանել են Ղարաբաղ»:

Չարենցի անունը նրանք շատ հաճախ էին կրկնում: Ես չդիմացա և

մի անգամ հարցրի Գուրգենին. «Ձեր այդ Չարենցը, երևում է, կարևոր դեմք է, անվերջ նրա մասին եք խոսում: Մի՞թե նա ավելի մեծ է քան, դու»: «Մի՛ հարցրու, միամի՛տ աղջիկ, նա իմ ընկերն է, իմ ուսուցիչը, մեր Հանճարը»: Ահա այսպես մի տաղանդը գնահատում է մյուսին: Իսկ ես բախտ եմ ունեցել տարբեր կարծիքներ լսել: Գուրգենից հետո մեր տուն էին գալիս երիտասարդ գրողներ, բանաստեղծներ. «Ի՞նչ Չարենց, միայն մեկ կամ երկու բանաստեղծություն: Ավելին ոչինչ չես գտնի: Պուշկինը ևս այդքան մեծ չէ, ինչքան նրան ներկայացնում են: Դասականը մեռնում է, նա ոչ մեկին պետք չէ: Իսկ մենք ահա գրողներ և բանաստեղծներ ենք ժամանակակից գրականության: Միայն մենք»:

Նրանց ինքնագնահատականը վրդովեցրեց ինձ, բայց մի՞թե արժե նրանց հետ վիճել:

Մի անգամ գիշերը ես արթնացա. հյուրասենյակում լույսը վառվում էր: Ժամը 3-ն էր: Գնացի տեսնելու, թե ինչ է կատարվում: Գուրգենը շատ հուզված քայլում է սենյակում: Համո Սահյանը պառկած է բազմոցին՝ շատ գունատ, փակ աչքերով: «Ինչ-որ բան արա, միայն թե նա չմեռնի»,- շշնջաց Գուրգենը:

Սեղանի վրա քառս է: Դատարկ շշեր, կեղտոտ սպասք: Բոլորն արդեն գնացել են, միայն Վահագն Դավթյանն է ննջում՝ գլուխը սեղանին դրած:

Ես զանգում եմ Մարիին՝ Համոյի կնոջը, նրանք հարևան մուտքում են ապրում և ասում. «Մարիա՛, սիրելի՛ս, հասկանո՞ւմ ես, Համոն խմած է, վատ է զգում: Նա բազմոցին պառկած է: Արի՛, տա՛ր նրան տուն»:

Այդ ժամանակ Համոն բաց է անում աչքերը, քրքրում գրպանները, փող գտնում և ասում. «Ահա՛, ես դեռ 150 ռուբլի ունեմ: Կգնամ ռեստորան և ամբողջը կխմեմ»: Ես Մարիային ասում եմ. «Համոն պատրաստվում է գնալ ռեստորան, նա 150 ռուբլի ունի: Շուտ արի և նրան տուն տար, ի՞նչ ռեստորան: Նա կհիվանդանա, քեզ համար պատուհաս կդառնա»: «Որտեղ խմել է, թող այնտեղ էլ գիշերի: Ասված ջան, ոնց եմ հոգնել...»,- ասում է բարկացած ձայնը, և լսափողը դնում:

Ես նույնպես հոգնել եմ...

Իսկ 5 րոպեից դռան թակոց է լսվում: Ներս են մտնում Համոյի երկու որդիները, հոգատարությամբ բարձրացնում հորը բազմոցից և տուն տանում: Գուրգենն արթնացնում է Վահագնին: «Վահա՛գն ջան, տուն

գնալու ժամանակն է»: Փառք Աստծու, այսօր վերջ: Բայց պարզվեց, որ չվերջացավ: Գուրգենի մոտ խոցի սրացում է: Նա գոռում է, տնքում. «Մայրի՜կ ջան, ես մեռնում եմ, մայրի՜կ ջան, մեռնում եմ»: Ես «շտապ օգնություն» կանչեցի, արդեն լուսանում է...

Եվ այդպես տարիներ շարունակ: Հետո լույս տեսավ «Այրվող այգեստանները» գիրքը, և սկսվեց գրական փոթորիկ: Գուրգենը հոգնեց այդ ամբոխից և որոշեց հեռանալ Երևանից: Նա հեռացավ շատ վիրավորված, նեղացած, և կյանքը մեր տանը մեռավ: Սկզբնական շրջանում գիշերներն արթնանալիս ես նայում էի՝ չի՞ վառվում արդյոք հյուրասենյակի լույսը:

Ես ուզում էի վազել այնտեղ, որպեսզի կրկին տեսնեի Գուրգեն խանին՝ ընկերների շրջապատում: Բայց ավա՜ղ, ավա՜ղ: Գնում եմ այնտեղ, սենյակում մութ է, դատարկ, շուրջը խավար է, լռություն: Մեղանը մաքուր է, ինչպես երբեք:

Իհարկե, նախկինում ես բարի չեմ եղել: Միշտ կծել եմ նրանց. «Ինչո՞ւ եք այդքան շատ խմում: Դա վնասակար է: Եվ այդքան շատ իզուր ժամանակ եք վատնում: Դուք ստեղծագործողներ չեք»:

Իսկ հիմա երջանիկ կլինեի նրանց բոլորին տեսնել մեր հյուրասենյակում՝ հարբած և լսել նրանց անվերջանալի բանավեճերը հայ գրականության, մշակույթի մասին: Անցյալը չես վերադարձնի: Բոլոր այդ սրաթռիչ արծիվները գնացին Գուրգեն խանի մոտ: Հետաքրքիր է՝ ինչով են նրանք Այնտեղ զբաղվում, այդ անհանգիստ հոգիները: Բոհեմ չե՞ն ստեղծել այնտեղ՝ այն աշխարհում: Ես գիտեմ, որ երկնային ղեկավարներին հեշտ չի լինի կառավարել նրանց:

Փառք Աստծու, դեռ կա մեկն այդ մոհիկաններից՝ Նորայր Աղալյանը: Ինչպես կանխատեսում էր Գուրգենը, մեր Նորիկը շատ բաների է հասել այս կյանքում: Նա հայտնի գրող է, դրամատուրգ, բանասիրական գիտությունների դոկտոր: Ես ուրախ եմ, որ կա նա՝ մեր բուռն կյանքի վկան:

Իր կյանքի վերջին օրերին Գուրգենն ինձ խոստացավ Այնտեղից հայտնել, թե ինչ է կատարվում Այնտեղ: Ցավոք, մինչև հիմա ոչ մի լուր ես չստացա: Մտածում եմ, որ երկնային Տերը շատ խիստ է հետևում իր բնակիչներին, որպեսզի նրանք չկապվեն երկրի հետ, բամբասանքներ չտարածեն և չբացահայտեն Այն աշխարհի գաղտնիքները:

Գուրգե՛ն ջան, դու չես հեռացել մեզանից, դու մնացել ես քո սիրած Հայաստանում, մարդկանց սրտերում: Քո ստեղծագործությունները անմահ են, և քո ընկերներն ապրում են իրենց ստեղծագործություններում և հավերժ կապրեն: Այդպիսի մարդիկ չեն մահանում:

Թող սուրբ լինի ձեր հիշատակը, հայ գրականության արծիվներ:

Մեր թանկագին Աշոտը

Մահարին
Աշոտ Սանամյանի հետ

1952 թվականն էր: Արդեն ուշ աշուն էր: Այն ժամանակ ես ու Գուրգենը ապրում էինք Կրասնոյարսկում, Չերժինսկի շրջանում, շուկայի հրապարակում, «հավի ստոտիկների վրայի» խրճիթում: Գուրգենը նոր էր վերադարձել հիվանդանոցից վեցամսյա բուժումից հետո և դեռևս իրեն թույլ էր զգում:

Նա, բժշկի խորհրդով, դուրս էր եկել զբոսանքի, իսկ ես պտտվում էի վառարանի շուրջը և ճաշ պատրաստում: Հանկարծ դուռը թակեցին: Ներս մտավ բարձրահասակ մի մարդ՝ հսկա մարմնակազմով, նրա գեղեցիկ դեմքն ու սև մազերը խոսում էին բարության և վեհանձնության մասին: Ներկայացավ Աշոտ Սանամյան, նկարիչ: Այն նույն Աշոտը, որի մասին, որպես հավատարիմ ընկերոջ, հաճախ և սիրով էի խոսում Գուրգենի հետ: Պարզվեց, որ Սանամյանը ապրում է գյուղում, 50կմ. մեզանից հեռու: Աշխատում է որպես մեղվապահ և իմանալով, որ Մահարին այստեղ է, անմիջապես եկել է:

Ներս մտավ Գուրգենը:

- Աշոտ ջա՛ն:
- Գուրգեն ջա՛ն:

Ինչ ուրախ հանդիպում էր: Եվ սկսեցին հայերեն խոսել ամեն մեկն իր մասին: Երկուսն էլ երջանիկ էին: Եվ այդպես ամբողջ գիշեր նրանք խոսում էին, ծիծաղում, վիճում: Աշոտն այնքան բարձր էր ծիծաղում, որ ես վախենում էի՝ հանկարծ մեր խրճիթը փուլ չգա: Բայց այն դիմացավ:

Այդ օրվանից Աշոտ Սանամյանը ամեն շաբաթ գալիս էր մեզ մոտ: Գիշերում էր և միայն կիրակի երեկոյան մեկնում իր մեղուների մոտ: Աշոտի հայտնվելն անչափ ուրախություն բերեց Գուրգենին, որովհետև նա դարձավ առաջին ընթերցողն ու քննադատը «Երիտասարդության», որ գրում էր այն ժամանակ Մահարին: Եվ իրականում Սանամյանի մեծագույն վաստակն այն է, որ Գուրգենն ստեղծագործում էր՝ չնայած թույլ առողջությանը: Գուրգենի հավատարիմ ընկերը աջակից էր նրան ոչ միայն բարոյապես, այլև նյութապես: Եվ եթե հանկարծ ինչ-որ պատճառով Աշոտը չէր գալիս, իմ ամուսինը սաստիկ թախծում էր և մռայլ շրջում: Նրա հետ Գուրգենն իրեն Հայաստանից կտրված չէր զգում: Միասին նրանք հիշում էին Երևանը, իրենց ծանոթներին, ընկերներին և թշնամիներին: Իսկ ինչքան տաք-տաք էին նրանք վիճում հայկական մշակույթի և գրականության շուրջ: Ես վախենում էի, որ ուր որ է՝ պատերազմ կպայթի... Բայց պատերազմ չէր լինում, և կրկին լսում էի. «Գուրգեն ջան», «Աշոտ ջան», «Քո առողջության կենացը»: Այո, դրանք հրաշալի, հետաքրքիր օրեր էին:

Սանամյանը պատմում էր իր «ոդիսականը»:

- Համա թե կյանք ունեմ: Ահա, արդեն 20 տարի է՝ թափառում եմ բանտերում ու ճամբարներում: Իսկ հիմա ահա հավերժական աքսորի մեջ եմ: Մեր տառապանքներն արդյոք վերջ կունենա՞ն: Ախր ողջ երիտասարդությունս անցավ անապատի մեջ: Ես ուսանող էի Լենինգրադի գեղարվեստական ակադեմիայի, երբ ինձ ձերբակալեցին: Մեղադրում էին «Հանուն Հայաստանի անկախության» ընդհատակյա կազմակերպությանը մասնակցություն ունենալու համար: Եվ պտտվեց, պտտվեց կարուսելը... Իսկ դու հիշո՞ւմ ես, Գուրգեն, մեր հանդիպումը Բաքվի բանտում: Կարծեմ հենց այնտեղ էլ մենք տոնեցինք քո գրական գործունեության 20-ամյա հոբելյանը:

- Իհարկե հիշում եմ, Աշո՛տ ջան: Մի՞թե կարելի է այդ ամենը մոռանալ: Բայց դու ճաղերի հետևում էլ չէիր ընկճվում: Անընդհատ կատակում էիր, ծիծաղում, անեկդոտներ պատմում, բարոյապես աջակցում

էիր մեզ, - ասում էր Գուրգենը

- Գիտես, բարեկամ, եթե չլիներ իմ լավատեսությունը, ես չէի դիմանա: Ծիծաղում էի, ծաղրածուն երջանիկ է: Այսօր էլ մենք ուրախ ենք այն ամենի համար, ինչ կա: Այդ կերպ մենք գոյատևում ենք ի հեճուկս մեր թշնամիների, - ասում է Աշոտը:

Նրանք բարձրացնում են իրենց բաժակները՝ «մեր ազատության կենացը»:

Աշոտը գալիս էր սահնակով, մի հսկա շան ուղեկցությամբ (անտառում վխտում էին գայլերն ու արջերը): Նա հագնված էր լինում իսկական Ձմեռ պապիի պես: Եվ մեզ նվերներ էր բերում, ինչպես Ձմեռ պապիկը՝ միս, կարագ, ալյուր, մեղր և այլ մթերքներ: Եվ հենց որ պատուհանի տակ լսվում էր սահնակի ձայնը, Գուրգենը դուրս էր թռչում.

- Մեր Աշոտն եկա՞վ: Ուռա՞: Աշոտիկը եկավ: Անտոնինա, ինչ-որ բան պատրաստիր, քեֆ ենք անելու: Եվ էլի մի խնդրանք, մի՛ խանգարիր մեզ խոսել և ամենակարևորը, մի՛ ղեկավարիր ինձ: Ինչքան կուզենամ, այնքան էլ կխմեմ: Քո գործը չի:

- Իսկ եթե էլի՞ հիվանդանաս, Գուրգե՛ն, բժիշկները չէ՞ որ արգելել են, դու խոց ունես:

- Ես չեմ ընդունում ոչ մի բժշկի, ոչ մի խոց, - պատասխանեց Գուրգենը:

Եվ ես գիտեի, որ հիմա ողջ գիշեր կծխեն իրենց մախորկան (Աշոտը շատ էր ծխում), կխոսեն և կվիճեն: Ես զարմանում էի, որ Աշոտը քիչ էր խմում, բայց անընդհատ ծխում էր, բայց Գուրգենը սիրում էր խմել: Եվ ահա այդ տրամադրությամբ նա ինձ ասում էր. «Տոնիչկա, դու ամենադժբախտ կինն ես աշխարհում, քանի որ դու իմ կինն ես: Եվ ամենաերջանիկն ես, քանի որ այնպիսին, ինչպիսին ես եմ, միակն է Կրոնոնոյարսկի երկրամասում...»

Ահա և մտածիր նրա խոսքերի շուրջ՝ երջանի՞կ եմ, թե՞ հակառակը: Բայց ... ես համոզվեցի, որ Գուրգենի խոսքերը «Դու ամենադժբախտ կինն ես, քանի որ իմ կինն ես» ամենաճշմարտացին էին...

Իմ հայերը շատ էին խոսում ապագայի մասին. «Գուրգե՛ն, երբ մենք ազատվենք, քո գրքերն, իհարկե, կտպագրվեն, ինչպես առաջ: Ես կցանկանայի քո «Մանկությունը» և «Պատանեկությունը» թարգմանել ռուսերեն», - ասում էր Աշոտը: «Ես միայն ուրախ կլինեմ, որ իմ դժվա-

ին օրերի ընկերը՝ Աշոտ Սանամյանը, դառնա իմ թարգմանիչը»:

Այդպես էլ եղավ: Կարելի է ասել, որ նրանց բոլոր երազանքներն ու կանխատեսումները կատարվեցին:

Մի անգամ Աշոտն ինչ-որ մարդու բերեց մեզ մոտ: Նա և Գուրգենը գրկախառնվեցին, համբուրվեցին, ինչպես եղբայրներ, խոսեցին ինչ-որ լուրջ բանի մասին, և նա գնաց:

- Դիտե՞ս, Տոնի՛չկա, ով էր այդ մարդը: Նա մեր ճանաչված հայտնի իրավաբան Չուբար Չուբարյանն է: Նա այնքան վառ ու ականավոր անհատ է, ինչպիսիք քիչ են: Նրան մեր ղեկավարությունն է կանչել, ուզում են ուրիշ շրջան ուղարկել: Դրա համար էլ նա շտապում էր: Ահա, թե ինչպիսի մարդիկ կան այստեղ, - ավարտեց Գուրգենը:

Դա մի եզակի անգամ էր, որ ես պատիվ ունեցա տեսնել լեգենդար այդ իրավաբանին: Բայց շատ լավ ու զարմանալի բաներ լսեցի նրա մասին:

Եվ այդպես, Աշոտի հոգատարության շնորհիվ, աշունն ու ձմեռը անցան ուրախ, նույնիսկ արկածալից: Շաբաթօրյա մի գիշեր իմ հայերը երկար նստել և զրուցում էին: Ես քնել էի: Հանկարծ լսեցի Աշոտի վայրի ձայնը, հետո երկուսի քրքիջը: Պարզվեց, որ մեր հյուրը որոշել է վառել երկաթյա վառարանը, փայտը դասավորել է և լուցկին վառել: Հանկարծ վառարանից դուրս է թռել սև կատուն: Աշոտը վախեցել է և ճչացել այնպես վայրի ձայնով, կարծես գայլի է հանդիպել:

«Հավի ոտքերի վրայի» խրճիթում մենք երեքով էինք ապրում՝ Գուրգենը, ես և սև սիբիրյան կատուն: Ահա հենց նա էլ ցրտից մտել էր վառարանը: Դրանից հետո մենք երկար ժամանակ կատակում էինք Աշոտի հետ՝ ասելով. «Ահա թե ինչպիսին է մեր Աշոտը: Գայլերից չի վախենում, բայց սև կատվից վախեցավ...»:

Այդ դեպքի առիթով Գուրգենը գրեց «Ահ» պատմվածքը: Ի նշան երախտագիտության՝ ջերմ ընկերության դժվարին օրերի, Գուրգեն Մահարին Աշոտ Սանամյանին ձոնել է «Երկու կեչի» բանաստեղծությունը: Այն տպագրվել է բանաստեղծությունների գրքում:

Երբ Աշոտը գնաց, Գուրգենը անընդհատ նրա մասին տարբեր դրվագներ էր պատմում. «Մի անգամ բանտարկյալների ողջ բրիգադին, այդ թվում և՝ ինձ ու Աշոտին ուղարկեցին ուրիշ ճամբար: Մոտ 300 կմ մենք ոտքով գնացինք: Բայց գնացինք: Բայց այնքան թույլ էինք հոգնածությունից, որ ոմանք ուշաթափվեցին և չկարողացան շարունակել

ճանապարհը: Ուղեկցող պահակախումբը նմաններին գնդակահարում էր: Մեր Աշոտը, մեր հսկա Աշոտը, այդպիսինին շալակում էր և քարշ տալիս տասնյակ կիլոմետրեր: Այդ կերպ նա շատերին փրկեց: Աշոտ Սանամյանը հազվադեպ անձնավորություն է, բարության, մարդասիրության, ինքնազոհողության խորհրդանիշ և այն ամենալավ հատկանիշները կրողը, ինչ պետք է ունենա մարդը, - ասում էր Գուրգենը: 1954թ.: Ամառ է: Շատ շոգ ամառ: Մենք արդեն Երևանում ենք: Չէ՞ որ Ստալինը վախճանվել է: Իսկ Բերիան ժողովրդի թշնամի դուրս եկավ: Ազատ քամիները փչեցին: Աշոտը մեկ տարուց վերադարձավ: Ընկերությունը շարունակվում էր: Աշոտը հաճախ էր գալիս մեզ մոտ: Ամենալավ օղին, կոնյակն ու գինին նրան էին սպասում: Հայկական մրգերը զարդարում էին սեղանը: Թվում էր՝ լիակատար երջանկություն է: Բայց ես զարմացա, որ իմ հայերը արդեն հայրենի հողում, այնքան բարձր չէին ծիծաղում, ընդհանրապես չէին ծիծաղում: Աշոտի քրքիջը չէր լսվում: Նրանք կամացուկ ինչ-որ բանի մասին էին խոսում և մտահոգ էին: Ինչ-որ բան այն չէր. ես այդ հասկացա:

Մի անգամ ներս մտավ Աշոտն ու սկսեց զեկուցել. «Գիտեք, թե ինչ հետաքրքիր բան է տեղի ունեցել ինձ հետ: Երեկ քայլում եմ փողոցով և տեսնում եմ, որ կայարանից ոչ հեռու՝ իմ դիմացից ինչ-որ մարդ է քայլում կոացած: Նա ծանր պարկ է շալակած քարշ տալիս: Մոտենում եմ: «Աշոտ, դո՞ւ ես»: «Ես եմ, իսկ դո՞ւ ով ես»: Տարօրինակ մարդը իր ծանր բեռը ցած է դնում, ուղղում ուսերը և երեսին հրաշալի ժպիտ է հայտնվում:

- Չուբա՜ր, բարեկամս, դո՞ւ ես, - ուրախացա ես:

- Այո՛, ինձ էլ են ազատել:

- Իսկ ի՞նչ ես քարշ տալիս պարկիդ մեջ:

- Գրքեր, Աշո՛տ ջան: Հազվագյուտ գրքեր, շատ արժեքավոր:

- Դու դրանք Կրասնոյարսկի՞ց ես քարշ տվել, - հարցնում եմ:

- Այո՛, Մոսկվայում էլ շրջել եմ այս պարկով: Այսպիսի գրքերի համար արժեր տառապել:

- Ա՜յ քեզ մարդ, - Գուրգենը հոգոց հանեց, - զարմանալի բնավորություն է: Իսկական մտավորական է, մեծ աշխարհայացքի տեր մարդ: Կարծես թե նա պատրաստ է ևս 20 տարի գնալ այնտեղ, միայն թե գտնի հազվագյուտ գրքեր: Չուբար Չուբարյան՝ հազվագյուտ և վառ անհա-

տականություն: Երկիրը կարող է հպարտանալ նրանով: Ես հաճախ եմ մտածում մի հարցի մասին, կհիշի՞ Հայաստանն իր փառահեղ որդիներին, նրանց տանջալի ճանապարհները», - մռայլ ասաց Գուրգենը:

Մահարիների տունը Կրասնոյարսկում (նկ. Ա Սանամյան)

- Այո՛, ինձ էլ է տանջում այդ հարցը: Մի՞թե ամեն ինչ իզուր էր, - խոստովանում է Աշոտը:

Անցան տարիներ: Վաղուց արդեն չկան Գուրգեն Մահարին և իր հավատարիմ ընկեր Աշոտ Սանամյանը: Նրանք վերադարձան, որպեսզի դարեդար մնան հայրենի հողում: Ես հիշում եմ նրան: Կյանքի վերջին օրերին Պալանգայում Գուրգենը շատ էր կարոտում Աշոտին:

- Աշոտիկին եմ ուզում տեսնել: Ո՞նց եմ ուզում նրա հետ խոսել:

Իսկ այդ ժամանակ մեր Աշոտը պառկած էր մոսկովյան հիվանդանոցում, վիրահատել էին նրա ոտքը: Երակների լայնացում: Դա անչափ ծանր ֆիզիկական աշխատանքի արդյունքն էր...

Այո, աշխարհը փոխվել է, նա փոխել է իր դեմքը: Հայաստանը նույնպես շատ է փոխվել: Հետաքրքիր է՝ ինչ կասեին նրանք այսօրվա Հայաստանի մասին: Բայց, ավաղ, նրանց կարծիքն արդեն երբեք չենք իմանա:

Մեր տանը՝ Գուրգեն Մահարու արխիվում, պահպանվում են Աշոտ Սանամյանի բարեկամական շարժերը «Գուրգեն Մահարին աքսորում» թեմայով: Շատ հետաքրքիր աշխատանք է: Աշոտ Սանամյանը նկարել է նաև մեր սիբիրյան լեգենդար խրճիթը: Այդ նկարն այժմ զարդարում է Գուրգեն Մահարու տուն-թանգարանը:

Թանկագի՛ն, անմոռանալի՛ մեր Աշոտ: Թող քո և քո բարի գործերի հիշատակը վառ մնա հայ ժողովրդի սրտերում և օրինակ ծառայի երիտասարդ սերնդին:

Իսկ դու, Գուրգե՛ն ջան, չես հեռացել մեզանից, ինչպես թվաց շատերին: Իրականում դու մեզ հետ ես: Հպարտ, վստահ դու քայլում ես

աշխարհում, քո հարազատ հայկական հողում, կարծես ոչինչ չի եղել:

Քո հրապույրը, քո հումորը, քո դառը սատիրան, քո տխրությունը, սերը դու թողեցիր արձակում, պոեզիայում, նամակներում, քո ստեղծագործություններում: Նրանցում դու ապրում ես և հավերժ կապրես: Քանի որ նման մարդիկ չեն մահանում:

Ընկեր Մահարին և պարոն Ծառուկյանը



Գուրգեն Մահարին
Ա. Ծառուկյանի հետ (ձախից)

Կարծեմ 8-9 տարի առաջ էր: Գուրգենը վերադարձավ քաղաքից և ուրախությունից հուզված ասաց. «Գիտե՞ս, Անտոնի՛նա, Ծառուկյանն է եկել: Հնարավոր է՝ նա մեզ մոտ գա: Այ, կտեսնես, թե նա ինչքան հմայիչ, հետաքրքիր մարդ է: Նա նաև «Նաիրի» թերթի խմբագիրն է և շատ խելացի հայ մշակութային և գրական գործիչ արտասահմանում:

Եվ նա՝ պարոն Ծառուկյանը, եկավ՝ սև, գանգուր մազերով, կենսուրախ աչքերով, որ նայում էին հեգնանքով և քննադատաբար: Ամեն ինչ հասկացող և գրավիչ հայացք, և դու ակամա քեզ կորցնում ես նրա առաջ, քեզ զգում ես դասը չիմացող աշակերտի նման...

Ես հիշում եմ՝ պարոն Ծառուկյանը նստած էր մեր հյուրասենյակում, երբ ես մտա ներս: Ծանոթացանք: Ես նրան անգլերեն ինչ-որ բան ասացի, նա ինձ ֆրանսերեն պատասխանեց, իսկ Գուրգենն այդ ամենը թարգմանեց հայերեն:

Հետո Գուրգենը հաճախ էր հիշում Անդրանիկ Ծառուկյանին, սիրով ու հարգանքով:

Պարոն Ծառուկյանը հաճախ էր Հայաստան գալիս: Գուրգենը հանդիպում էր նրան և միշտ իրեն լավ էր զգում նրա ընկերակցությամբ: Նրանք մի անգամ չէ, որ լուսանկարվել են: Այդ նկարները այժմ կախված են Գուրգեն Մահարու թանգարանի պատերին:

Կարճ ասած՝ ընկեր Մահարու և պարոն Ծառուկյանի միջև ստեղծվեց լավ, սրտաբաց մտերմություն:

Վերջին անգամ Գուրգենը Ծառուկյանի հետ հանդիպել է 1966թ., Հայաստանի գրողների համագումարի ժամանակ, երբ մութ ուժերն ամեն կերպ ջանում էին սևացնել Գուրգեն Մահարու անունը: Գուրգենի շատ ընկերներ այն ժամանակ երես թեքեցին նրանից և լողացին հոսանքի ուղղությամբ: Բայց պարոն Ծառուկյանն այդ ծանր օրերին միշտ Գուրգենի հետ էր:

Գուրգենն այն ժամանակ ինձ ասում էր. «Բոլորը կարող են ինձ դավաճանել, բոլորը, բայց Ծառուկյանը՝ երբեք»: «Մի՛ հավատա, Գուրգե՛ն, ոչ մեկին մի՛ հավատա...Դու տեսնում ես, թե ինչ է կատարվում շուրջբոլորը: Բոլորը քամու ուղղությամբ են նայում, և քո Ծառուկյանը նույնպես, չնայած որ լավ մարդ է, բայց կգնա բոլորի հետ: Քեզ համար նա Երևանում իր հարաբերությունները չի փչացնի նրանց հետ, ովքեր ավելի օգտակար են իր համար...»: Ես այնքան հիասթափված էի բոլորից, որ արդեն ոչ մեկին չէի հավատում:

«Չհամարձակվես այդպես խոսել, Անտոնի՛նա: Դու չես ճանաչում Անդրանիկին, նա նման չէ մյուսներին: Այդ մարդը սկզբունքային է, լայն աշխարհայացքով, և նա երբեք ինձ չի դավաճանի: Այ կտեսնես, կյանքը ցույց կտա, որ դու ճիշտ չես»: «Ես ուզում եմ, որ ամեն ինչ լինի այնպես, ինչպես դու ես ասում...»

Այո, այսօր կարող եմ ասել, որ ես սխալվել եմ: Բայց ինչքան հաճելի է այդպես սխալվելը: Պարոն Ծառուկյանը կար և մնաց Գուրգեն Մահարու ամենահավատարիմ ընկերը: Նա իր սեփական կարծիքն ուներ, որը դիմացավ բոլոր փոթորիկներին՝ չվախենալով, որ «հանկարծ մի բան կլինի»: Եվ դրա համար պարոն Ծառուկյանը արժանի է մեծ հարգանքի:

«Ծառուկյանը եկավ, Ծառուկյանը եկավ»: Անդրանիկ Ծառուկյանի ժամանումը Երևան ընդունվում էր որպես կարևոր իրադարձություն... Նա՝ պարոն Ծառուկյանը, Երևանի սիրելին էր: Այստեղ նրան հարգում են և պատիվ են համարում նրա հետ հանդիպումը:

Չնայած Գուրգեն Մահարին հեռացավ մեզանից, պարոն Ծառուկյանի համար թանկ է ընկերոջ հիշատակը: Եվ նա ջանում է Գուրգեն Մահարու մասին հիշեցնել նրանց, ովքեր արդեն մոռացել են նրան: Չէ՞ որ շատերը, ովքեր ոչ վաղ անցյալում գովերգում էին Գուրգեն Մահա-

րու տաղանդը, այսօր նախընտրում են նրա մասին լռել: Այսօր Գուրգեն Մահարին չէ՞ որ «նորաձև չէ»: Մեր ժամանակը դեռևս չի եկել:

Վերջերս պարոն Ծառուկյանը կրկին Երևան էր եկել: «Ծառուկյանն է եկել: Գիտե՞ս, Անտոնի՛նա, որ Ծառուկյանը եկել է: Նա քեզ մոտ եղե՞լ է», - հարցնում էին մեր ծանոթները:

- Նա չի եկել, բայց անպայման կայցելի իր ընկերոջ տուն, - հանգստացնում էի ես նրանց:

Եվ նա եկավ, մեր հարգելի պարոն Ծառուկյանը: Գործունյա, բարի, խելացի և... հազվագյուտ ռոմանտիկ: Ահա և ինձ համար հասկանալի դարձավ, թե ինչու են բոլորն այդպես սիրում նրան:

Նա տխրությամբ նայեց Գուրգեն Մահարու թանգարանը, սիրով հիշեց նրա մասին: Տխրությամբ նայեց այն նկարին, որ ինքն ու Գուրգենը նկարվել էին մի քանի տարի առաջ: Այնտեղից մեզ էր նայում մեր սիրելի, թանկագին Գուրգենը... Նայում ու ժպտում էր մեզ... Կարծես թե ոչինչ չէր պատահել: Բայց նրա ժպիտն ավելի էր վշտացնում մեզ: Տպավորությունների գրքում պարոն Ծառուկյանը գրեց.

«Անմոռանալի, ֆիզիկապես գոյություն չունեցող, բայց հոգեպես միշտ ներկա, թանկագի՛ն Գուրգեն: Ես այստեղ եմ՝ քո տանը: Դու կաս և չկաս: Բայց բոլորը տանն են... Հանգիստ ննջի՛ր, վերջին հայկական փարավոն...»:

Ընկեր Մահարին և պարոն Ծառուկյանը լավ բարեկամներ էին: Նրանք հասկանում էին իրար, գնահատում, հարգում: Նրանց հավերժ կապել էր ընդհանուր գործը՝ սերը իրենց ժողովրդի, իրենց հարազատ հայ գրականության հանդեպ:

Պարոն Ծառուկյանը դրական դեր է կատարել ընկեր Մահարու կյանքում, նա ամուր ու վստահելի նեցուկ էր այն ժամանակ, երբ Գուրգենին հենարան էր պետք:

Գուրգենը հավատում էր իր ընկերոջը, սիրում և երախտապարտ էր նրան, իսկ պարոն Ծառուկյանը արդարացրեց նրա վստահությունը:

1970թ. Մոսկվա

Գուրգեն խանը և նրա պալատականները

Մի հեռավոր թագավորությունում, մի հնագույն պետությունում շատ ու շատ տարիներ առաջ, իսկ գուցե ոչ այնքան էլ շատ տարիներ առաջ, կար-չկար Գուրգեն խանը: Ինչպես խանին է վայել, նա արծվաքիթ էր, սև, անհնազանդ գանգուրներով, որոնք թափվում էին նրա լայն ճակատին: Գուրգեն խանը քնարական էր, բարի, դյուրահավատ, նույնիսկ միամիտ էր և շատ ոռմանտիկ՝ բոլորովին նման չէր մյուս խաներին... Նա չէր հոչակվել ասպետի խիզախությամբ և երբեք պատերազմ չէր տանում իր ջոկատներին: Ոչ: Նա արյուն չէր հեղում, այլ սիրում էր խաղաղություն, ինչպես ոչ մի խան: Նա միակն ու վերջինն էր խաներից, խան, ով պատերազմներում փառք չէր փնտրում, չէր տենչում արյուն ու ոսկի: Ոչ: Նրա իմաստությունը իրեն բոլորովին այլ բան էր հուշում:

Գուրգեն խանը մեծարվել էր իր երգերով: Նա գովերգում էր սերը, հայրենիքը, բնությունը: Անհոգ և հրապուրիչ՝ նա քայլում էր երկրի վրա՝ քնարը ձեռքին: Բարդիները, ուռիները խոնարհվում էին նրան, իսկ սոխակները լսում էին նրա երգը... Ո՛չ, այդպիսի խան երբեք չի եղել և չի լինի աշխարհում:

Գուրգեն խանը, ինչպես վայել է իր աստիճանին, ուներ շատ պալատականներ, որոնք սիրո և հավատարմության երդումներ էին տալիս նրան, գովերգում նրա կարողությունները, տաղանդը, խոնարհվում էին նրա առաջ և ամեն կերպ ջանում էին օգտակար լինել նրան: Նրանք այնքան շատ էին սիրում Գուրգենին, որ գիշեր-ցերեկ շրջապատում էին նրան, ապահովում էին նրա անդորրը և... թույլ չէին տալիս նրան քնել: Պատահում էր, որ գիշերով հավաքվում էին բոլորն իրենց խանի շուրջը և սկսում էին փառաբանել նրա իմաստուն քաղաքականությունը և երգչի տաղանդը... Նրանք նրան անվանում էին կարող առաջնորդ, ուսուցիչ, անփոխարինելի ղեկավար, որ ապահովել էր իրենց բոլոր հաղթանակները և այլն:

- Գուրգե՛ն խան, դու միակն ես մեզ համար: Ի՞նչ էինք մենք անելու կամ ինչպես էինք ապրելու առանց քեզ: Երկար տարիների կյանք քեզ: Ապրի՛ր և ղեկավարի՛ր մեզ՝ ի ուրախություն մեզ և մեր ժողովրդի:

Ահա այսպես սիրում և հարգում էին Գուրգեն խանին իր պալատականները: Նմանատիպ սեր պատմության մեջ չէր եղել: Իսկ Գուրգեն

խանի փառքն ու հզորությունը աճում էր ոչ թե օրեցօր, այլ ժամառժամ: Նրա անունը որոտում էր ոչ միայն իր տերության մեջ, այլև նրա սահմաններից շատ հեռու: Ամեն օր մամուլում կարելի էր նրա մասին կարդալ դրվատանքի հոդվածներ: Իմիջիայլոց, այդ հոդվածները գրել էին նրա ենթակաները: Ինչքան մեծանում էր նրա փառքն ու հզորությունը, այնքան շատ էին նրա պալատականները պտույտ գալիս նրա առաջ, նրան մեկ բոլոր անգամ միայնակ չէին թողնում: Նրանք պատիվ էին համարում ծառայել Գուրգեն խանին և գտնվել նրա պալատներում: Գուրգեն խանը երջանիկ էր, որ ուներ այդպիսի ծառաներ: Նա սիրում և հավատում էր նրանց: Նրան թվում էր, թե ոչ մի խան երկրի երեսին երբեք չէր ունեցել այդպիսի հավատարիմ ենթականեր:

Ամեն ինչ, սակայն, վերջ է ունենում, սերն ու նվիրվածությունը՝ նույնպես: Մի անգամ սատանան շփոթվեց և ... սատանայական նախանձը բոցավառեց նրանց սրտերը: Հանկարծ բոլորը ցանկացան նրա տեղում լինել: Նրանք հավաքվեցին և սկսեցին պլան մշակել, թե ինչպես սպանեն Գուրգեն խանին:

- Մենք նույնպես կարող ենք խան լինել և նստել գահին, ինչո՞վ ենք մենք նրանից պակաս: Բավական է, որ նա թագավորի:

Մի անգամ գիշերը, առաջին անգամ թողնելով նրան մենակ, հանգիստ, նրանք վերջապես որոշեցին, թե ինչ ճանապարհով ոչնչացնեն Գուրգեն խանին: Իսկ նա հանգիստ քնած էր՝ ոչինչ չկասկածելով...

Հին վայրի սովորության համաձայն՝ նրանք պետք է թունավորեին նրա կյանքը, ինչպես վամպիրներ, խմեին նրա արյունը, վերջնականապես նրա հոգին հանեին: Նրանք այդպես էլ արեցին...

Գուրգենն այլևս չկա: Նրա մուսաներին ուրացան, որոնց նա պաշտում էր, որոնց երբեք չէր դավաճանել: Իսկ իր քնարը նա իր հետ տարավ: Եվ այլևս չի լսվում նրա ձայնը: Լռեցին նրա երգերը, լացեցին ուռիները, կռացան առվակների վրա, բարդիները շշնջացին՝ երգելով նրա երգերի տխուր մոտիվները: Իսկ Գուրգեն խանի պալատականները մռայլ արեցին իրենց սև գործը, քայլում են մռայլ, գլխահակ, ամաչելով նայել խոժոռ միմյանց աչքերի մեջ: Երևում է՝ հանցագործությունը, որ կատարվեց Գուրգեն խանի դեմ, տանջում և ճնշում էր նրանց: Չկա այլևս մեր սիրելի Գուրգեն խանը, բայց նրա երգերը քամին տարածեց աշխարհով մեկ և ամենուր լսելի է նրանց տխուր մեղեդին: Նա վերածվեց երգի և լեգենդի, որ ապրում են

մարդկանց սրտերում և ընդմիշտ կապրեն...

Իսկ ենթակաները, որ դավաճանեցին նրան, չարությունից, ատելությունից ու նախանձից սևացան, լարվեցին էլ ավելի, քանի առաջ: Նրանց կողմից տանջված Գուրգեն խանի պատկերն ընդմիշտ կհետապնդի նրանց, և նրանք արդեն երբեք հնգստություն չեն ունենա: Քանի որ մահանալիս Գուրգեն խանը նրանց անիծեց դավաճանության համար:

Կանցնեն տարիներ, ժողովուրդը երբեք չի մոռանա Գուրգեն խանին և նրա քնարի աստվածային մեղեդիները: Որքան ժամանակը հեռանա, այնքան ավելի բարձր կհնչեն նրա երգի ձայները, քանի որ երգը հնարավոր չէ սպանել:

1972թ.
Երևան

Մեր թանկագին Վարդան Աճեմյանը

Դեռևս մեր ծանոթության առաջին օրերին Գուրգեն Մահարին ասում էր և նույնիսկ պարծենում, որ ինքն ունի շատ տաղանդավոր և հայտնի բարեկամ, ով երևանյան թատրոնում ռեժիսոր էր աշխատում: Այն ժամանակ ես ուշադրություն չդարձրի դրան, քանի որ հույս չունեի երբևէ տեսնել այդ հայտնի մարդուն:

Գուրգեն Մահարին
Վարդան Աճեմյանի հետ

Բայց մեր բախտը բերեց: 1954թ.-ն էր: Անմոռանալի տարի: Եվ մենք անսպասելիորեն և անկանխատեսելիորեն հայտնվեցինք Երևանում: Ապրում էինք «Ինտուրիստ» հյուրանոցում, ուր գալիս էին հարազատությունն ու բարեկամությունը: Մի շաբաթ երեկո ինչ-որ մեկը հեռախոսով զանգեց: Խոսակցությունից ես հասկացա, որ նրան զանգում է իր համար շատ թանկ մարդ: Դնելով լսափողը՝ Գուրգենն ինձ հայտնեց, որ իր հայտնի ազգական Վարդան Աճեմյանը, որի մասին նա ինձ այդքան

շատ պատմել է, արդեն հյուրախաղերից վերադարձել է և վաղը հրավիրում է մեզ իրենց տուն: Գուրգենը շատ հուզված էր, նա հանդիսավոր ձայնով ասաց.

- Պատրաստի՛ր Նազիկին, դու ինքդ էլ քեզ կարգի բեր: Վաղը մենք գնում ենք Վարդան Աճեմյանի տուն: Նա հենց նոր է վերադարձել հյուրախաղերից և ինչքան հնարավոր է շուտ ուզում է տեսնել ինձ: Այ, կտեսնես, Անտոնինա՛, թե նա ինչ հրաշալի մարդ է: Բարի, սրտանց, պարզ: Բայց իրականում չէ՞ որ նա շատ վառ անհատականություն է, ճիշտ է, կարճահասակ, բայց դա նրան չի խանգարում մեծ լինել: Իսկ նրա կինը՝ Արուսը, հայտնի դերասանուհի է, գեղեցկուհի: Մի խոսքով՝ շուտո՛վ ինքդ կտեսնես:

Վարդան Աճեմյանն ինքը եկավ՝ մեզ իրենց տուն տանելու: Հիշում եմ՝ նա սպիտակ կոստյումով էր, քանի որ հուլիսյան շոգ օրերն էին: Նա ներս մտավ, երկար և սրտագին գրկախառնվեց Գուրգենի հետ:

Նրանք միմյանց էին նայում, ուրախանում, զարմանում: Իսկ իմ հայտնվելը երևանյան հորիզոնում Վարդան Նիկիտիչն ընդունեց անկեղծ ու սրտանց: Ես անմիջապես նրա սրտաբացությունից զգացի մտերմություն, հարազատություն:

Հենց երկրորդ օրվանից ես համոզվեցի, որ Վարդան Նիկիտիչը իսկապես անսովոր մարդ է՝ մեծ տաղանդի և անսովոր էներգիայի տեր: Ինձ թվաց, որ նա միշտ ինչ-որ տեղ է շտապում: Հիմա ես հասկացա, թե ինչու էր Գուրգենը այդքան շատ պատմում նրա մասին: Չէ՞ որ ոչ բոլորին է տրված ունենալ այդպիսի հայտնի բարեկամ:

Տանը մեզ դիմավորեց Վարդանի կինը՝ տիկին Արուսը՝ շատ գեղեցիկ, քնքուշ, հմայիչ կին: Գուրգենը պատմում է ինձ, որ Արուսը հայտնի և սիրելի դերասանուհի է, միշտ էլ նվիրված և հավատարիմ ընկել է եղել Վարդան Նիկիտիչի համար: Տիկին Արուսը շատ հյուրասեր էր և ամեն ինչ անում էր, որ մենք իրենց տանը մեզ լավ զգայինք:

Այդ օրվանից սկսած՝ մենք երեքով՝ Գուրգենը, Նազիկը և ես, հաճախ էինք «կորչում» նրանց տանը և երկար երեկոներ էինք անցկացնում: Գուրգենը անվերջ պատմում էր իր «ոդիսականը», իսկ Վարդան Նիկիտիչը լսում էր՝ հավաքելով իր հոնքերը և հուզվում էր:

Նրանք նաև երկար խոսում էին թատրոնի, գրականության, արվեստի մասին, իսկ երբեմն նաև տաք-տաք վիճում: Այդ տանը ես տեսա

ողջ հայ մտավորականության, մշակույթի բոլոր ոլորտների ականավոր գործիչներին: Միայն լսում էի՝ վաստակավոր արտիստ, տաղանդավոր գլուխ, ականավոր նկարիչ, հայտնի քանդակագործ, հրաշալի բանաստեղծ, վտանգավոր քննադատ... Բայց այստեղ նրանց անունները թվել չարժե, քանի որ հայ ժողովուրդը առանց այդ էլ լավ է ճանաչում նրանց: Երբեմն ես անհարմար էի զգում, որ այդ տանն ամենասովորական հասարակ մահկանացուները ես և Նազիկն էինք:

Այնտեղ հաճախ գալիս էին նաև Վարդան Նիկիտիչի բարեկամները՝ Խանջյանի մայրը, նրա քույրերը, ինչպես նաև Լևոն Աճեմյանի ընտանիքը: Նրանք հրաշալի մարդիկ էին և նույնպես ոչ առանց տաղանդի: Այդ հայտնի մարդկանց մեջ ես հաճախ տեսնում էի մի գեղեցիկ երիտասարդի՝ շատ անհանգիստ, ստղայական տաքարյունությամբ: Նրա սև աչքերը կայծակի պես փայլում էին: Իմ կարծիքով նա անլուրջ էր, և ես նույնիսկ զարմանում էի, թե նա ինչ էր անում այստեղ՝ այս տաղանդավոր ու հայտնի մարդկանց շրջապատում:

Տարօրինակ էր թվում, որ այդքան պատվավոր հյուրերի հետ նա, իմ կարծիքով, կասկածելի երիտասարդը, բարձր խոսում էր, համարձակ ինչ-որ բան էր ասացուցում և նույնիսկ վիճում: Ես ավելի շատ զարմացա, երբ տեսա, որ նրա կարծիքի հետ հաշվի են նստում: Ընդհանրապես այստեղ նա իրեն զգում էր յուրային, և ինձ թվում էր, որ Վարդան Նիկիտիչը նրան շատ էր սիրում: Իսկ իմ կարծիքով այդ գրեթե տղեկը չէր համապատասխանում այդ սոլիդ հասարակությանը: Մի անգամ, երբ օտար ոչ ոք չկար մոտերքում, ես հարցրի, թե ով է նա և ինչ է անում այս պատկառազդու տանը, ուր հավաքվում էր հասարակության ընտրանին՝ տաղանդները, վաստակավորները, ականավորները, Վարդան Նիկիտիչը երկար և սրտանց ծիծաղեց և ասաց.

- Այդ, քո կարծիքով, տղեկը տաղանդավոր երիտասարդ Լևոն Հախվերդյանն է: Նա արվեստաբան է, թատերական քննադատ: Այդ նա է գնահատում մեր աշխատանքը և գրում հրաշալի հոդվածներ, գրախոսականները: Այո՛, Լևոն Հախվերդյանը շատ խստապահանջ քննադատ է, նա հեռու կգնա... Նա այնքան շատ խելք և էներգիա ունի, որ ինքն էլ չգիտի, թե ինչ անի այդ ամենը: Դրա համար էլ նա փոքորկվում է, պարզապես իր տեղը չի գտնում, չէ՞ որ նա դեռ շատ երիտասարդ է և բացի այդ՝ իսկական ասպետ:

Ահա այդ ժամանակ ես ճանաչեցի ևս մեկ տաղանդի: Իսկ ավելի ուշ Լևոն Հախվերդյանը հաճախ էր լինում մեր տանը, և Գուրգենը նույնպես սիրեց նրան և գնահատեց: Լևոնը գրեթե միշտ գալիս էր Վարդան Նիկիտիչի հետ, դրա համար էլ Գուրգենը այսպես էր արտահայտվում. «Ահա, եկավ մարշալն իր զինակրի հետ»:

Ես գիտեի, որ թատրոնի մարշալ Վարդան Աճեմյանը սիրում էր Լևոնին հայրաբար, գնահատում, ինչպես իր կրտսեր գործընկերոջ, արժանավոր գործընկերոջ, քանի որ Վարդան Նիկիտիչը և Գուրգենը տանել չէին կարողանում անտաղանդներին: Գուրգենը ագահաբար շնչում էր հայրենի օդը, և պատմում, պատմում...

Հիշում եմ, որ մի անգամ, օպերայի մոտով անցնելիս, նայելով Թումանյանի և Սպենդիարյանի արձաններին, Վարդան Նիկիտիչը ասաց Գուրգենին.

- Կգա ժամանակ, երբ ես ու Դուք էլ բրոնզ կամ մարմար կդառնանք...

Գուրգենը ծանր հոգոց հանեց և պատասխանեց. «Դեռ լավ է, որ ինչ-որ բանի փոխակերպվենք: Ոչ բոլորին է այդ բախտը տրված: Իսկ այ, վատ չէր լինի, եթե ես ու դու բրոնզաձույլ կանգնած լինեինք այստեղ՝ օպերայի մոտ և հավերժ իրար նայեինք: Ես, կոնկրետ, պատրաստ եմ այսօր ևեթ, եթե դու կանգնած կլինես կողքիս...

- Դե ենթադրենք այսօր գուցե վաղ է, բայց ապագայում հույս ունեմ ինչ-որ տեղ կանգնել քո կողքին, Գուրգեն ջան... - պատասխանեց Վարդան Նիկիտիչը:

Երբ մենք բնակարան ստացանք, Վարդան Նիկիտիչը հաճախ էր գալիս այցելելու իր Գուրգենին: Ճիշտ է՝ նրանք քիչ էին խոսում, քանի որ առանց բառերի էլ լավ էին հասկանում իրար: Նրանք ուրախ էին, որ միասին էին: Էլ զրույցն ո՞ւմ էր հարկավոր: Գուրգենն իր նուրբ արիստոկրատական մատներով թմբկահարում էր սեղանին՝ սուլելով ինչ-որ հայկական երաժշտություն, կարծեմ՝ Կոմիտաս: Իսկ այդ ժամանակ Վարդան Նիկիտիչը իր տեղում հանգիստ չէր նստում, այլ հպարտ, ինչպես և վայել է մարշալին, բարձր պահած գլխով, ձեռքերը մեջքին դրած զբոսնում էր սենյակում, ինչպես բուլվարում, և ինչ-որ բան էր մտածում, պլանավորում: Միայն հազվադեպ նրանք ինչ-որ արտահայտություններ էին փոխանակում: Նրանք երկուսն էլ բավարարված էին, նրանց

տրամադրությունը լավ էր: Վարդան Նիկիտիչը անընդհատ նայում էր ձեռքի ժամացույցին և անհանգիստ էր թվում: Եվ հանկարծ անսպասելի ասաց. «Դե, իմ գնալու ժամանակն է: Ես գնացի թատրոն»:

Այդ ժամանակ արդեն ոչ մի ուժ չէր կարող նրան պահել: Գուրգենը սաստիկ բարկանում էր, որ թատրոնը զրկում է իրեն Վարդանչիկից, (ինչպես հաճախ ինքն էր նրան անվանում) և անընդհատ հայհոյում էր թատրոնին. «Թող այրվի այդ թատրոնը: Տանջում է մարդուն: Նույնիսկ հանգիստ խոսել թույլ չի տալիս...

Եվ այդպես տարիներ շարունակ նա ցանկանում էր նույն բանը և հասավ իր ուզածին...

Մի անգամ, վաղ առավոտյան հեռախոսը զանգեց, ես վերցրի լսափողը, այնտեղ շատ սգալի ձայնով ինձ հայտնեցին, որ այն թատրոնը, որտեղ աշխատում է Վարդան Աճեմյանը, գիշերն այրվել է...

Քանի որ դեռ շատ շուտ էր, Գուրգենը դեռ անկողնում էր: Սլանում եմ ննջարան և ուրախ հաղորդում եմ.

- Գիտե՞ս, Գուրգե՛ն: Վարդան Նիկիտիչի թատրոնը վերջապես այրվեց: Հիմա քո Վարդանը քեզ հետ հանգիստ, առանց շտապելու խոսելու ժամանակ կունենա: (Ես ուզում էի ուրախացնել Գուրգենին, բայց ստացվեց հակառակը):

- Վա՜յ, վա՜յ, վա՜յ: Ի՞նչ ես ասում: Ինչպիսի՜ դժբախտություն: Ափսո՜ս, ափսո՜ս: Խե՜ղճ Վարդան: Հիմա նա ի՞նչ է անելու, որտե՞ղ է աշխատելու: Չէ՞ որ նա մի օր էլ չի ապրի առանց թատրոնի, ես գիտեմ... Իսկ դու, Անտոնի՛նա, ինչո՞ւ ես ուրախանում: Չես ամաչո՞ւմ: Մեծ դժբախտություն է պատահել, իսկ դու, ոնց որ տան թշնամի...

- Բայց ախր դո՛ւ, Գուրգե՛ն, միշտ ես ցանկացել այդ և ասել ես. «Երանի այդ թատրոնը այրվեր»: Ահա, այրվել է: Հիմա ինչո՞ւ ես դժգոհ:

- Շատ բան եմ ասել, իսկ դու հավատացե՞լ ես, - պատասխանեց նա:

Հետո Գուրգենը մտածեց, մտածեց և ասաց.

- Իսկ գուցե լավ է, որ այրվեց: Թատրոնն արդեն իրականում հին էր, անհարմար և բոլորովին համապատասխան չէր Վարդանին: Հիմա գուցե մարդը կհանգստանա, մինչև նորը կառուցեն:

Գուրգենը ճիշտ էր որոշել: Նա սիրում էր պատմել տարբեր դեպքեր իր պատանեկությունից, և ես լսում էի նրան մեծ հետաքրքրությամբ և այդ ամենը վառ ու կենդանի պահպանվել է իմ հիշողության մեջ: Ահա

այս փոքրիկ միջադեպն այնքան շատ բան է ասում ոմն մեկի մասին: Ահա, լսեցեք.

- Երբ ես դեռ շատ պատանի էի, մի անգամ Լենինականում մենք՝ երիտասարդ արծիվներս, ներկայացում դրեցինք: Նաիրին, Արմենը, ես և ուրիշները համարվում էինք (մենք էինք համարում) լավ դերասաններ և ինքնավստահ էինք: Այնտեղ մեզ հետ էր ևս մի խելքով տղա՝ շատ ցածրահասակ և մեզանից փոքր: Մենք՝ մեծերս, կարծում էինք, որ նա մեզ հետ խաղալ չի կարող և կարող է միայն հուշարար լինել: Եվ այդ պաշտոնին մենք նրան դրել էինք՝ բեմի տակ: Եվ ահա, մենք՝ «հայտնի դերասաններ», խաղում ենք և ամեն կերպ կոտրատվում բեմի վրա, գոռում, կռվում, լալիս: Մի խոսքով անում այնպես, ինչպես դրամատուրգն էր հանձնարարել: Իհարկե, մեր խաղով մենք շատ բավարարված էինք, պարզապես հպարտանում էինք, որ մեզ մոտ այդքան լավ է ստացվում: Բայց ավաղ, բոլորը չէին այդ կարծիքին: Հանկարծ այդ փոքրիկ հուշարար տղան դուրս է թռչում բեմի տակից և բղավում մեզ վրա. «Դուք այնպես չեք խոսում, ինչպես պետք է: Մի՞թե իսկական դերասանները այդպես են խաղում: Այ, այսպես է պետք խաղալ»: Իսկ մենք՝ ինքնավստահ դերասաններս, նրան նույնիսկ լսել չենք ցանկանում: Եվ առանց ձևականությունների ես ինքս եմ բռնում նրա գանգուրները (իսկ նրա գանգուրները շքեղ էին, իմից ոչ պակաս, նրան նույնիսկ «Պուշկին» էին անվանում): Այդպես բռնում եմ նրա պուշկինյան գանգուրներից և... բեմի տակ: «Արագ, քո տեղն, անկի՛ր: Քո գործը չէ, թե մենք ինչպես ենք խաղում: Դու ո՞վ ես, որ սովորեցնում ես մեզ: Ինչպես ես համարձակվում: Ընդամենը մի անհաջողակ հուշարար ես»: Նրան մենք իր տեղն ուղարկեցինք և կրկին շարունակեցինք խաղը: Բայց 5 րոպեից մեր հուշարարը կրկին գնդակի պես դուրս թռավ բեմի տակից և ռեժիսորի նման ձեռքերը թափահարելով՝ գոռաց. «Դուք կրկին խալտուրա եք անում: Ես չէ որ ձեզ ցույց տվեցի, թե ինչպես պետք է խաղալ: Իսկ դուք հազիվ եք շարժվում բեմի վրա: Անտաղանդներ: Ձեր տեղը թատրոնը չէ, դուք գնացեք խոզ պահեք: Եթե ես միայն իրավունք ունենայի, ձեզ՝ բոլորիդ, գրողի ծոցը կուղարկեի: Զզվելի է ձեր խաղը նայելը»:

Դա արդեն չափազանց էր: Պարզապես վերին աստիճանի անպատկառություն էր: Այդ պահվածքը մեզ համբերությունից հանեց: Եվ մենք կրկին (այս անգամ արդեն երեքով) բռնեցինք նրա սև գանգուրներից

այնպես, որ նա նույնիսկ գոռաց ցավից, «Գնա՛ այստեղից, թե չէ քեզ ցույց կտանք: Մի՛ խանգարիր մեզ աշխատել: Դու ով ես, որ համարձակվում ես քննադատել մեզ՝ տաղանդներիս: Այդ քո տեղը չէ թատրոնը, անտաղանդ հուշարար: Տեսար, ռեժիսոր է դարձել գլխներիս, նույնիսկ մտածում է մեզ սովորեցնել»:

Մեր հուշարարը լացելու աստիճան վիրավորված էր: Արդեն բեմի տակից նա գոչում է. «Ես ձեզ ցույց կտամ: Հենց մեծանամ...»: Նա դեռ երկար սպառնում էր մեզ: Իսկ դու գիտե՞ս, Անտոնինա, ով էր այդ տղան. հնարավոր է՝ ինքդ էլ արդեն կռահում ես: Չէ՞ որ դա ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Հայաստանի ակադեմիական թատրոնի գլխավոր ռեժիսոր, պրոֆեսոր, մեր սիրելի ու հարգարժան Վարդան Աճեմյանն է, - հպարտությամբ ասաց Գուրգենը: - Այ, տեսնո՞ւմ ես, ինչպես էինք մենք՝ անտաղանդ դերասաններս, սպանում ապագա տաղանդավոր ռեժիսորի նախաձեռնությունը: Բայց ով կարող էր այն ժամանակ իմանալ, որ այդ գանգրահերի գլխում այդքան խելք ու տաղանդ կար: Իսկ այժմ մենք չենք հասնի Վարդանին: Նա շատ առաջ է գնացել, և նրան հասնել չի լինի: Հիմա համարձակ կարելի է ասել, որ մեր Վարդանչիկը թատերական աշխարհի լուսատուն է և մեր տոհմի հպարտությունը: Իսկ կյանքը ապացուցեց, որ իսկապես մենք ոչ թե պետք է թատրոնում խաղանք, այլ խոզերին արածեցնենք: Օրինակ ես, ինչպես քեզ հայտնի է, ավելի օգտակար էի որպես հովիվ, քան՝ արտիստ... Եվ ընդհանրապես, նրանցից ոչ մեկը, ով կար Լենինականում, ոչ մեկը արտիստ չդարձավ, այլ բոլորովին այլ ճանապարհով գնաց...

Ահա Վարդան Աճեմյանի հետ կապված այդպիսի դեպքեր է պատմել ինձ Գուրգենը: Պատահում էր, որ նա, նստած իր սենյակում, մտածում էր և հանկարծ սկսում. «Մի անգամ ես ու Վարդանը...»: Եվ սկսում էր պատմել պատանեկան օրերի զանազան արկածներ: Գուրգենը շատ էր սիրում իր Վարդանչիկին և ջանում էր հաճախ տեսնել նրան:

- Այո՛, - ասում էր Գուրգենը, - մեր Վարդանը հետաքրքրական բնավորություն ունի: Թատրոնը նրա համար ամեն ինչ է: Նա պարզապես այրվում է իր աշխատանքում, այնտեղ էլ հավանաբար կմոխրանա: Նրա համար ամեն բան հաշված է. անընդհատ վազվզոցի մեջ է, միշտ շտապում է, կարծես լարած լինի: Կարծես ատոմային էներգիայով է շարժվում: Անդադրում է: Հնարավոր է՝ մեր Վարդանն այդքան

հեռու է գնացել, քանի որ ժամանակը բարձր է գնահատում: Դու ինքդ գիտես, որ երբ էլ Վարդանը մեզ մոտ է եկել, երբեք հանգիստ, մարդավարի չի նստել:

Իրականում այդպես էլ կար: Չնայած Վարդան Նիկիտիչը շատ էր շտապում գնալ, բայց նրա այցը մեզ միշտ ուրախություն, կենդանություն էր բերում: Նրա հետ շատ հետաքրքիր էր և ուրախ: Բայց, այնուամենայնիվ, մի անգամ Վարդան Նիկիտիչի հետ հանդիպումը սաստիկ վշտացրեց Գուրգենին և ինձ:

Դա կարծեմ 1960թ.-ն էր: Մոսկվայում մենք երեքով՝ երկու Գուրգեններն ու ես, անցնում էինք գյուղատնտեսական ցուցահանդեսը դիտելով, և տեսանք, թե ինչպես է մեզ ընդառաջ գալիս Վարդան Նիկիտիչը՝ շրջապատված երիտասարդ ուսանողուհիներով, երևում է՝ թատերական ինստիտուտից: Մեր սիրելի Վարդանը երջանիկ է, երիտասարդացել է, ուրախ զրուցում է իր ուսանողուհիների հետ, իսկ նրանք, յուրաքանչյուրն իր հերթին, ջանում է ավելի մոտ լինել իր պրոֆեսորին, և բոլորը ծիծաղում են՝ հա-հա-հա, հի-հի-հի: Գուրգենը շատ ուրախացավ՝ տեսնելով իր Վարդանին, իսկ վերջինս, ինչպես ինձ թվաց, ոչ այնքան: Այս անգամ նա իրեն առանց Գուրգենի էլ լավ էր զգում: Մենք ողջունեցինք, մի քիչ խոսեցինք, և Վարդան Նիկիտիչն ասաց. «Ցե, Գուրգե՛ն, ցե՛, կտեսնվենք»: «Ցե՛, ցե՛», - ասաց Գուրգենը չբավարարված տոնով, և մենք գնացինք մեր ճանապարհով՝ խանդոտ հայացքով ճանապարհելով մեր Վարդանին: Իսկ Վարդան Նիկիտիչն արքայավայել, շրջապատված իր հպատակներով, շուտով անհետացավ ամբոխի մեջ: Որոշ ժամանակ դեռևս լսելի էր երիտասարդ աղջիկների՝ ապագա դերասանների ծիծաղը: Գուրգենը տխրեց: Նա բարկացավ, որ ոչ միայն թատրոնն է խլում Վարդանին իրենից, այլև ուսանողուհիները: Նա ծանր հոգոց հանեց և ասաց. «Ահա՛, ապրում է մարդը, ինչ ուզում, այն էլ անում է... Միայն ես եմ հիմարաբար միշտ շրջագայում իմ սեփական ինքնաեռի ու թեյնիկի հետ»:

- Ա՜խ, ա՜խ, - պատասխանեցի ես նրան,- եթե դու կարող ես գլուխ հանել առանց քո ինքնաեռի և թեյնիկի, մենակ մեկնիր և ուզածիդ չափ զվարճացիր: Իսկ ես այդ ընթացքում գոնե կհանգստանամ քո ախ ու վախից: Բացի դրանից, Գուրգե՛ն, դու քեզ մի՛ համեմատիր Վարդանի հետ. առաջինը՝ նա ավելի երիտասարդ է, առողջ և, բացի այդ, նա պրո-

ֆեսոր է, որ եկել է էքսկուրսիայի իր ուսանողուհիների հետ: Ի՞նչ կար այստեղ: Ինչո՞ւ ես բարկանում, ինչի՞ն ես նախանձում: Չէ՞ որ դու պրոֆեսոր չես, - ընդգծեցի ես:

- Մենք լավ գիտենք այդ պրոֆեսորներին: Նաև սրան գիտեմ: Ես երեխա չեմ: Էխ, ապրում է մարդն իր համար, ինչ ուզում, այն էլ անում է: Ճիշտ է, մեր Վարդանը շատ հմայիչ է: Նրա մեջ ինչ-որ սատանայական ուժ կա, որ ձգում է կանանց և աղջիկներին: Դրա համար էլ նա մեծ հաջողություն ունի:

- Դե դու էլ ուրախ եղիր, որ քո Վարդանն իրեն լավ է զգում, որ բոլորը սիրում են նրան, - ասում եմ ես:

- Դու կարծում ես, որ ես իսկապես նախանձո՞ւմ եմ նրան: Ես շատ ուրախ եմ, որ նա երջանիկ է: Նա արժանի է, որ իրեն սիրեն, հարգեն: Ես հենց այնպես ասացի, դու մի՛ նեղացի: Հիմա ես Վարդանին չեմ հասնի: Ա՜խ, ա՜խ: Ո՞ւր է իմ երիտասարդությունը:

Գուրգենը երկար ժամանակ դեռևս տխուր էր ու մտահոգ:

Ահա այսպես Վարդան Նիտիտիչի հետ հանդիպումը փչացրեց մեր տրամադրությունը: Դա մի եզակի անգամ էր, և ինքն, իհարկե, դրանում մեղք չուներ: Եվ ամեն դեպքում ավելի լավ կլիներ, որ մենք այդ օրը չհանդիպեինք Վարդանին ուսանողուհիների շրջապատում: Գուրգենն այդ դեպքում չէր հիշի իր երիտասարդությունը, և չէր լինի դրա հետ կապված ողջ փոթորիկը:

Այնքան շատ լավ, լուսավոր հիշողություններ կան Վարդան Աճեմյանի հետ կապված: Հիշում եմ՝ մենք դեռևս ապրում էինք «Ինտուրիստ» հյուրանոցում, հաճախ էինք իջնում ռեստորան և ժամերով նստում այնտեղ: Մեզ հետ էր Վարդանը, ինչպես նաև հանրաճանաչ Հրաչյա Ներսիսյանը: Նրանց մենք գտանք արդեն սեղանի մոտ, որի շուրջ պտտվում էին ծխի ամպեր: Տաղանդավոր դերասանը անընդհատ ծխում էր և խմում, խմում էր և ծխում: Մենք միացանք նրանց, և սկսվեց իսկական տաղանդավորների, նշանավորների և ականավորների խրախճանք: Այդպիսի խրախճանքներին, իհարկե, միշտ մասնակից էր Լևոն Հախվերդյանը, ով նույնպես չէր ուզում հետ մնալ հայտնի Ներսիսյանից և նրա նման խմում էր ու ծխում, ծխում էր ու խմում: Միայն Վարդան Նիկիտիչը սահմանը չէր անցնում, ամեն ինչ անում էր չափի մեջ և երբեք չէր հարբում: Եվ երբ լուսադեմին ես և Գուրգենը վերադարձանք մեր

համարը, այսպիսի զրույց ունեցանք.

- Այ, տեսնում ես, Գուրգե՛ն, չնայած Վարդան Նիկիտիչը ձեր բոլորից տաղանդավոր է, նա ամեն ինչով նորմալ մարդ է և երբեք չի կորցնում մարդկային արժանիքները: Նրանից օրինակ վերցրու: Ասա ինձ, մի՞թե հնարավոր չէ լինել և՛ տաղանդավոր, և՝ նորմալ, - հարցրի ես Գուրգենին:

- Լինում է, բայց շատ հազվադեպ: Իսկ մեր Վարդանը բացառություն է: Ինչ ճիշտ է, ճիշտ է. նա երբեք սահմանները չի անցնում և շատ զուսպ է: Իսկ ընդհանրապես բոլոր տաղանդները տարօրինակություն ունեն: Նրանք կյանքի օրենքներին չեն ենթարկվում, դրա համար էլ տարօրինակ են՝ թվում: Բայց Վարդանի մասին այդ չես ասի, - ասաց Գուրգենը:

Չգիտեմ՝ ինչ նպատակով էր կազմավորվել «ժյուրին», որի ներկայացուցիչը մեր Վարդան Աճեմյանն էր: Բայց ինձ թվում է, որ այդ չար գաղափարի կազմակերպիչը անդադրում, հարաշարժ Լևոն Հախվերդյանն է: Դրա համար էլ բոլոր անհանգստությունները ու տհաճությունները ես միշտ նրա հետ էի կապում: Քանի որ ես կարծում էի, որ նա փչացնում է մեր նշանավորներին, դուրս բերում ուղուց:

Նրանք իրականում նրա ազդեցության տակ էին գտնվում՝ չնայած Լևոնը նրանց բոլորից շատ երիտասարդ էր: Իմ կարծիքով այդ կասկածելի «ժյուրին» նպատակ ուներ մեր ամուսիններին տանից կտրելու, որպեսզի նրանք, ազատվելով մեր բեռից, կարողանային ժամերով ազատ նստել ռեստորանում և անվերջ խոսել, վիճել թատրոնից, մշակույթից: Լևոն Հախվերդյանը ինձ վրա իսկական անարխիստի տպավորություն էր թողնում: Իհարկե, ես ամեն կերպ բողոքում էի նրա «ժյուրիի» դեմ, բայց, ավաղ, ոչ ոք ինձ չլսեց: Եվ միայն այն ժամանակ իմ խոսքերն ուժ ունեցան, երբ Գուրգենը «ժյուրիի» հավաքից հետո հիվանդացավ և որոշ ժամանակ չէր կարողանում մասնակցել դրանց: Ահա այդ ժամանակ ես ամբողջ վիրավորանքն ու մաղձը դուրս թափեցի իմ բոլոր դժբախտությունների կազմակերպիչի՝ Լևոն Հախվերդյանի հասցեին:

- Դե, ասեք, մի՞թե նա ձեր ընկերն է: Տղեկ է, բայց քթից բռնած ման է տալիս բոլորիդ՝ վաստակավորներիդ, ծանրակշիռ մարդկանց: Չի՞ կարելի պարզապես ազատվել նրանից, և այդ ժամանակ մեզ մոտ ամեն ինչ լավ կլինի: Չէ՞ որ նա խոլերիկ չէ, նրա մեջ այնքան շատ էներգիա կա, դրա համար էլ հորինում է զանազան այդպիսի սատանայական

«ժյուրիներ»: Մի՞թե դուք կարող եք հասնել նրա հետևից: Նա խնայում է իրեն, իսկ դու, Գուրգե՛ն, երբ հիվանդանում ես, քո Լևոնը չի գալիս քեզ խնամելու: Թող սա քեզ համար դաս դառնա...

Իմ հուզմունքին ի պատասխան՝ Գուրգենը խոնարհաբար լռում էր և միայն խրվում անկողնու մեջ, իսկ Վարդան Նիկիտիչը, քայլելով ննջարանում, ծիծաղում էր և ասում ինձ հանգստացնելով: «Ոչի՛նչ, Անտոնինա՛: Սարսափելի ոչինչ չկա: Ամեն ինչ լավ կլինի: Իսկ Լևոնից ինչպե՞ս կարելի է ազատվել: Չէ՞ որ նա իմ աջ ձեռքն է: Ի՞նչ կանեի ես առանց նրա: Նա շատ հետաքրքիր մարդ է, բոց է պարզապես: Կարծես ողջ Հայաստանի աշխուժությունը նրա մեջ է տեղավորված: Իսկ մեզ՝ ստեղծագործողներիս, այդպիսի բոցեղեն մարդկանց հետ շփվելը անհրաժեշտ է: Միայն թե դու մի՛ հուզվիր, Անտոնինա՛, սարսափելի ոչինչ չկա: Հենց որ Գուրգենը լավանա, մենք կրկին կնստենք «ժյուրիում»...

Ահա այսպես էր մխիթարում ինձ Վարդան Նիկիտիչը:

Այնքան տարբեր միջադեպեր կան՝ կապված Վարդան Աճեմյանի հետ: Բայց ես լավ գիտեմ, որ նա շատ էր սիրում իր հիվանդ, տառապյալ եղբորը, և երբ Գուրգենը հիվանդանոցում պառկած էր, Վարդան Նիկիտիչը գրեթե ամեն օր այցելում էր նրան: Նա միակ մարդն էր, որ երբեք չի թողել Գուրգենին դժբախտության մեջ: Իսկ ամռանը, երբ մենք մեկնում էինք Լիտվա, Վարդանը նամակներ էր գրում: Ահա նրա նամակներից մեկը, որը գրված է Գուրգեն Մահարու մահից մեկ տարի առաջ.

Իմ թանկագի՛ն Գուրգեն,

Ստացա քո նամակը, որին վաղուց սպասում էի: Դու այնքան ուշ գրեցիր, որ նույնիսկ գրիչդ որևէ արդարացում չի գտնում: Ուրախ եմ, որ դու կաս, որ կատակում ես, ապրում և որ դու նման ես քեզ: Մենք՝ բոլոր Աճեմյաններս, ողջ-առողջ ենք: Փառք Աստծո: Դրանից ավելի մեզ ոչինչ էլ պետք չէ:

Փափազյանն այլևս չկա: Պատրաստվում ենք նշել նրա 80-ամյա հոբելյանը:

Փափազյանը մեծ դերասան էր, և քանի գնում, առավել մեծ էր դառնում: Մի խոսքով: Ես, ինչպես միշտ, շատ ծանրաբեռնված եմ: Այդ անիծյալ գլխավոր ռեժիսորությունը կարծես ինձ հերիք չէր, հիմա էլ Լենինականի թատրոնը...

Արդեն լույս է տեսել իմ գիրքը՝ «Ժպիտ»՝ ընկերականը շարժեր են: Դու նույնպես այնտեղ կաս: Չգիտեմ, թե որտեղ կանցկացնենք ամառը, բայց ես քեզ միշտ կգրեմ, միայն հայտնիր ինձ քո հասցեն: Ես գիտեմ, որ դու տեղում հանգիստ նստել չես կարողանում և ամբողջ ժամանակ աշխատում ես: Գրի՛ր, թե հիմա ինչի վրա ես աշխատում:

Բոլորը բարևում են:

Սրտանց ողջունի՛ր Անտոնինային:

Քո՝ Վարդան

Երևան, 1968թ. VI 2

Անցան, գնացին տարիները: Ավարտվեցին ոսկե օրերը: Վաղուց արդեն Գուրգենը չկա, «ժյուրին» նույնպես ավերվեց, ցաքուցրիվ եղավ: Վարդան Նիկիտիչն էլ է շատ փոխվել, կարծես ծերացել է: Իսկ նրա «զինակիցը»՝ «այն անհանգիստ երիտասարդը, բոլոր մտահղացումների կազմակերպիչ Լևոն Հախվերդյանը, հիմա դարձել է ծանրակշիռ դոկտոր, արվեստի ակնառու գործիչ: Ես այլևս չեմ համարձակվում նրան «տղեկ» անվանել և վաղուց արդեն չեմ բարկանում նրա վրա իր չարաճճիությունների համար, այլ միայն հարգանքի և խոր երախտագիտության զգացում ունեմ, որ նա դարձավ մեր մեծ Աճեմյանների ուղեկիցը և ամենուր ուղեկցեց նրանց երևանյան զառիվեր ճանապարհներով: Բայց այն ժամանակից շատ բան է փոխվել Երևանում և ամբողջ աշխարհում...

Գուրգեն Մահսրու մահից հետո մեր սիրելի Վարդան Նիկիտիչը չէր մոռանում իր եղբոր տունը, հաճախ էր գալիս:

Երբ Վարդան Նիկիտիչը մտնում էր սենյակ, նա ցավով էր նայում այն բազմոցին, որի վրա միշտ նստում էր նրա սիրելի Գուրգենը՝ անհամբերությամբ նրա գալուն սպասելով:

- Այո՜... Հիմա ես մենակ մնացի, իսկական որբ..., - անկեղծ ցավով ասում էր Վարդան Նիկիտիչը: Նա մեծ սիրով ու տխրությամբ էր զննում բոլոր անկյունները, կարծես թե ստուգելով՝ արդյո՞ք ամեն ինչ տեղում է, հետո ասում էր.

- Անտոնինա, ապրե՛ս, բրավո:

Նա անընդհատ նայում էր պատի նկարներին՝ առանձահատուկ ու-

շաղրությամբ զննելով այն նկարը, որտեղ ինքն ու Գուրգենն էին: Մեծ հետաքրքրությամբ էր նայում Վանին, ավելի էր մոտենում, անընդհատ նայում և չէր կարողանում կտրվել: Ինչպես Գուրգենը, նա էլ, երևում է, շատ էր սիրում հայրենի քաղաքը, կսրոտում: Երբեմն, զննելով գրասեղանը, ծանր հոգոց էր հանում, ասում՝ «Այո՜... »: Եվ հանկարծ անսպասելի նայում էր ժամացույցին, ինչպես այն ժամանակ.

- Դե՛, Անտոնինա՛, ամուր պահիր քեզ: Մի՛ վհատվիր: Ես կայցելեմ քեզ: Հիմա ես պետք է գնամ: Ես գնացի թատրոն:

Ես գիտեի, որ հիմա արդեն ոչ մի ուժ, որոտ, կայծակ և նույնիսկ երկրաշարժ չեն կարող կանգնեցնել նրան: Քանի որ Վարդան Աճեմյանը շտապում է թատրոն...

Տխրությամբ եմ ես ճանապարհում այդ՝ ինձ համար անսահման թանկ հյուրին, իսկ ինքս մտածում եմ. «Գոնե թատրոնը չայրվի: Ափսոս է, նորաշեն է, գեղեցիկ: Եվ որ երկար-երկար ապրի Վարդան Աճեմյանը՝ Աճեմյանական տոհմի փառահեղ հպարտություն»:

1977թ.-ի հունիսի 16-ն է, իրիկնամուտ: Վարդան Նիկիտիչը զանգահարում է ինձ.

- Ալո՛, Անտոնինա՛, ինչպե՞ս ես: Ի՞նչ ես անում: Էլի ինչ-որ բաներ գրո՞ւմ ես: Ինչո՞ւ մեզ մոտ չես գալիս: Ինչո՞ւ չես զանգում: Ինչո՞ւ քեզ թատրոնում չենք տեսնում: Արի՛, անպայման արի՛: Մեզ մոտ հիմա նոր ֆրանսիական պիես է ներկայացվում: Շատ հետաքրքիր է, ռեժիսորն ուրիշ մարդ է, իսկ ես միայն բեմադրության ղեկավարն եմ: Զանգիր ինձ և արի, ես ամեն ինչ կկարգավորեմ: Ինչո՞ւ ես նստել տանը միայնակ, ինչպես ճգնավոր կամ մենակյաց... Շուտով ես ինքս կգամ քեզ մոտ: Ես հիմա շատ զբաղված եմ, սարսափելի հոգնում եմ, բայց մեկ շաբաթից կազատվեմ բոլոր գործերից և կգամ:

- Օ՜, Վարդա՛ն Նիկիտիչ: Ինչ լավ է, որ Դուք զանգահարեցիք, որ ես Ձեր ձայնը լսեցի, - ուրախ բացականչեցի ես լսափողի մեջ, - Դուք գիտե՞ք, Վարդա՛ն Նիկիտիչ, ոչ այնքան շուտ ես Ձեզ հեռուստացույցով տեսա: Դուք շատ լավ տեսք ունեք, շատ առողջ ու էներգիայով էիք պատմում... Ես այնքան ուրախ եմ, այնքա՜ն ուրախ, Վարդա՛ն Նիկիտիչ, որ Դուք Ձեզ լավ եք զգում և աշխատում եք բոլոր ճակատներով... Խոստովանում եմ՝ ես հիանում էի Ձեզանով, Դուք նմանվել եք Գուրգենին, այնպես եք հիշեցնում ինձ նրան... ես այնքան ուրախ եմ, որ Դուք

կաք, և այդքան շատ էներգիա կա Ձեր մեջ...

- Շնորհակալություն, շնորհակալություն: Դո՛ւ, Անտոնինա՛, միշտ կարողանում ես ինչ-որ հաճելի, լավ բան ասել... Ճիշտ է, ես շատ եմ աշխատում, բայց դրանից ի՞նչ... Իսկ ինչպե՞ս է մեր Վանուշը: Վաղուց նրան չեմ տեսել: Նա քեզ մոտ գալի՞ս է, - հարցնում է Վարդանը:

- Այո՛, գալիս է, բայց շատ հազվադեպ...Նա Ձեզ նման, Վարդա՛ն Նիկիտիչ, շատ զբաղված է, աշխատում է, բոլորովին տրվել է գիտությանը...

- Այո՛, իսկապես, մենք քեզ սիրում ենք: Բայց դրանից ի՞նչ: Լավ, մեկ շաբաթից ես անպայման կգամ, և այդ ժամանակ ամեն ինչի մասին կխոսենք: Կզանգեմ և կգամ: Ցտեսություն, Անտոնինա՛, ցտեսություն:

- Ցտեսություն, Վարդա՛ն Նիկիտիչ: Բարևեք տիկին Արուսին: Ես կսպասեմ Ձեզ:

- Ցտեսություն, Անտոնինա՛, ցտեսություն:

Նա հուզված էր, ինչպես երբևէ, նրա ձայնը դողում էր: Դրանք վերջին բառերն էին, որ ես լսեցի մեր թանկագին Վարդան Աճեմյանից:

Ուղիղ մեկ շաբաթ հետո նա իսկապես էլ ազատվեց բոլոր գործերից վերջնականապես, բայց գալ այլևս չէր կարող... Վարդան Նիկիտիչը չեկավ մեր տուն և այլևս երբեք չի գա...

Հունվարի 24-ին Ալիսա Խանջյանը զանգեց ինձ և սգալի ձայնով հաղորդեց, որ մեր թանկագին Վարդանն այլևս չկա... Պատահել էր այն սարսափելին, ինչից մենք բոլորս այդքան վախենում էինք: Անմիջապես խավարեց երևանյան արևը, և սև ամպերը կախվեցին հորիզոնում, քանի որ ևս մի աստղ հանգավ, մեկը՝ ամենապայծառ աստղերից:

Իսկ ինձ համար կյանքից հեռացավ միակ և վերջին հարազատ մարդը Երևանում, բազմակողմանի տաղանդ, վառ անհատականություն, թատերական արվեստի ականավոր վարպետ, և ես հպարտ եմ, որ պատիվ եմ ունեցել ճանաչել նրան: Երբ ես մտա ինձ համար անսահման թանկ այդ տունը, այժմ արդեն այրի տիկին Արուսի մոտ, որպեսզի նրան հայտնեմ իմ խորին ցավակցությունը, նա ինձ պատմեց Վարդան Նիկիտիչի վերջին օրերի տագնապների մասին, նրա ապրումների մասին, և ես ցավով հիշեցի Գուրգենի խոսքերը. «Ախր Վարդանը մի օր անգամ չի կարող ապրել առանց թատրոնի: Ես նրան գիտեմ...»: Ինչքան ցավալի է ու վիրավորական, որ ինչ-որ մեկը չգիտեր այդ մասին և չէր

ուզում հասկանալ... Այժմ միակ մխիթարությունն այն է, որ նրա գործերը չեն մոռացվի, այլ կապրեն արվեստը գնահատողների սրտերում, և Վարդան Աճեմյանի փառավոր անունը հավերժ կմնա թատրոնի պատմության էջերում, ինչին նա նվիրաբերեց իր ողջ կյանքը, քանի որ, ինչպես գրել էր մեր թանկագին Վարդանը իր նամակներից մեկում, բոլոր մեծերը մահից հետո առավել մեծ են դառնում:

Երևան, մարտի 24,
1977թ.

Գուրգեն խանը և Վահագն ջանը

Հենց որ մութն ընկավ, և մենք վառեցինք լույսը, հանկարծ ինչ-որ մեկը ծեծեց դուռը: Գուրգեն խանը շտապեց բացեց դուռը, և ուրախ հանդիպում տեղի ունեցավ: «Օ՜, Վահա՛գն ջան, մտի՛ր, մտի՛ր (իհարկե՛ այս ամենը՝ հայերենով)»: «Գուրգե՜ն խան, ինչպե՞ս ես»:

Գուրգեն Մահարին և Վահագն Դավթյանը

Հիմա մեր սենյակում միայն լսվում է «Գուրգեն խան, Վահագն ջան»:

Այո, նրանք հասկանում էին միմյանց, սիրում, և նրանց ընկերությունը շարունակվում էր: Ես գիտեմ, որ Վահագն Դավթյանը երբեք չի վնասել Գուրգեն Մահարուն: Երբ սկսվեց «Այրվող այգեստանները» գրքի որոտը, Վահագը չմիացավ «հայրենասերներին»: Հաճախ էր նա մեր տուն գալիս և Գուրգենին հայտնում իր ափսոսանքը, սիրտ տալիս նրան. «Քո գիրքը, Գուրգե՛ն խան, անմահ է, այն գրված է մեծ տաղանդով, կարելի է ասել՝ հանճարեղ ստեղծագործություն է, դրա համար էլ այդպիսի փոթորիկ է առաջացրել: Հասկացի՛ր, դա միայն նախանձ է: Փոթորիկը կանցնի, բայց գիրքը կապրի...»:

Այդպիսի իմաստուն խոսքերը ջերմացնում էին վիրավորված, նեղացած գրողի հոգին: Այդ երկու պոետները այնպես էին կապված, որ չէին կարողանում առանց իրար ապրել: Օրինա՛կ, վաղ առավոտյան Գուր-

գեն խանն արդեն զանգում էր. «Վահա՛գն ջան, երեկոյան արի: Վշտից կխմենք»:

Դավթյանը հաճախ գալիս էր Վարդուշի հետ: Նա միակն էր, որ մեր տուն էր գալիս իր տիկնոջ հետ: Ես նրան շատ էի սիրում: Բարի, քնքուշ իմ Վարդուշ: Ինչքա՜ն շատ բան ես արել դու տաղանդավոր գրողի համար: Դու պահպանել ես նրա առողջությունը, որպեսզի նա ապրի, ստեղծագործի: Դու շատ բաներ ներել ես նրան, քանի որ շատ էիր սիրում: Նվիրված, արժանի ուղեկից էիր հայտնի գրողի, գրականության վաստակավոր գործչի համար:

Դավթյանից բացի ուրիշները ևս լինում էին մեր տանը: Նրանք հաճախ էին այցելում Գուրգեն խանին: Նրանք երիտասարդ գրողներ, բանաստեղծներ էին: Գուրգենը նրանց անվանում էր «իմ երեխաները»: Հրաչյա Հովհաննիսյանը, Համո Սահյանը, Հրանտ Մաթևոսյանը, Նորայր Աղալյանը, Ռազմիկ Դավթյանը և, իհարկե, Վահագն Դավթյանը:

Նրանք սիրում էին խմել «վայր ընկնելու աստիճան», տաք-տաք վիճում էին, և ինձ թվում էր՝ ուր որ է կսկսեն կռվել: Բայց դա երբեք չէր լինում: Ինձ՝ այդ հասարակության մեջ նոր մարդուն, գրականություն ստեղծողների վարքը թվում էր տարօրինակ, և ես նրանց անվանում էի «աննորմալներ, խենթեր»:

Մի անգամ Գուրգեն խանի հետ մենք քննարկեցինք այդ հարցը: Ահա, թե ինչ ասաց նա ինձ: «Մենք բոլորի նման չենք: Մենք ապրում ենք հեքիաթային աշխարհում, մենք ազատ ենք, չենք ընդունում ոչ մի օրենք: Մենք բոհեմ ենք: Ճախրում ենք երկնքում և միայն հազվադեպ ենք իջնում մեղքով լի աշխարհը: Իսկ դուք միշտ երկրի վրա եք և չեք հասկանում մեզ՝ ստեղծագործողներիս»:

Մի անգամ ես Գուրգենին հարցրի. «Իսկ ե՞րբ են «քո երեխաները» ստեղծագործում, եթե նրանք ամեն օր հարբած են»: «Մենք հասցնում ենք ամեն ինչ,- և՛ խմել, և՛ ստեղծել: Հիշի՛ր, Անտոնինա՛, իմ խոսքերը. բոլոր նրանք, ովքեր այսօր «աննորմալներ են, խենթ են», բոլոր նրանք իրենցից հետո մեծ հետք կթողնեն երկրի վրա: Այդ նրանք են հայ գրականության արծիվները՝ Հայաստանի հպարտությունը»:

Եվ իսկապես, Գուրգեն խանի «երեխաների» ստեղծածները ապրում են մարդկանց սրտերում և հավերժ կապրեն:

1969թ. հուլիսի 16-ին Գուրգեն Մահարու տանջված սիրտը դադա-

րեց բաբախել: Նա մահացավ Լիտվայում, Պալանգայում: Կառավարական հանձնաժողովը եկավ, որպեսզի աճյունը հայրենիք տեղափոխի: Պատվիրակների մեջ էր նաև Վահագն Դավթյանը: Ողբ, անասելի ողբ: Մեր սիրելի Գուրգենի հուղարկավորությունից որոշ ժամանակ անց Վահագնը զանգեց ինձ.

- Անտոնի՛նա, ես ուզում եմ այցելել Գուրգեն խանին: Գնանք:

Եվ մենք գնացինք գերեզմանատուն: Կանգնեցինք գերեզմանի կողքին, լաց եղանք, վշտացանք: Վահագնը շատ հուզված էր: Իսկ երբ մենք հեռանում էինք գերեզմանից, նա ասաց.

- Հասկանո՞ւմ ես, Անտոնինա՛, հիմա ինձ համար այս աշխարհը դատարկվում է: Այո, Գուրգեն խանը շատ վառ էր, լուսավոր անհատականություն, և նրա հետ շփվելը միշտ հաճելի և հետաքրքիր էր: Ինձ համար նա ուսուցիչ էր, ընկեր, և ինձ համար արտասվելու չափ ցավոտ է, որ ես այլևս երբեք չեմ տեսնի իմ թանկագին Գուրգենին, Գուրգեն խանին: Բայց ժամանակը կգա, ես էլ չեմ լինի, և ինչ-որ մեկն էլ կվշտանա: Ինչ դաժան կյանք է: Եվ ինչպե՞ս ապրել առանց օրու: Դա մեր միակ մխիթարությունն էր: Իսկ դու մեզ միշտ հանդիմանում էիր դրա համար:

- Այլևս չեմ անի: Հանուն ում ես պայքարում էի, այլևս չկա: Իսկ դուք խմեք ինչքան սրտերդ ուզում է: Ինձ համար միևնույնն է:

- Եվ կխմենք մինչև վերջ:

Ահա այդպիսի եզրահանգում արեց Վահագն Դավթյանը: Անցան տարիներ, և Գուրգեն խանի սիրելի «երեխաները» այլևս մեր տուն չեն գալիս: Մոռացել են մեր խանին: Իսկ ինչո՞ւ գան, չէ՞ որ այստեղ այլևս անելիք չկա: Սեղանը դատարկ է, շշեր չկան՝ ո՛չ օղու, ո՛չ կոնյակի: Իսկ ամենասարսափելին այն է, որ Գուրգեն խանը արդեն այստեղ չէ, իսկ նա միշտ սիրով էր սպասում նրանց: «Ե՛վ տխուր է, և՛ ձանձրալի, և՛ ոչ ոքի չես կարող ձեռքդ մեկնել»:

Մի անգամ, երբ ես մեռնում էի տխրությունից, անսպասելի հեռախոսը զանգեց:

Ալո՛, Անտոնինա՛, Վահագն Դավթյանն է: Ինձ դեռ հիշո՞ւմ ես:

- Ի՞նչ հարց է, իհարկե հիշում եմ:

- Հիմա ես Գրողների միության նախագահն եմ: Արի՛, անպայման արի: Ես ուզում եմ օգնել քեզ: Իսկ ինչպե՞ս ես դու ապրում: Արի, կխոսենք ամեն ինչ մասին...

Ես գնացի: Վահագն Դավթյանը, պարզվեց, չի մոռացել Գուրգեն Մահարու ընտանիքի մասին: Եվ այդ հանդիպումից հետո ես միշտ զգում էի եղբայրական հոգատարության ձեռքը մեր թանկագին Վահագնի:

1993թ.-ին Գրողների միության նախագահ Վահագն Դավթյանը կազմակերպեց Գուրգեն Մահարու հոբելյանը՝ 90-ամյակը: Մենք նստած էինք կողք կողքի միջոցառման ընթացքում: Քննադատներն ու գրողները շատ խոսեցին «Այրվող այգեստանները» գրքի մասին: Գովաբանեցին մինչև երկինք: Վահագնը ինձ ասաց. «Հիշո՞ւմ ես, Անտոնինա՛, չէ՞ որ ես ասում էի Գուրգենին այն ժամանակ, որ փոթորիկը կանցնի, իսկ գիրքը կապրի: Եվ այնքան ցավալի է, որ հեղինակը չի լսում այս ամբողջ գովեստը»:

Եվ ես հիշեցի իմաստուն բառերը. «Այս աշխարհում ամեն ինչ ուշ է գալիս. մեռածների փառքը, աղքատների փողը, սերն էլ հաճախ ուշացած է լինում»:

- Ինչքան ճիշտ է ասված, - շշնջաց Վահագնը և խոր մտածմունքի մեջ ընկավ:

Բանաստեղծությունները կարդում էր երիտասարդ, գեղեցիկ մի աղջիկ՝ Սիլվա Յուզբաշյանը: Շատ գովեստի խոսքեր լսեցի նրա մասին, տեսել էի հեռուստացույցով, բայց այդքան մոտիկից՝ ոչ մի անգամ:

Ես ու Վահագնը հիանում էինք նրա գեղեցիկ ոտքերով, հրաշալի կազմվածքով և լսում էինք բանաստեղծությունները, որ նա կարդում էր բարձր արվեստով: Դրանք Գուրգեն Մահարու գրածներն էին և Վահագն Դավթյանի՝ Գուրգեն Մահարուն ընծայած բանաստեղծությունները:

Ոչ երկրային փերին հետաքրքրել էր ինձ, և ես սկսեցի հարցեր տալ.

- Նա ամուսնացա՞ծ է: Ո՞վ է նրա ամուսինը: Երեխաներ ունի՞:

Վահագնը միայն ժպտաց.

- Սիլվան տաղանդավոր, խելացի և գեղեցիկ է, նրա ինչի՞ն է պետք այդ խաչը:

Ես նույնպես համաձայնեցի, որ այդ խաչը Սիլվա Յուզբաշյանին պետք չէ:

Հոբելյանական երեկոն հրաշալի անցավ: Իսկ որոշ ժամանակ անց Վահագն Դավթյանը ևս հեռացավ մեզանից այնտեղ, որտեղ նրա սիրելի ընկեր Գուրգեն խանն էր:

Հետաքրքիր է՝ ինչպես են նրանք այնտեղ: Օդի խմո՞ւմ են, վիճո՞ւմ

են, թերթեր կարդո՞ւմ են արդյոք:

Իր կյանքի վերջին օրերին անընդհատ վշտացած էր. «Ինչպե՞ս ես կապրեմ այն աշխարհում առանց թերթերի»: Նա ուզում էր իմանալ ամեն ինչ, ինչ որ կատարվում էր մեր երկրում:

Բայց, ամեն դեպքում, լավ կլիներ, որ նրանք չկարդային մեր թերթերը, քանի որ կրկին կմեռնեին՝ իմանալով, թե ինչ է կատարվում մեր անմիտ, դաժան աշխարհում:

Թող սուրբ լինի ձեր հիշատակը, բանկագիններս: Տունը դատարկ է առանց ձեզ:

Երևան
25.11.2003

Գուրգեն Մահարին և Հրանտ Մաթևոսյանը

Մի անգամ Գուրգենը հայտնեց, որ մեզ մոտ է գալու մի երիտասարդ արձակագիր: «Վաղուց է ուզում ինձ հետ ծանոթանալ, բայց չի համարձակվում: Եվ ահա այսօր երեկոյան կգա: Օղի, կոնյակ գնիր և ամեն ինչ, ինչ անհրաժեշտ է հյուրասիրության համար»:

Զանգ: Ես ինքս բաց արեցի դուռը: Ներս մտավ մի երիտասարդ՝ բարձրահասակ, շատ նիհար, շատ գունատ: Մտածեցի՝ հավանաբար նոր է բանտից դուրս եկել: Ներկայացավ.

- Հրանտ Մաթևոսյան, Գուրգեն խանը տա՞նն է, - հարցրեց ամոթխած:

Իսկ Գուրգեն խանն արդեն այստեղ էր.

- Օ՜, Հրա՛նտ ջան, նե՛ր արի, նե՛ր արի: Ես ապասում եմ քեզ:

Դա մեր առաջին ծանոթությունն էր:

Նրանք սկսեցին զրուցել: Հրանտը քիչ էր խոսում: Պարզվեց, որ կենտկոմը այս երիտասարդ գրողին ճանապարհ չի տալիս.

- Երեկ նրանք ինձ կանչել և վերադաստիարակում էին. «Դու այնպես չես գրում, ինչպես պետք է, դու այն չես գրում, ինչ պետք է: Այդպես չի լինի: Դու ճիշտ ճանապարհի վրա չես: Պետք է վերակառուցվել, երիտասարդ...»: Ահա այս ոգով էլ ընթացավ մեր խոսակցությունը, - բողոքում էր Հրանտը:

- Շատ լավ է, Հրա՛նտ ջան: Նշանակում է՝ դու ինչ-որ բան արժես, եթե նրանք քեզ ուշադրություն են դարձրել: Դա քո օգտին է: Մի՛ վշտացիր: Հույս ունեմ, որ դու քո մուսան ոչ մեկին չես տա: Ես գիտեմ, որ դու իսկական ստեղծագործող ես: Քո գիրքը ես կարդացել եմ: Հրաշալի է գրված: Ապրե՛ս: Իրականում դու մեծ տաղանդ ես և ապագայում կդառնաս հայ գրականության առաջին արձակագիրը:

Ահա այսպես Գուրգեն Մահարին գնահատեց Հրանտ Մաթևոսյանին:

- Գուրգե՛ն խան, բայց ինչպես ապրել, ստեղծագործել այս մթնոլորտում: Նույնիսկ վախենում եմ գրել: Դրա համար էլ սկսել եմ խմել, և օրին ինձ համար առաջին մխիթարությունն է, - խոստովանեց Հրանտը:

Գուրգենը մի բաժակ լցրեց, նա խմեց, հետո էլի ու էլի: Հրանը զվարթացավ և սկսեց ավելի շատ խոսել: Իսկ ես անընդհատ հետևում եմ, որ հանկարծ Գուրգենը չխմի, քանի որ եթե սկսեց, կանգ չի առնի: Օրու պատճառով կարելի է հիվանդանոց ընկնել:

- Մի՛ զարմացիր, Անտոնի՛նա, լավ կյանքից չենք մենք խմում: Մենք այնքան բարդ պրոբլեմներ ունենք, որ առանց կես լիտրի գլուխ չես հանի, - բացատրում էր ինձ Գուրգենը:

- Հասկանո՞ւմ ես, Հրա՛նտ ջան, մեր տուն են գալիս նաև ուրիշները, բայց նրանք քեզ նման չեն: Նրանք կարողացել են գտնել իրենց տեղը և ոչ թե իմ ու քո նման: Բոլոր ճանապարհները նրանց համար բաց են: Նրանց պարգևատրում են, նրանց գրքերը տպագրում են, նրանք հաճախ են լինում արտասահմանում: Մի խոսքով, նրանք լավ են ապրում: Բայց դու այդ ճանապարհով չես գնա, դրա համար էլ դու քանկ ես ինձ համար: Քեզ թույլ չեն տա արտասահման գնալ: Ինձ էլ թույլ չտվին: Ոչ այնքան շուտ «Վանի հասարակություն» կազմակերպությունն Ամերիկայից ինձ հրավեր էր ուղարկել: Բայց այն ինձ նույնիսկ ցույց չտվեցին, որովհետև ես նրանց մարդը չեմ: Դու էլ այդպիսի իրավազուրկ ես:

Հրանտի հետ Գուրգենը խոսում էր անկեղծ, ուրախ էր, որ այդպիսի մարդ էր գտնվել: Չէ՞ որ ոչ բոլորին սիրտդ կբացես:

Դրանից հետո Մաթևոսյանն ավելի հաճախ էր մեր տուն գալիս, բայց Գուրգենը նրա համար միշտ ցերեկն էր ժամ նշանակում, քանի որ նրա «երեխաները» երեկոյան էին գալիս: Հրանտը նրանց հետ էլ էր մնում: Եվ բոլորով միասին նրանք կերուխում էին անում: Երբեմն նա գալիս էր իր ընկերոջ՝ Ռազմիկ Դավոյանի հետ: Մեկը՝ արձակագիր, մյուսը՝

բանաստեղծ: «Բայց նրանք շատ տարբեր են», - նկատեց Գուրգենը:

Հրանտին նա սիրում էր ինչպես ազնիվ մարդու, տաղանդավոր գրողի, որը չի դավաճանի քեզ: Եվ հաճախ պատմում էր ինձ նրա մասին.

- Գիտե՞ս, Անտոնի՛նա, մեր Հրանտ Մաթևոսյանը բնության զավակ է: Նա մեր հողի պտուղն է: Ինչքան հյութեղ ու գեղեցիկ է նա նկարագրում իր հայրենի գյուղը և նրա բնությունը, մարդկանց կենցաղը, հողը, քանի որ այդ հողի յուրաքանչյուր փոշեհատիկում նա կա: Այո՛, մեր գյուղը տվել է նշանավոր մարդկանց, գրողների, բանաստեղծների, մեծ մտածողների և հերոսների: Ով կապված է բնության հետ, նրան նա տալիս է իմաստություն, և այդպիսի մարդը զգում է հողի շունչը..., - այսպես էր ասում Գուրգեն խանը:

Պարույր Սևակը նույնպես գալիս էր մեր տուն: Այդ ժամանակ նա և Գուրգենը շատ մտերիմ ընկերներ էին: Սևակը նրան գյուղից մեղր էր բերում: Մեր բոհեմի հետ Սևակը ոչ մի ընդհանուր բան չուներ: Գալիս էր կեսօրին, երբ դեռ ոչ ոք չկար, երբեք չէր նստում, անընդհատ քայլում էր սեղանի շուրջ, խոսում, խոսում, շատ ծխում, խմում, իսկ հետո վայրի հազում:

- Գուրգե՛ն խան, ես գնացի, գյուղ եմ գնում: Հաջորդ անգամ էլի մեղր կբերեմ, դա քեզ պետք է:

Ասում և գնում էր:

- Պարույրը նույնպես բնության զավակն է: Դրա համար էլ այդքան խելացի և տաղանդավոր է: Հրաշալի բանաստեղծ է, - ասաց Գուրգենը:

Մեր տանը հաճախ էր լինում Նորայր Աղալյանը՝ նրանցից ամենաերիտասարդը, համեստ և անկեղծ, ինչպես Գուրգենն էր ասում. «Կյանքը դեռ չի հասցրել փչացնել նրան, ունակ տղա է, նա հեռուն կգնա, քանի որ շատ աշխատասեր է»:

Նորայրը երկար չէր մնում մեր տանը, նա լավ դաստիարակված էր և խմում էր չափավոր:

Իսկ մյուսները գրեթե ամբողջ գիշեր խմում էին: Արդեն խմած՝ երգում էին:

Խմենք ընկերներ, քանի դեռ ապրում ենք,
Հայրենի չէ այն աշխարհում կտրան, թե չեն տա,
Թե տան, և՛ այստեղ, և՛ այնտեղ կիմենք:

Աստված իմ, երեխաներ են: Մեծ երեխաներ: Ապտակե՞լ բոլորին: Բայց, ավաղ, նրանց հետ չի կարելի հաշվի չնստել: Չէ՞ որ նրանք հայ գրականության արծիվներն են: Երգչախումբը ղեկավարում էր Համո Սահյանը, մյուսները երգում էին: Գուրգենը նույնպես:

Այս մթնոլորտում տարիներ անցան:

Գուրգենը, երևում է, հոգնեց մեզանից և որոշեց այն աշխարհ գնալ: Դա պատահեց 1969թ. Լիտվայում՝ Պալանգայում: Թաղված է հայրենիքում, հուղարկավորության օրը Հրանտ Մաթևոսյանը մոտեցավ ինձ, իր ցավակցությունը հայտնեց և ասաց. «Մենք արեցինք ամեն ինչ, ինչ որ կարող էինք, որպեսզի կազմակերպենք արժանավայել հուղարկավորություն: Բայց, ավաղ: Դու հասկանո՞ւմ ես, Գուրգեն խանը, պարզվեց, «մեղք» է գործել՝ գրելով հանճարեղ «Այրվող այգեստանները» գիրքը և դրա համար հատուցում է՝ շնորհազուրկ արվելով: Շատ գրողներ չեն եկել, քանի որ թաղում են «հայ ժողովրդի թշնամուն»: Իսկ ինձ համար Գուրգեն Մահարին մեծ գրող է, Հայաստանի հավատարիմ զավակը, իմ լավագույն ընկերը, հոգևոր հայրը, ծանր օրերին նա շատ է սատարել ինձ: Ես դա երբեք չեմ մոռանա: Պարզապես չգիտեմ, թե ես ոնց եմ ապրելու առանց Գուրգեն խանի:

Հետո Հրանտը լռեց, ապա ավելացրեց.

- Գուրգեն Մահարին մեր գրականության դասականներից է, իսկ նրան թաղում են ինչպես արհմիության շարքայինի: Ինչքան անարդար է կյանքը:

Իրականում Գուրգեն Մահարու և Հրանտ Մաթևոսյանի ճակատագրերը նման են: Կենդանության ժամանակ նրանցից ոչ մեկը արժանի գնահատական չստացավ, միշտ հայհոյեցին, մեղադրեցին զանազան մեղքերի մեջ, ստորացրին, իսկ հիմա նրանք ընդունված են: Չափազանց ուշ է...

Տարիներ անցան: Փոխվեցին Գուրգեն Մահարու նախագահները, փոխվեցին կենտկոմի քարտուղարները և վերջապես փլվեց չարի կայսրությունը, որ միլիոնավոր մարդկանց սպանեց: Ի զարմանս ինձ՝ Հրանտ Մաթևոսյանը դարձավ ԳՄ նախագահ: Եվ մեծ ուշադրություն դարձրեց իր ընկերոջ՝ Գուրգեն Մահարու ընտանիքին:

Բայց այդ պաշտոնը նրան երջանկություն չբերեց: Իսկական արշավ սկսվեց տաղանդավոր գրողի դեմ: Մամուլում տպագրվեցին վիրա-

վորական հոդվածներ:

Ես և Մարգարիտան (քարտուղարուհին) սարսափով էինք հետևում այդ ծաղրանքներին՝ մտածելով, որ այդ ազնիվ, համեստ, զգայուն, մանկական ժպիտը դեմքին, մեծատառով մարդու հոգին երկար չի դիմանա:

Հրանտ Մաթևոսյանը իրականում բարի էր: Նա հոգ էր տանում ոչ միայն Մահարու ընտանիքին, այլև բոլոր գրողների: Եթե ինչ-ոչ մեկը նեղվում էր, որ անգամ հացի փող չունի, նա իր սեփական գրպանից օգնում էր նրանց:

1998թ.-ին քարտուղարը կազմակերպեց Գուրգեն Մահարու 95-ամյա հոբելյանը: Ես կարդացի իմ հուշերը. «Անավարտ վեպ, վերջին ծխախոտ»: Հրանտը շատ գովեց: Հետո նա կարդաց «Իմ ողիսականի» հայարեն թարգմանությունը, որը տպագրվել է Բեյրութում: Ահա նրա կարծիքը. «Դու հրաշալի ես գրում և գրում ես այն մասին, ինչը շատ կարևոր է: Այն, ինչ դու կասես Գուրգեն Մահարու մասին, ուրիշ ոչ մեկը չի կարող ասել: Դրա համար էլ քո հիշողությունները արժեքավոր են: Դու վաղուց ես նվաճել մեր շարքերում լինելու իրավունքը, բայց, ավաղ, ամեն ինչ ուշ է լինում»:

Այսպես ես դարձա Գրողների միության անդամ: Հրանտ Մաթևոսյանի կարծիքն ինձ համար ցանկացած պարգևներից թանկ է: Եթե մեծ գրողն այդպես գնահատեց իմ ստեղծագործությունը, ինձ ավելին ոչինչ պետք չէ:

Մենք զգում էինք, որ այդ պաշտոնը, որին բոլորը նախանձում են, քայքայում է նրա առողջությունը: Ես հաճախ էի զանգում Մարգարիտային՝ իմանալու, թե ինչպես է մեր քարտուղարը: Նա շատ տխուր ձայնով պատասխանում էր. «Քարտուղարը հիվանդ է, նա չի եկել աշխատանքի» կամ «Նա կրկին հիվանդացել է: Ահավոր տրամադրություն ունի»:

Ես և Մարգարիտան շատ էինք անհանգստանում, որ այդպես անհոգի են վերաբերվում նման ականավոր գրողի հետ:

Անցավ 4 տարի: Հիմա արդեն ուրիշ քարտուղար է՝ Լևոն Անանյանը: Գործունյա մարդ, հրաշալի ղեկավար, կազմակերպիչ, գրական նուրբ ճաշակի տեր, շատ աշխատասեր: Թվում է՝ պակաս ոչ մի բան չկա: Բայց ես շատ եմ վախենում, որ նրան էլ բաժին հասնի...

Իսկ Մաթևոսյանի համար այդ 4 տարին անհետևանք չանցավ: Նա ծանր հիվանդացավ: Եվ մի անգամ իմ սիրելի Մարգարիտան ինձ հայտ-

նեց սարսափելի նորությունը. «Հրանտ Մաթևոսյանն այլևս չկա...»

Աստված իմ: Այս ամենն ինձ հիշեցնում է Գուրգենի ճակատագիրը:

Գուրգեն Մահարու գիրքը, որ նրան այդքան ցավ, վիրավորանք, վիշտ պարգևեց, և կարճացրեց նրա կյանքը, այժմ ընդունված է, թարգմանված տարբեր լեզուներով: Բայց ես չեմ մոռանա, թե ինչքան դժբախտ, ստորացած, վիրավորված կյանքից հեռացավ հայ գրականության դասականը:

Ինձ վիճակվել էր լինել նրա ֆիզիկական և հոգեկան տանջանքների վկան:

Հրանտ Մաթևոսյանի գրքերը նույնպես թարգմանվում են, հրատարակվում են արտերկրում, նա ճանաչված գրող է: Քննադատները գովեստի խոսքեր չեն խնայում: Բայց, ավաղ, այսօր նրան ոչինչ պետք չէ: Չափազանց ուշ է: Արդեն ուրիշները կօգտվեն նրա աշխատանքի արդյունքներից, բայց ոչ ինքը՝ հեղինակը:

Ավաղ, այս աշխարհում ամեն ինչ ուշացած է գալիս. «Փառքը՝ մահացածներին, փողը՝ զառամյալներին, իսկ սերը հաճախ է ուշացած լինում...»:

Երևան

1.03.2005թ

Խոլերա

Երբ այդ հրեշը սողոսկեց հզոր ԽՍՀՄ-ի սահմանը, ես ու Գուրգենչիկը (արդեն երկուսով) Պալանգայում էինք: Կարանտին էր: Գալու և գնալու իրավունք չկար: Տեր Աստված, ինչ սարսափելի վիճակ էր: Ռադիոն 4 լեզվով տեղեկատվություն էր հաղորդում, թե որ քաղաքներում է արդեն խոլերա հայտնաբերվել:

Անդրանիկա Մահարին որդու՝ Գուրգենչիկի հետ

Բժիշկները տեղաբաշխվել էին՝ երդում տալով, որ ոչ մի դեպքում չեն լքի իրենց վստահված գործը, հակառակ դեպքում՝ գնդակահարություն:

Ես լավ բժիշկ ընկերուհի ունեի, ով աշխատում էր հիվանդանոցում: Ամեն օր նա գալիս էր մեզ մոտ և

սարսափելի լուրեր հայտնում: Ռետինե երկարաճիտ կոշիկները, ռետինե խալաթները, ձեռնոցները, գլխարկներն ու դիմակները արդեն պատրաստ էին, սանիտարական ջոկատը ամբակազմ տղամարդկանցից արդեն կազմավորված էր: Համաճարակի դեպքում ոչ ոք իրավունք չուներ լքել հիվանդանոցը, հակառակ դեպքում՝ գնդակահարություն:

Իմ ընկերուհի Բիրուտեն՝ շատ բարի, լավ մասնագետ, մանկաբույժ, նույնիսկ լաց եղավ:

- Անտոնի՛նա, ես գիտեմ, որ կմեռնեմ այս ճակատում: Ես անհաջողակ եմ: Իսկ դու և Գուգենչիկը դիմացեք: Չէ՞ որ դու լսել ես տեղեկությունը: Եթե ինչ-որ բան լինի, դուրս չգալ փողոց, փակել դռներն ու պատուհանները: Իսկ եթե նպարեղենի մեքենան մոտենա և ազդանշան տա, բաց արա պատուհանիկը, ձեզ կնետեն ինչ-որ փաթեթ, և կրկին փակիր: Այդպես նստեք և սպասեք, թե երբ այս ամենը կվերջանա: Ահա ձեզ հանգստացնող միջոցներ, եթե կհուզվեք: Ընդունեք օրը 3 անգամ:

Հեռանալիս նա համբուրեց Գուրգենչիկին, շոյեց.

- Փոքրի՛կս, դու մի՛ հուզվիր և մայրիկին մի՛ անհանգստացրու:

- Չե՛մ անի, - խոստացավ իմ տղան:

Հետո ամուր գրկեց ինձ և ցավով ասաց.

- Ով գիտե՝ հնարավոր է վաղն արդեն խոյերան մեզ մոտ կհայտնվի, և ես չեմ կարողանա ձեզ մոտ գալ:

Այդպես մենք ամեն օր բաժանվում էինք, հետո կրկին հանդիպում, գրկախառնվում, համբուրվում, և այդպես ամբողջ ամառը...

Առավոտները ես և Գուրգենչիկը գնում էինք ծով: Այնտեղ մենք հանդիպում էինք մեր ծանոթներին Մոսկվայից, Լենինգրադից և ուրիշ քաղաքներից: Կրկին գրկախառնվում էինք, համբուրվում, ինչպես հարազատներ: Փառք Աստծո, այսօր կրկին հանդիպեցինք, իսկ վաղը՝ ով գիտի... Իսկ երբ մենք տեսնում էինք հայկական ծագումով մարդու, նետվում էինք դեպի նա.

- Ինչպե՞ս է Երևանում: Ամեն ինչ նորմա՞լ է:

- Դեռևս ամեն ինչ իր տեղում է, նոր եմ խոսել մերոնց հետո: Բայց այնտեղ էլ են պատրաստվում: Մթնոլորտը ծանր է:

- Ես ուրախ եմ, որ այնտեղ ամեն ինչ լավ է: Բայց ձեր աչքերում տագնապ է և այնքան սեր ու ուշադրություն մերձավորների հանդեպ: Առաջ այդպես չէր: Իսկական «ժողովուրդների բարեկամություն»: Այդ-

պես ընդհանուր վիշտն ու վախը միավորել են մեզ բոլորիս:

Ես ափսոսացի, որ Գուրգեն խանը մեզ հետ չէր: Նա կտեսներ այն, ինչի մասին առաջ նույնիսկ չէր երազել անգամ. սեր միմյանց նկատմամբ:

Մի անգամ ես տեսա մի երիտասարդ հայի: Նա շատ տխուր տեսք ուներ: Ես և Գուրգենչիկը նետվեցինք դեպի նա.

- Ինչպե՞ս է Երևանում: Ամեն ինչ նորմա՞լ է:

- Ոչ ամեն ինչ...

- Տե՛ր Աստված, մի՞թե խոլերան արդեն հասել է այնտեղ:

- Խոլերան՝ դեռ ոչ, բայց տեղի է ունեցել սարսափելի դեպք: Գազանանոցից ինչ-որ կենդանի է փախել: Նա գազազած է, ագրեսիվ, մեքենաներ է շրջել, մարդկանց վրա է հարձակվել, և ստիպված են եղել գնդակահարել նրան: Դա մեծ կորուստ է գազանանոցի համար:

- Ամեն դեպքում ավելի լավ է, քան խոլերան:

- Այո՛, բայց մեր բոլոր դժբախտությունների հետ միայն դա էր պակասում: Միշտ հայերիս բախտը չի բերում... Իսկ հիմա ես վախենում եմ, որ այստեղից չեմ փրկվի: Իմ ընտանիքը շատ է անհանգստանում: Նրանք այդ լուրն ինձ հեռախոսով են հայտնել: Նրանք տեսել էին, թե ինչպես է այդ երկյուղալի գազազած կենդանին փախչում:

- Ինչ վերաբերում է Ձեզ, ես կարծում եմ, պետք չէ անհանգստանալ: Ես կարծում եմ՝ ամեն ինչ կանցնի: Կարանտինը կհանեն, և Դուք տուն կմեկնեք: Ես զգում եմ, որ ամեն ինչ լավ կլինի:

- Տա՛ Աստված, տա՛ Աստված, - ասաց հայը, և գրկեց ինձ, - շնորհակալություն, քույրի՛կ, մխիթարելու համար:

- Մա՛մ, նայի՛ր, կարծես թե այնտեղով հայուհի է անցնում աղջկա հետ, որը լաց է լինում, - ասաց Գուրգենչիկը:

Մենք մոտեցանք: Գեղեցիկ երիտասարդ կինը շատ հուզված էր:

- Փոքրի՛կ, ինչո՞ւ ես լալիս, - հարցնում եմ:

- Տուն եմ ուզում գնալ, տուն, իսկ մայրիկը չի գալիս, - կամակորություն էր անում աղջիկը:

- Տեսնո՞ւմ ես, բալի՛կ ջան, ինքնաթիռները հիմա չեն թռչում: Հենց որ սկսեն թռչել, դու էլ կթռչես: Իսկ առայժմ լողա ծովում, - ասում եմ ես:

- Ինձ ծով պետք չի: Ես տուն եմ ուզում: Ինչո՞ւ մենք եկանք այստեղ:

- Կյանքում այնպես չէ, ինչպես դու ես ուզում: Հայրիկն էր ասում: Եվ

կյանքը տրվում է մեկ անգամ, - լուրջ-լուրջ ասաց Գուրգենչիկը:

Ես գրկեցի երիտասարդ մայրիկին, նա ինձ ջերմորեն համբուրեց, և մ ենք բաժանվեցինք:

Ռադիոյով զգուշացրին, որ եթե խոլերան հասնի Պալանգա, և եթե ինչ-որ մեկը ձեզանից հիվանդանա, անմիջապես հայտնեք այսինչ համարով, որպեսզի հիվանդին մեկուսացնեն: Հասկանալի՞ է: Այո՛, ամեն ինչ հասկանալի է:

Իսկ փողոցներում և ծովափին հավաքվում էին մարդիկ, խոսում, քննարկում մեր դրությունը, իսկ հետո գրկախառնվում, համբուրվում և տխրությամբ բաժանվում, քանի որ՝ ով գիտե՝ ինչ կլինի վաղը: Միայն լսելի է. մենք մի նավում ենք:

Այդպես ամբողջ ամառ: Դա իսկական «ժողովուրդների բարեկամություն» էր: Այդպիսի բան ես նույնիսկ երազում չեմ տեսել: Նույնիսկ ՊԱԿ-ի գործակալները՝ սատանայի ծառաները, մոռանում էին իրենց պարտականությունների մասին՝ հետևել, զեկուցել, ձերբակալել, վախեցած էին, իրենց կորցրած և մեզ նայում էին արդեն մարդու նման: Ոչ այնպես, ինչպես առաջ: Նրանք սարսափելի վախենում էին մահից: Չէ՞ որ նրանք շատ-շատ լավ էին ապրել:

Կարճ ասած՝ ամբողջ ամառն անցավ տագնապի, ինչ-որ սարսափելի բանի սպասման մեջ, բայց ահա եկավ աշունը:

Մի անգամ առավոտյան ռադիոն հայտնեց, որ կարանտինը հանված է, և հանգստացողները կարող են մեկնել տուն: Ինքնաթիռները մեկնում էին Մերձբալթիկայով դեպի Կովկաս, Երևան, Թբիլիսի, Բաքու, Մոսկվա, Լենինգրադ և շատ ուրիշ քաղաքներ:

- Մայրի՛կ, փա՛ռք Աստծո: Ես այնպես էի վախենում, շատ էի վախենում, բայց քեզ չէի ասում, չէի ուզում տրամադրությունդ գցել: Նշանակում է՝ ես կրկին դպրոց կգնամ: Գնանք տոմսերի հետևից: Ուռա՜:

Ես ու Գուրգենչիկը գրկախառնվեցինք, համբուրվեցինք՝ ուրախանալով, որ խոլերան շրջանցել է մեզ:

Գնացինք տոմսերի հետևից: Իսկ այնտեղ.

- Ո՞ւր ես խցկվում առանց հերթի:

- Մի՛ հրիր, հեռո՛ւ գնա ինձանից:

- Մի՛ հպվիր, ես քո կինը չեմ:

- Մի տես է՝ «անձեռնմխելի» է:

Ահա այդպիսի բաներ էին տեղի ունենում այնտեղ, որ ընդհանրապես նման չէին «ժողովուրդների բարեկամության»: Մեծ դժվարությամբ տոմսեր գնեցինք և մենք արդեն Երևանում ենք:

Բայց ահա, թե ինչ ես նկատեցի. վախն անցավ, սերը մերձավորի հանդեպ, բարեկամությունն ու խաղաղությունն չքացան: Չգիտես՝ ուր կորան:

Ես ստիպած էի լսել, թե ինչպես էին երկու կանայք վերլուծում. «Ա-հա, տեսնո՞ւմ ես, նույնիսկ խոլերան նրա վրա չազդեց»:

Փա՛ռք Աստծո, խոլերան ձեզ էլ չկպավ: Եվ կրկին մենք միասին շարունակում ենք մեր խաղաղ գոյությունը:

Ամեն տեսակի մատնիչներ և ՊԱԿ-ի գործակալներ կրկին շարունակեցին իրենց գործը: Կյանքն առաջվա նման եռում էր: Իսկ երբ ձմեռը եկավ, խոլերան վերջնականապես վերացավ, մենք այդ հրեշի մասին մոռացանք:

Կարծում եմ՝ վատ չէր լինի տարին գոնե մեկ անգամ վախեցնելով մեզ հիշեցնել, որ մենք անմահ չենք, և բոլորն են գնալու երկնային արքայություն:

... Դա հրաշալի, անմոռանալի ամառ էր: Իմ ամբողջ կյանքում ես այդքան չեմ գրկախառնվել և համբուրվել, ինչքան այն ժամանակ, երբ խոլերան ուզում էր որսալ մեզ: Ինչ սիրով էինք մենք հանդիպում, ուրախ, որ այդ օրը դեռ ապրում ենք, իսկ վաղը՝ ո՞վ գիտե... Ռուսները, հրեաները, ազերիները, կովկասցիները, խափշիկները, մենք բոլորս քույր ու եղբայր էինք: Կարճ ասած՝ մենք բոլորս դարձանք իսկական մարդիկ: Բայց ոչ երկար ժամանակով: Վտանգը նվազեց, և հրաժեշտ տվեցինք «ժողովուրդների բարեկամությանը»: Ահա՛ թե ինչ էր գրել մեր լիտվացի դասական Բերնարդաս Բրազջենիսը.

Քե՛զ, Մա՛րդ, ես նախկինում փնտրել եմ,
Պատմության էջերը թերթել,
Բայց քեզ երբեք չեմ գտել...
Ես տեսել եմ հուշարձաններ, բռնակալների համար կանգնեցված,
Բուրգեր՝ հսկա, արյունռուշտ փարավոնների՝
Շինված արյամբ ու քրտինքով ստրուկների:
Դաժան պատերազմողների գոլքն եմ լսել ես,

Բայց Մարդուն այդպես էլ չեմ գտել...
Այսօր փնտրում եմ քեզ, Մա՛րդ,
Հարցնում ամենուր՝ որտե՞ղ ես, մարդ:
Հազարավոր վերստեր ուրքով կգայի,
Որպեսզի, Մա՛րդ, քեզ իտնարիվեի
Քեզ, Մա՛րդ, ապազայում էլ եմ ես փնտրելու,
Հուսալով՝ գտնել վերջապես:
Մի՛ եղիր, Մա՛րդ, ստրուկը ոսկու ու նյութի,
Մոռացի՛ր նսիսանչ, ատելություն և մի՛ եղիր ամիոգի,
Վե՛ր կաց, Մա՛րդ, և չե՛ռք մեկնիր Մարդուն:

Երևան, 2007թ

Ակնոց

- Որտե՞ղ է իմ աշխատանքային ակնոցը, - ես հաճախ էի լսում այդ հարցը մեր տանը:- Այդ դո՞ւ ես այն ինչ-որ տեղ խցկել: Ես քեզ, Անտոնի՛նա, մի՛ անգամ չեմ ասել, որ իմ գրասեղանին ձեռք մի՛ տուր: Այստեղ հավաքելու ոչինչ չկա, այստեղ մաքուր է: Իսկ հիմա, ահա, չքացել է իմ ակնոցը, փնտրի՛ր այն...

Գուրգեն Մահարին որդու՝
Գուրգենի հետ

Ես թողնում եմ իմ գործերը և նետվում եմ ակնոցը փնտրելու: Շտտումուռ տվեցի գրասեղանի բոլոր թղթերը, ակնոցը չկա... Հետո գնացի ննջարան, տակնուվրա արեցի այնտեղ անկողինը, ակնոցը չկա: Գնացի մյուս սենյակ, քցցեցի բոլոր անկյունները, ակնոցը չկա: Որտե՞ղ կարող է լինել: Որտե՞ղ կարող է լինել:

- Կանգնել եմ և ժամանակ եմ կորցնում, - բարկանում է Գուրգենը և հանդիմանանքով ինձ է նայում՝ կորածի համար մեղավորիս:

- Իսկապես, Գուրգե՛ն, որտե՞ղ կարող է լինել: Չէ՞ որ ես բոլոր տեղերում փնտրեցի: Հիմա թույլ տուր քեզ զննել: Արի նայենք քո տնային

շալվարի գրպաններում:

Գուրգենը բարձրացրեց ձեռքերը, որպեսզի ես փնտրեմ գրպաններում, և...

- Իմ Գուրգե՛նն իր քնքուշ ձեռքում պահում է իր աշխատանքային ակնոցը» - ուրախացա ես: Գուրգենը զարմացած է, որ իր թանկագին ակնոցն իր ձեռքում է:

- Ախր այդ ինչպե՞ս: Նշանակում է՝ ես այն ձեռքումս էի պահում, և մի ամբողջ ժամ դու փնտրում էիր... ու չէիր նկատել, որ այն իմ ձեռքո՞ւմ է:

- Հաջորդ անգամ հաշվի կառնեմ, - ասում եմ ես և անցնում իմ գործին:

Ահա և հաջորդ անգամ: Ես խոհանոցում ճաշ եմ պատրաստում և լսում եմ Գուրգենի բարկացած ձայնը.

- Անտոնի՛նա, արի՛ այստեղ: Արի տեսնենք՝ ինչ եմ արել ակնոցս:

Ես անմիջապես ասում եմ.

- Ապա, ցույց տուր ձեռքերդ:

Նա ցույց է տալիս իր բարալիկ, արիստոկրատ ձեռքերը: Ակնոցը չկա:

- Հիմա նայիր շալվարիդ գրպաններում, ամենուր, ուշադիր, - ասում եմ ես:

Ակնոցը չկա:

- Այս ի՞նչ է, կարծես գետնի տակ է անցել, - բարկանում է Գուրգենը:

- Գուրգե՛ն, արի ես քո թղթերի մեջ փնտրեմ, միգուցե այնտե՞ղ է...

- Ձեռք մի՛ տուր, ձեռք մի՛ տուր իմ թղթերին: Այնտեղ չէ, ես ինքս եմ նայել, - գոռում է Գուրգենը և ինձ մոտ չի թողնում իր թղթերին:

Բայց իմ կանխազգացումն ասում է, որ ակնոցը պետք է այնտեղ լինի:

Այդ ժամանակ ես, այնպես, որ չվիրավորեմ հեղինակային զգացումները, շատ զգույշ շրջում մի թերթ՝ ամբողջը գրված մանր, գեղեցիկ ձեռագրով: Եվ ի զարմանս և երջանկություն ինձ՝ նրա կախարդական ակնոցը հանգստի դրված է այդ թերթի տակ:

Գուրգենն ուրախ-ուրախ ճանկեց այն. «Ահա իմ ակնոցը, ուրեմն ես ինքս եմ այնտեղ դրել: Իսկ դո՛ւ, Անտոնի՛նա, հետախույզի ունակություն ունես: Ի՞նչ կանեի ես առանց քեզ:

- Այո՛, Գուրգե՛ն, որպեսզի լինել քեզ նման գրողի կինը, պետք է շատ ունակություններ ունենալ: Ահա հիմա քեզ մոտ ամեն ինչ կարգին է, ես կարող եմ գնալ և իմ գործերով զբաղվել:

- Լավ, կարող ես գնալ, բայց թե միայն գրիչի մեջ թանաք հավաքիր, թե չէ ես իմ ձեռքերը կներկեմ...

Ես թանաք եմ լցնում մեծ գրողի ինքնահոսի մեջ, թողնում եմ նրա բանաստեղծական էությունը և գնում եմ իմ առօրյա, պրոզայիկ խոհանոցը, առանց որի ոչ մի գրող չէր կարող ստեղծագործել: Հաջորդ անգամ արդեն ես կիմանամ, թե որտեղ պետք է փնտրել նրա ակնոցը: Այո՛, իմ Գուրգենը այդպես էր: Եվ հենց իր անօգնականությամբ, իր յուրահատկությամբ նա թանկ էր ինձ համար: Ուրիշին ես չէի պատկերացնում և չէի ուզում ունենալ, քանի որ նա գտնվում էր ուրիշ, հեքիաթային աշխարհում, գրական ստեղծագործությունների աշխարհում: Մանրուքները նրան էին հետաքրքրում: Նա չափազանց մեծ էր, որպեսզի կորչեր այդ մանրուքների մեջ: Իսկ մենք՝ հասարակ մահկանացուներս, պարտավոր ենք հասկանալ, գնահատել, օգնել նրանց: Դա մեր պարտքն է:

Այդ կախարդական, լեգենդար ակնոցն այժմ դրված է գրասեղանին և ինձ պատմում է իր տիրոջ մասին տխուր հեքիաթ:

Այսօր ես ցավով եմ հիշում այդ ամենը...

Երևան, 1970թ.

Ինքնահոս

Անտոնի՛նա, ես քեզ հազար անգամ ասել եմ՝ ձեռք մի՛ տուր իմ ինքնահոսին, թե չէ կփչացնես: Չհամարձակվես վերցնել... Չէ՞ որ ես քեզ տվել եմ նորը, լավը, դրանով էլ գրիր, իսկ իմը հանգիստ թող: Բառացիորեն դու առանց իմ իրերի չես կարողանում. մեկ իմ բաճկոնն ես հագնում, մեկ իմ գրիչով ես գրում...

Ահա այսպիսի դասախոսություններ ես հաճախ էի լսում Գուրգենից: Եվ, իսկապես, նա ճիշտ էր ասում: Ես շատ էի սիրում գրել նրա ինքնահոսով, հագնել նրա բաճկոնը, նույնիսկ կոստյումները: Ահա այդպիսի «վայրենի» էի ես... Ես հիմա փոխվել եմ: Իմ Գուրգենի ինքնահոսով ես չեմ համարձակվում նույնիսկ մի թիվ գրել... Այն՝ նրա ինքնահոսը, դրված է նրա գրասեղանին, ամենապատվավոր տեղում, և ես խնամքով պահպանում եմ այն... Գալիս են գրողներ, դիտում են թանգարանը, նրա գրասեղանը... Ես աչքս չեմ հեռացնում նրա ինքնահոսից. անընդ-

հատ վախենում եմ, որ այն հանկարծ կչքանա սեղանի վրայից: Եվ մինչ այցելուները մեզ մոտ են, ես շատ անհանգիստ եմ, վախենում եմ Գուրգենի ինքնահոսի համար: Երբ այցելուները գնում են, ես կրկին ու կրկին ստուգում եմ, թե այն տեղո՞ւմ է արդյոք, չի գնացել նրանց հետ և ուրախ զարմանքով տեսնում եմ, որ նրա լեգենդար գրիչը դեռևս այստեղ է: Ես շատ կասկածամիտ և անդուր եմ դարձել... Այո, ես շատ եմ փոխվել:

Հիմա ես գրում եմ այն ինքնաՀոսով, որ Գուրգենն է ինձ նվիրել և չեմ համարձակվում ձեռք տալ նրա սուրբ գրչին, բայց, որպես գաղտնիք ասեմ, որ Գուրգենի բաճկոնը ես այսօր էլ հագնում եմ:

Իհարկե, մենք չենք ուզում հիշել այն մասին, թե այդ գրիչը քանի անգամ է անհետացել... և ես, կրկին այն գտել եմ մեր գրողի ձեռքում, մեկ նրա ստեղծագործությունների մեջ, մերթ գիշերազգեստի գրպանում կամ պարզապես գորգին ընկած... Եվ շատ-շատ անգամ եմ ես սև թանաք լցրել նրա մեջ: Շատ անգամ եմ ես խիստ նախազգուշացում ստացել դրա համար...

Տխրությամբ նայում եմ նրան, և ինձ համար արցունքոտվելու աստիճան ցավալի է, որ այլևս երբեք նրա մեջ սև թանաք չեմ լցնի, և նիհար, նուրբ ձեռքը չի գրի բանաստեղծություններ, արձակ, ամանորյա պիեսներ, պատմվածքներ և քննադատական հոդվածներ՝ գրական անտառանդ խաբեբաներին ոչնչացնող: Հավերժ համրացավ այլևս...

Երևան, 1970թ.

Ռադիո

- Վա՜յ, վա՜յ, վա՜յ:

Գուրգենը սլանում է այդ կախարդական անկյունը, միացնում է ռադիոն, նստում մոտիկ-մոտիկ՝ ամբողջովին լարվելով... Կարծես թե, ահա-ահա, ինքը կմտնի ռադիոյի մեջ... Նստած է անշարժ և լսում է, լսում...

Իսկ ռադիոն անվերջ շատախոսում է, և ամեն ինչ՝ սուտ...

- Գուրգե՛ն, ի՞նչ հետաքրքիր բան ես այնտեղ գտել: Դա պարզապես ժամանակի կորուստ է... Սինեմայնն է՝ ճշմարտությունը չես իմանա...

- Ամեն ինչ կիմանաս, Անտոնի՛նա, պետք է կսրողանաս տողատակերը կարդալ...

Մի անգամ գիշերը Գուրգենն ինձ հայտնեց, որ այդ հանցագործները սպանել են նախագահ Քենեդիին... Ահա զոհվել է մեր հրաշալի օդաչու Կոմարովը...

Երեկ Մոսկվա է ժամանել ինչ-որ պատվիրակություն...

Ահա կրկին Չինաստանն է փոթորկվում... Չեխոսլովակիային վերաբերող իրադարձություններ և այլն և այլն... Բոլոր այդ իրադարձություններից Գուրգեն խանը ապրումներ էր ունենում... Այդ ամենը ալեկոծում էր նրա երիտասարդ հոգին:

- Գուրգե՛ն, դու վերջապես թույլ կտա՞ս ինձ երաժշտություն, երգ լսել: Ես նույնպես ռադիո լսելու իրավունք ունեմ..., - բողոքում եմ ես:

- Ո՛չ մի երաժշտություն, ո՛չ մի երաժշտություն: Ես պետք է նորություններ լսեմ:

Եվ այդպես մինչև գիշերվա ժամը երկուսը... ռադիոն զրնգում է, շատախոսում... Գուրգենը լսում է... և շրջագայում ողջ երկրագնդով մեկ, իմանում է աշխարհի բոլոր նորությունները... Եվ չի գնում քնելու, մինչև չիմանա:

- Գուրգե՛ն, միացրու ինձ համար ինչ-որ գրական հաղորդումներ, երգեր...

- Ո՛չ, ո՛չ: Երբ ես քաղաք եմ գնում, այդ ժամանակ էլ լսիր, ինչ ուզում ես... Իսկ երբ ես տանն եմ, մի՛ խանգարիր ինձ լսել...

Պատահում էր՝ գալիս էին ընկերները, բարեկամները... Իսկ Գուրգենը նստած է ռադիոյի մոտ և նրանց վրա ուշադրություն չի դարձնում... Որովհետև նա վերջին լուրերն է լսում: Իսկ ես անհարմար եմ զգում նրա պահվածքից:

- Գուրգե՛ն, անջատի՛ր ռադիոն, նայի՛ր, ահա քո մտերիմներն են եկել, - մի անգամ ասացի ես:

- Մի՛ խանգարիր, մի՛ խանգարիր: Ինձ հանգիստ թող, - բղավեց նա և ոչ մի ուշադրություն չդարձրեց մեզ վրա: Հիմա նա ճամփորդում է աշխարհով մեկ...

Այո՛, չի կարելի Գուրգենին պատկերացնել առանց ռադիոյի... և ռադիոն՝ առանց Գուրգենի... Նրանք անբաժանելի ընկերներ են...

Իսկ հիմա նրա ռադիոն հավերժ լռել է... Եվ մեր տանը ճնշող լռություն է... Քանի որ նիհար, կռացած կերպարանքը արդեն չի նստում ռադիոյի կողքին և չի շրջում ալիքներն այստեղ-այնտեղ: Եվ առանց ցավի

հնարավոր չէ նայել այդ անկյանը: Հիմա այնտեղ թագավորում են մեռյալ լռությունն ու դատարկությունը...

Երևան, 1970թ.

Գարուն

Ամեն կիրակի առավոտյան ժամը 10-ին ես և Գուրգենչիկը գնում էինք զբոսանքի: Թերթեր էինք գնում և վերադառնում տուն, որտեղ մեզ արդեն սպասում էր մեր սիրելի Գուրգենը: Ես և Գուրգենչիկը զբոսնում էինք և տեսնում, որ փողոցում մանուշակներ են վաճառում: Նշանակում է՝ գարուն է եկել...

Մենք Գուրգենի համար մանուշակ ենք առնում և երջանիկ տուն ենք վերադառնում: Նա բաց է անում դուռը և ուրախ դիմավորում մեզ: Որդին մանուշակները նրան է նվիրում.

- Սա քեզ, հայրի՛կ:

- Շնորհակալություն, բալիկ ջան, շնորհակալություն, - ասում է Գուրգենը: - Իսկ որտե՞ղ են թերթերը:

Մենք նրան մի մեծ կապոց թերթ ենք հանձնում, և ես հիացմունքով պատմում եմ.

- Գիտե՞ս, Գուրգե՛ն, արդեն գարուն է: Ծառերը բողբոջել են... կանաչը երևում է... շուտով ապրիլն է, և մենք կմեկնենք Մոսկվա, Լիտվա... Ի՜նչ լավ է, ի՜նչ լավ: Միայն թե զգո՛ւյշ եղիր՝ գնալուց առաջ չհիվանդանաս:

Գուրգենը աշխուժանում է: Նա ուրախ է, որ հասավ այդ օրվան, և մենք շուտով կմեկնենք ճամփորդության... Գուրգենը անսահման սիրում էր ճանապարհորդել:

- Գարո՜ւն, գարո՜ւն, - կրկնում ենք յուրաքանչյուրս: Այդ օրվանից մենք սկսում ենք ճանապարհի պատրաստություն տեսնել: Գուրգենը բերում է ինչ-որ գրքեր, ամսագրեր, նոթատետրեր և ասում. «Սրանք չմոռանաս»: Նա երեխայի պես ուրախ էր տանը տիրող նախաճամփորդական եռուզեռի համար: Այո՛, դրանք երջանիկ օրեր էին:

Այսօր էլ գարուն է, արդեն մարտի վերջը: Փողոցներում, ինչպես առաջ, մանուշակներ են վաճառում... Ինձ ու Գուրգենչիկին գարունն այլևս չի ուրախացնում...

Ինչպես առաջ, մենք մանուշակներ ենք գնում, բայց այլևս տուն չենք տանում...

Այնտեղ մեզ ոչ ոք չի սպասում: Մենք գերեզմանատուն ենք գնում և, ինչպես առաջ, նվիրում դրանք մեր սիրելի Գուրգենին:

Ինչպես առաջ, այդպես էլ հիմա՝ ամեն կիրակի առավոտյան, ժամը 10-ին ես և Գուրգենչիկը տանից գնում էինք, և ես ասում էի.

- Գնանք մեր հայրիկին տեսության:

Եվ մանուշակները ձեռքներիս մենք ուղղվում էինք գերեզմանատուն, որտեղ հավերժ ննջում է մեծ տառապյալը՝ «Նաիրյան երկրի վերջին փարավոնը»...

Երևան, 1970թ.

Ճամփաներ, ճամփաներ

Պատահում էր՝ հենց որ մենք գնացք էինք նստում, և այն շարժվում էր, ռադիոն սկսում էր նվագել՝ «Ճամփաներ... ճամփաներ»: Գուրգենը նայում է պատուհանից, տխուր ժպտում ու ձեռքով անում ընկերներին, ովքեր ճանապարհում են նրան երևանյան կայարանում: Հետո նստում է, հուզված ծխախոտ ծխում, քանի որ միշտ կասկածում է՝ կվերադառնա՞ արդյոք: Հետո նայում է թերթերը, ամսագրերը, որոնցով՝ որպես ամենակարևոր բանով, նա իրեն ապահովել է, դեռևս երևանյան կայարանում: Ամեն կանգառում նա կառամատույց է դուրս գալիս, թափառում, ուսումնասիրում... Իսկ ես միշտ վախենում եմ, որ նա գնացքից կուշանա: Գուրգենը հայտնվում է մեր խցիկում, երբ գնացքն արդեն սկսում է շարժվել... Իսկ ես նրան նախատում եմ, հայհոյում.

- Ինչո՞ւ ես այդքան երկար կագնում կառամատույցում, կմրսես... չէ՞ որ գիշերանոցով ես... Մի անգամ գնացքից կուշանաս, այն ժամանակ կիմանաս...

- Չեմ ուշանա, Անտոնի՛նա, մի՛ վախեցիր: Ինձ հետ կյանքում դեռևս նման բան չի պատահել... Չէ՞ որ ես չեմ կարող ամբողջ ժամանակ խցիկում նստել զամվածի նման:

Եվ այսպես ամեն կայարանում նա դուրս էր գալիս, մեկ թերթ, մեկ միրգ գնում... և միշտ էլ, չգիտես ինչու, տխուր է, մտահոգ... Նա, իհարկե, անցյալն է հիշում...

Երբեմն խցիկում նստած նա տխուր նայում էր ինձ ու Գուրգենչիկին և ասում.

- Բայց չէ՞ որ ժամանակ կգա, երբ դուք մենակ, առանց ինձ կգնաք այս ճանապարհներով... Միայն թե չգիտեմ՝ ինչ կանեք մենակ: Դուք երկուսդ էլ չափազանց անօգնական եք: Էխ, ի՞նչ կլինի ձեզ հետ, ինչ կլինի ձեզ հետ:

- Գուրգե՛ն, մի՛ ասա նման բաներ, ես լսել չեմ ուզում... Դու միշտ մեզ հետ կմեկնես..., - ասում եմ ես նրան և ուզում եմ լաց լինել...

Իսկ մեր տղան ասում է.

- Հայրի՛կ, ինչո՞ւ դու մեզ հետ չես գա: Մենք քեզ երբեք Երևանում մենակ չենք թողնի: Դու միշտ մեզ հետ կգաս...

- Լավ, կգամ, կգամ, վերջ տվեք...

Եվ հուզված դուրս է գալիս խցիկից:

Գնացքը գնում է: Գուրգենը, ժամերով կանգնած պատուհանի մոտ, նայում է ճանապարհներին, որոնցով մենք գնում ենք արդեն շատ-շատ անգամ: Նա ուզում է ամեն ինչ տեսնել, ամեն ինչ ագահաբար զննում է, կարծես թե այդ ամենը տեսնում է առաջին և վերջին անգամ... Եվ մտածում է, մտածում... Իսկ ես նրան կրկին հանգիստ չեմ տալիս.

- Գուրգեն, ախր դու հոգնել ես, արի հանգստացիր: Մի՞թե դու առաջին անգամ ես տեսնում այս տեղերը...

- Կհանգստանամ այն աշխարհում, կհասցնեմ... Անտոնի՛նա, չէ՞ որ դու գիտես, թե ես ինչքան եմ սիրում այս ճանապարհները:

Այո՛, նա անսահման սիրում էր ճանապարհներ:

1970թ.: Մենք կրկին գնացքում ենք: Միայն այս անգամ արդեն երկուսով:

Եվ Գուրգենի ճակատագրական բառերը հնչում են այնքան կենդանի, այնքան հասկանալի...«Կգա ժամանակ, երբ դուք մենակ, առանց ինձ կգնաք այս ճանապարհներով...»:

Երևան, 1970թ.

Թերթեր

- Անտոնի՛նա, այսօր ուրբաթ է, չմոռանաս «Գրական թերթը»:

Վաղ առավոտյան ես այսպիսի հանձնարարություն եմ ստանում: Դեռ միայն ժամը 8-ն է, իմ Գուրգենը դեռևս անկողնում է, բայց արդեն թերթերի է սպասում: Ես մեր աշխատողին՝ Նադյային ուղարկում եմ թերթերի հետևից: Նա վերադառնում է և ասում, որ դեռևս շուտ է, և թերթ չկա: Գուրգենը բարկանում է. «Չի կարող պատահել»: Անցնում է ևս կես ժամ: Գուրգենը կրկին կանչում է ինձ. «Նադյային ասա, որ գնա թերթերի հետևից»: Նադյան գնում է: Կրկին առանց թերթերի է վերադառնում: Գուրգենի բարկությանը չափ չկա.

- Չի կարող պատահել: Արդեն ժամը 10-ն է: Ինչպե՞ս չկա: Դուք ինձ գերեզման կտանեք: Թող մի անգամ էլ գնա, գուցե արդեն բերե՞լ են:

Եվ մեր Նադենկան կրկնում գնում է: Այս անգամ նա վերադառնում է թերթերի մի կապ ձեռքին: Գուրգենի աչքերը սկսում են փայլել: Նա խնդրում է իր գլխի տակ ևս մի բարձ դնել: «Շո՛ւտ, տո՛ւր ինձ ակնոցս»: Ես, ինչպես հրդեհի ժամանակ, վազում եմ սենյակ և բերում Գուրգենի ակնոցը: Նա, խլելով, դնում է և բավարարված տեսքով սկսում է կարդալ: Հետո ավելացնում է. «Հիմա խնդրում եմ ինձ չխանգարել»: Ես նրան հանգիստ եմ թողնում: Բայց ամեն դեպքում ինձ հետաքրքիր էր, թե ինչ նոր բան կա թերթերում, և 10 րոպեից ես վերադառնում եմ ու հարցնում.

- Դե, Գուրգեն, ի՞նչ լավ բան կա թերթերում:

- Ոչինչ, բացարձակ ոչինչ, մի՛ խանգարիր, ես քեզ համար քարտուղար չեմ, ի՛նքդ կարդա...

- Իսկ եթե ոչինչ չկա, դու ինչո՞ւ ես այդքան ագահաբար կարդում, - հարցնում եմ ես:

Բայց պատասխանն այդպես էլ մինչև օրս չեմ ստացել…

Այո՛, ես շատ անգամ եմ նկատողություն ստացել. իբրև ես չես կարողանում թերթեր «մեկնաբանել» և այլն և այլն…

Երբ ես քաղաք էի գնում, Գուրգենը հանձնարարում էր.

- Նայի՛ր, կրպակներում գուցե ինչ-որ նոր թերթեր, ամսագրեր լինեն, գնի՛ր…

- Լա՛վ, ամեն ինչ կգնեմ:

Եվ միշտ նրա համար բերում էի տարբեր թերթերի նոր կապոցներ: Եվ նա ագահաբար կարդում էր դրանք: Թարմ թերթերը նրան ուրախացնում էին, ինչպես նոր խաղալիքը՝ երեխային:

Հիմա, երբ ես անցնում եմ թերթերի կրպակների կողքով և տեսնում եմ նոր ամսագրեր ու թերթեր, իմ սիրտը արյունոտվում է, որ արդեն ես այլևս ոչ մեկի համար դրանք չեմ գնում, նա արդեն չի սպասում դրանց: Իսկ ինձ համար ձեռքս չի գնում գնել: Եվ ես սրտի ցավով եմ անցնում թերթի կրպակների կողքով:

Երևան, 1970թ.

Օղի

Օղի՜, օղի՜, ինչպե՞ս դու թունավորեցիր իմ կյանքը: Ես քեզ հետ պայքարում էի, ինչպես չար թշնամու, բղավում, կռվում… Բայց դու միայն ժպտում էիր… հաղթողի ժպիտով: Ոխակալ, խորամանկ, միշտ քո զոհի հետևից էիր ընկնում: Իմանալով նրա թույլ տեղը՝ կանչում էիր, հմայում, խոստանում երջանկություն, ուրախություն և «մոռացում»: Բայց քո զոհը թանկ վճարեց, քո հանդեպ ունեցած իր թուլության համար:

- Անտոնի՛նա, թույլ տուր ինձ խմել միայն մի բաժակ… միայն մի… մի՛ վախեցիր, ոչինչ չի լինի:

- Գուրգե՛ն, ինչպես դու չես հասկանում, որ ես ոչ թե օղին եմ խնայում, այլ՝ քեզ… Եթե դու առողջ լինեիր, ես ոչինչ չէի ասի…

Իսկ հիմա քեզ համար վնասակար է… Գիտեմ, եթե մի բաժակ խմես, այն ժամանակ չես զսպի քեզ… Պետք չէ, Գուրգե՛ն, ավելի լավ է՝ չխմես… Ահա՛, հյութ խմիր, ես եմ պատրաստել…

- Ինքդ հյութ խմիր… Զզվեցրել են ինձ քո հյութերը: Ինչքան դաժան

ես դու: Իսկական Բերիա: Ինձ ազատություն չես տալիս... 17 տարի ես եղել եմ բանտերում, ճամբարներում, անազատության մեջ, իսկ հիմա էլ դու, ինչպես վերակացու, ինձ շնչելու հնարավորություն չես տալիս...

Եվ իմ Գուրգենը վիրավորված է, ինչպես երեխա, նստած է և ուզում է արտասվել... Իր դաժան ճակատագրի համար... Հաճախ էր նա ուզում ապստամբել և տապալել իմ բռնակալական իշխանությունը: Բայց ինչ-որ բան էր հիշում և ինչ-որ պատճառով հնազանդվում... Քանի որ գիտեր, որ առանց այդ իշխանության մի օր էլ չի ապրի...

Բայց երբեմն նա մոլորեցնում էր բռնակալին:

- Անտոնի՛նա, այսօր ես գործերով եմ գնալու: Եթե ուշանամ, մի՛ անհանգստացիր... Ես շատ գործ ունեմ...

Ես զգում եմ, որ ինչ-որ բան այն չէ... Գիտեմ, որ այս անգամվա տանից դուրս գալը ոչ մի լավ բան չի բերի... Եվ նա գնում է «գործերով»: Վերադառնում է ուշ երեկոյան և չի նայում աչքերիս... Իսկ ինձ արդեն հայտնի է, որ Գուրգենը խախտել է իր ռեժիմը: Տեսնում եմ, որ մի փոքր օրորվում է, և լեզուն չի ենթարկվում իրեն...

- Գուրգե՛ն, դու կրկին խմել ես: Ախր դու հարբած ես...

- Ո՛չ մի կաթիլ, Անտոնի՛նա, ո՛չ մի կաթիլ: Մի՞թե ես խմած եմ: Ես խմած չեմ... Ինքդ ես խմած...

Ի՞նչ կարող ես ասել ի պատասխան այդ անարդարացի մեղադրանքի... Ես վստահ մի բան գիտեմ. մեզանից մեկը հարբած է... Բայց հիմա սկսեցի կասկածել՝ որ մեկս: Հնարավոր է, որ իրականում ես եմ...

Բայց գիշերն արդեն պարզվում է, թե մեզանից ով է խմել... Գուրգենի մոտ սկսվեցին ուժեղ որովայնային ցավեր... Նա գոռում է, տնքում, և տունը դժոխքի է վերածվում... Ես անիծում եմ ընկերներին, որոնց հետ նա խմել է... Այո, նրանք իմ կյանքը հրաշալի թունավորեցին...

- Տեսնո՞ւմ ես, Գուրգե՛ն, ինչի հասցրին քեզ քո ընկերները... Հիմա նրանք իրենց համար հանգիստ քնած են, իսկ դու տառապում ես...

- Այո՛, Անտոնի՛նա, դու ճիշտ ես, հիմար եմ, ինչո՞ւ ես քեզ չլսեցի... Այլևս երբեք չեմ խմի... ո՛չ մի կաթիլ... ո՛չ մի կաթիլ... վա՜յ, վա՜յ, ինչպե՞ս է ցավում: Ո՞նց է ցավում, ո՞նց է ցավում: Ես հավանաբար քաղցկեղով եմ հիվանդ... Արա՛գ, բժի՛շկ կանչիր...

Ես կանչում եմ, բայց նախօրոք արդեն գիտեմ, որ ոչ մի օգուտ չի լինելու: Գուրգենը տառապում է, տանջվում:

- Մայրիկ ջան, ես մեռնում եմ: Մայրիկ ջան, ես մեռնում եմ:

Իսկ մեր թշնամի օդին սեղանի վրա է և կրկին սպասում է իր զոհին... Նրա ընկերները նույնպես ինչ-որ տեղ սպասում են, բայց մենք չենք տեսնում...

Ինձնից մեծ ջանքեր պահանջվեցին, որ Գուրգենին քիչ թե շատ նորմալ վիճակի բերեմ:

Վերջին տարիներին ես վստահ էի, որ Գուրգենը, բացի կաթից և հյութից, այլևս ոչինչ չի խմում: Բայց պարզվեց, որ ես չափազանց միամիտ էի...

Մի անգամ գիշերը ես գնացի քնելու, իսկ Գուրգենը նստած էր սենյակում, աշխատում էր և ռադիո լսում... Ես արթնացա... Արդեն գիշերվա ժամը մեկն էր: Որոշեցի տեսնել, թե ինչով է զբաղված Գուրգենը: Գնացի սենյակ: Տեսնեմ՝ նա նստած է ռադիոյի մոտ, ինձ չի նայում: Գուրգենն ինձ կասկածելի գունատ թվաց.

- Գուրգե՛ն, ի՞նչ է պատահել: Վա՞տ ես զգում: Ինչո՞ւ չես գնում քնելու, կմրսես:

Նա կանգնեց... Տեսնեմ՝ օրորվում է... Այդ տեսքով վաղուց նրան չէի տեսել: Ինձ ինչ-որ բան է ուզում ասել, բայց լեզուն չի ենթարկվում... Կանգնած է բարկացած և օրորվում է... Հետո հավաքեց ամբողջ ուժերը, ոտքը գետնին խփեց և ասաց. «Քո գործը չի, ինչ ուզում, այն էլ կանեմ: Վերակացու է գտնվել... այսօրվանից բառ անգամ չասես այս մասին... Ուզում եմ, պետք է խմեմ.. քո գործը չի... ամբողջ ժամանակ տանջում են բոլորը... դու էլ ինձ ազատություն չես տալիս»:

Եվ երեխայի պես լաց եղավ... Ես անսահման խղճացի նրան՝ այդ անսովոր բանաստեղծական էությանը՝ նուրբ, զգայուն, որին չար ճակատագիրը տանջել է և տանջում է... Եվ ամեն տեսակ գարշելի ճիճուները կրծում են այս հսկա գրական կաղնու արմատները... Դեռ ես էլ ինչ-որ տեղից հայտնվել եմ նրա գլխին և թույլ չեմ տալիս ապրել... Ես վիրավորված էի Գուրգենի ճակատագրի համար... և նույնպես լաց եղա...

Առավոտյան Գուրգենը խոստովանեց, որ վշտից ամբողջ 3 բաժակ խմել է և այդ ամբողջ ամիսը ծանր վիճակում էր:

- Դու ես մեղավոր, ինչո՞ւ երեկոյան սեղանից օդին չես հավաքել...

Իսկ թե ինչքա՜ն են նման դեպքերը, բոլորը չես նկարագրի...

Մի խոսքով օդին և ընկերները իմ կյանքը դժոխք դարձրին: Այդ

նրանք՝ օղին և ընկերները, ստիպեցին Գուրգենին տառապել, տանջվել և, անկասկած, կարճացրին նրա կյանքը:

Ոչ ոք մեզ այդքան չարիք չի պատճառել, ինչքան օղին և ընկերները... Չի կարելի պատկերացնել օղին առանց ընկերների և ընկերներին՝ առանց օղու...

Երևան, 1970թ.

Մայրիկ ջան

Անուշ մայրիկ

«Մայրի՜կ ջան, Անո՜ւշ ջան»: Օրվա ընթացքում ես շատ-շատ անգամ էի լսում այս բառերը: Զարմանում էի, թե ինչպես կարող է մեծ մարդը այդպես սիրել իր մորը, որը վաղուց մահացել է և ամեն օր հիշատակել նրա անունը: Ցավոք, Անուշ մայրիկին ես չեմ տեսել, բայց նրանք, ովքեր ճանաչել են նրան, ասում էին, որ նա գեղեցիկ, խելացի և շատ բարի կին է եղել:

- Գիտե՞ս, Անտոնի՛նա, ինչպես է Գուրգենը սիրել իր մորը: Նա միշտ ասում էր, որ հումորը, քնարականությունը և ամենալավ բաները, որ իր մեջ կա, ինքը ժառանգել է իր մորից: Իսկ ինչքան հրապուրիչ էր նա: Ես անգամ նրան ճանաչում էի...

Այս ամենը ինձ պատմել է տիկին Թամարա Չոլախյանը՝ Գուրգենի պատանեկան և ուսանողական տարիների ընկերուհին:

Իսկ Գուրգենը ինձ պատմում էր, որ մայրը միշտ կարծես թե հանդիմանել է նրան: «Քեզ Աստված ոչինչ չի տվել, բացի ձեռքիդ գրիչ բռնելուց...»:

Բայց մի՞թե դա քիչ է, մայրիկ ջան:

Գուրգենը պատմում էր, որ մայրը շատ է նեղացել, նույնիսկ ուզեցել է ծեծել նրան, երբ վերջինս գրել է «Ինչո՞ւ եմ ես բանաստեղծ ծնվել» բանաստեղծությունը...

Այո՛, Անուշ մայրիկին բոլորովին դուր չի եկել այս բանաստեղծությունը...

«Մայրի՛կ ջան, Անո՛ւշ ջան»: Ամենուր ես լսում եմ այս բառերը... Գուրգենն իր մոր անունն արտասանում էր մե՛ր տագնապած, մե՛ր ցավից, մե՛ր հուսահատությունից, մե՛ր ուրախությամբ և սիրով՝ ինչ-որ լավ, լուսավոր բան հիշելով՝ կապված անցյալի, իր սիրելի մոր հետ:

Այն բանից հետո, երբ մեր տանը հավերժ լռեցին այս բառերը, և ես այլևս երբեք դրանք չեմ լսում, ես ինձ պարտավորված համարեցի Գուրգենի և նրա մայրիկի առաջ... իմ մեջ ցանկություն առաջացավ ինչ-որ բան անել նրա հիշատակի համար... Եվ ահա Գուրգենի գերեզմանաքմբի կողքին կա ևս մի գերեզմանաքումբ՝ «Անուշ Աճեմյան, ծնվել է 1883թ.-ին, Վանում, մահացել է 1943թ.-ին՝ Երևանում» մակագրությամբ: Իսկ ներքևում՝ նրա սիրելի որդու բառերը՝ «Իմ համեստ, գրական ստեղծագործություններն ընդունիր որպես քեզ համար հուշարձան, մա՛յր: Գուրգեն Մահարի»:

Մայրի՛կ ջան: Անո՛ւշ ջան: Ինչքան շատ ես դու տառապել... և երբեք երջանիկ չես եղել: Դու իմ աչքերի առաջ երևում ես բոլորովին երիտասարդ, բայց արդեն այրիացած, վշտից, արցունքներից և մեծ կորուստներից կռացած... Դու քո կյանքը նվիրել ես քո երեխաներին և արդեն չես մտածել անձնական կյանքի մասին: Հետո ես քեզ տեսնում եմ գաղթի ճանապարհին, որտեղ դու կորցրեցիր քո աղջկան և մորը: Իսկ հետո թբիլիսյան հիվանդանոցում ես՝ սպիտակ խալաթով: Իսկ հետո ես քեզ տեսնում եմ քո հրաշալի որդու՝ Սուրենի՝ 19-ամյա պատանու շիրիմին ողբալիս...

Ահա դու արդեն Երևանում ես: Սեղանը պատրաստ է: Եվ տարբեր համեղ ուտեստներ, հայկական ճաշատեսակներ սպասում են ինչ-որ մեկին: Մայրիկ ջան, չէ՞ որ այն ժամանակ շատերը գիտեին, թե ինչ արվեստով ես դու դրանք պատրաստել: Ահա՛, ամեն ինչ արդեն պատրաստ է, դու սպիտակ գոգնոցով ես... Ներս են մտնում Գուրգենն ու Չարենցը: Նրանք ուրախ են, քանի որ արդեն հասցրել են ինչ-որ բան խմել...

- Մայրի՛կ ջան, մենք սոված ենք:

Այո՛, մայրի՛կ ջան, Գուրգենն ինձ պատմել է, որ Չարենցը շատ էր սիրում քո ճաշերը: Իսկ ո՞վ չէր սիրում: Ինչպես նաև քո հոգատար,

քնքուշ ձեռքերը, որ ոչ միայն քո երեխաներին են ծածկել: Նրանք մեծ սիրով ծածկել են նաև ուրիշներին:

- Այո՛, Նախիին շատ անհանգիստ էր քնում, նա միշտ բացվում էր, իսկ մայրս միշտ ծածկում էր նրան՝ վախենալով, որ կմրսի, - պատմում էր Գուրգենը:

Նա շատ էր սիրում ինձ պատմել իր Անուշ մայրիկի մասին, իսկ ես սիրում էի հարցեր տալ նրան:

- Ահա, մի անգամ ես վերադառնում եմ ուշ գիշերին: Եվ, իհարկե, խմած: Կարճ ասած՝ ես և Չարենցը հարբել էինք: Անուշ մայրիկը, տեսնելով ինձ այդ տեսքով, շատ բարկացավ և առաջին անգամ ինձ մայրական ապտակ տվեց...

- Շատ լավ է, քեզ այդպես էլ պետք էր, - ուրախացա ես: - Իսկ դու ի՞նչ ասացիր դրանից հետո, - հետաքրքրվում էի ես:

- Իսկ ես նրան բարձրացրի, պտտեցրի սենյակում, համբուրեցի և ասացի. «Մայրիկ ջան, մի՛ բարկացիր, հասկանո՞ւմ ես, ես ու Չարենցը...» «Ես քո Չարենցին էլ կհասցնեմ», - խոստացավ մայրիկը: Բայց իր այդ խոստումը այդպես էլ չկատարեց... Մայրս սիրում էր Չարենցին և շատ էր հպարտանում, որ նա մեր տուն էր գալիս...

Մայրի՛կ ջան, Անո՛ւշ ջան: Այնքան շատ բան ես դու կորցրել կյանքում... կորցրել ու կրկին գտել... հետո նորից կորցրել... Իսկ քո սիրելի Գուրգենը, թեպետև ոչ իր կամքով, քեզ այնքան շատ վիշտ ու արցունք է բերել... Ինչ ձեռք, ինչպիսի գրիչ կարող են արտահայտել այն ցավը, այն տառապանքը և տանջանքները, որ դու ապրել ես Գուրգենից հեռու եղած տարիներին: Եվ քո կարոտը նրա նկատմամբ ոչ ոք չի կարող ներկայացնել: Իսկ ինչքան արցունք ես դու թափել նրան սպասելիս... Դու սպասել-սպասել ես նրան, բայց այդպես էլ չես տեսել... Նրանք, ովքեր տեսել են քեզ կյանքի վերջին օրերին, ինձ պատմում էին. «Ախ-ախ, Գուրգեն, Գուրգեն: Ա՜խ, ա՜խ, Գուրգե՛ն, Գուրգե՛ն, - անվերջ կրկնում էր...»: Դու մահացել ես միայնակ, մոռացված: Դու՝ բանաստեղծ Գուրգեն Մահարու մայրը: Սիրելի՛ Անուշ մայրիկ: Իմ սիրտն արյունոտվում է, երբ ինչ-որ մեկը պատմում է քո միայնակ ծերության, քո վերջին օրերի մասին...

Եվ երբ ես և Գուրգենչիկը գնում ենք այնտեղ, որտեղ մեզ սպասում են երեք թանկ գերեզմանաքումբ՝ Գուրգենինը, Անուշ մայրիկինը և Նա-

զիկինը: Ես որդուս հանձնարարում եմ. «Ահա՛, Գուրգենչիկ, այստեղ են քո հայրը, Անուշ մայրիկը՝ քո տատիկը, այստեղ է նաև քո քույրիկը՝ Նազիկը: Երբեք չմոռանա՛ս նրանց»:

- Չեմ մոռանա, մայրիկ, - խոստացավ նա: - Հիշո՞ւմ ես, մայրիկ, հայրիկը միշտ ասում էր. «Մայրիկ ջան, Անուշ ջան...»:

- Ահա՛, տեսնո՞ւմ ես, թե քո հայրն ինչպես էր սիրում իր մայրիկին, - ասում եմ ես որդուս:

Գուրգենի այդ անմոռանալի բառերը, ասված ցավով ու տագնապով՝ «Մայրիկ ջան, Անո՛ւշ ջան...», կհնչեն իմ ամբողջ կյանքում...

Երևան, 1970թ.

Պալանգա

Дремлют плакучие ивы,
Низко склонясь ручьем,
Струйки бегут торопливо,
Шепчут о счастье былом...

Думу о прошлом далеком
Мне навевают они.
Сердцем больным, одиноким
Рвусь я в те прежние дни...

Պալանգան հրաշալի հանգստավայր քաղաք է Բալթիկ ծովի ափին՝ հրաշալի զբոսայգիներով և այգիներով: Ամբողջ քաղաքը կանաչի մեջ կորած է: Իսկ ի՞նչ հրաշալի օդ է, կարծես աշխարհում չկա ավելի լավը...

Ահա կոմս Տիշկևիչի զբոսայգին: Զբոսայգու կենտրոնում հսկայական շինություն է՝ ճարտարապետական հրաշալի ստեղծագործություն՝ կոմս Տիշկևիչի պալատը: Այստեղ ինչ-որ ժամանակ ապրել է ինքը՝ կոմսն իր ընտանիքի հետ: Այս պալատում նրանք ապրել են միայն ամռանը, իսկ ձմեռն անցկացրել են արտասահմանում, հիմնականում՝ Փարիզում: Նրանց գեղեցկուհի աղջիկը, որը մահացել է 17 տարեկա-

նում, թաղված է այս ամրոցի նկուղում:

Որտե՞ղ են այս հրաշալի շինության տերերը: Իհարկե, նրանք արդեն Լիտվայում չեն: Նրանք ցրվել են տարբեր կողմեր:

Զբոսայգին հիմնադրել է ինքը՝ կոմս Տիշկևիչը: Այստեղ կարելի է տեսնել տարբեր ծառեր և բույսեր, որոնք նա բերել է արտասահմանից: Այդ պատճառով էլ զբոսայգին շատ հարուստ է: Տերը, երևում է, ջանք չի խնայել:

Եվ այս, կոմս Տիշկևիչի պալատից ճանապարհը տանում է ծովի մոտ: Քեզ ուղեկցում է թռչունների սիմֆոնիան, իսկ տարբեր բույսերի և ծաղիկների բույրն ուղղակի արբեցուցիչ է: Մի խոսքով՝ դու դրախտում ես գտնվում: Խաչմերուկում, որտեղ ճանապարհը երեք մասի է բաժանվում, հանկարծ անսպասելի դու հայտնվում ես իշխանուհի Բերուտեի գերեզմանի մոտ: Ըստ առասպելի՝ XIII դարում, երբ լիտվացիները հեթանոս էին, կային աղջիկներ, ովքեր իրենց նվիրաբերել էին Աստծուն: Նրանք, որպես միանձնուհիներ, չէին ամուսնանում, աղոթում էին և վառ պահում հավերժական կրակը... Այս աղջիկների մեջ էր նաև գեղեցկուհի Բերուտան: Նա ապրում էր Պալանգայում: Այն տեղը, որտեղ վառվում էր հավերժական կրակը, պահպանվել է մինչև հիմա:

Մի անգամ մեր ամենակարող իշխան Կեստուտիսը, ով ապրում էր Տրակայ ամրոցում, իր շքախմբով որոշեց որսի ելնել Պալանգան շրջապատող անտառներում: Երբ, իր ձիուն նստած, նա գնում էր անտառի արահետով, հանկարծ նա տեսավ երիտասարդ աղջկա՝ հեքիաթային գեղեցկությամբ: Նրա հագուստից իշխանը հասկացավ, որ նա միանձնուհի է: Լիտվայի տիրակալ իշխան Կեստուտիսը աղջկա գեղեցկությունից կուրացավ և, անտեսելով, որ ինքը իշխանական ծագում ունի, իսկ նա միայն աղքատ աղջիկ միանձնուհի է, բռնեց նրան, նստեցրեց իր ձիուն և հենց այդ նույն օրը վերադարձավ իր Տիսկայ ամրոցը: Այնտեղ իշխան Կեստուտիսն ամուսնացավ գեղեցկուհի Բերուտեի հետ: Այդ ամուսնությունը Լիտվային տվեց մեծն առաջնորդ - զորավար Վիտաուտաս Մեծին: Նրա իշխանության օրոք Լիտվան դարձավ հզոր միապետություն: Այս ամենը պատմական փաստ է:

Բերուտան խնդրել է, որ իր մահից հետո իրեն թաղեն Պալանգայում: Իշխանուհու խնդրանքը ի կատար է ածվել: Եվ ահա մենք կանգնած ենք նրա շիրմի և արվեստով կերտված քանդակի առաջ: Այստեղ՝

իշխանուհի Բերուտայի շիրմին, միշտ թարմ ծաղիկներ կան, քանի որ լիտվացի ժողովուրդը սիրում է նրան: Չէ՞ որ նա է Լիտվային տվել Վիտաուտաս Մեծին: Շիրմի կողքով մենք բարձրանում ենք Բերուտա լեռը: Ինչպիսի՜ սքանչելի վայր: Ինչ-որ ժամանակ այստեղ սիրել է լինել մեր սիրելի պոետ Մայրոնիսը: Շատ անմահ բանաստեղծություններ է նա գրել հենց այստեղ: Բերուտա լեռան վրա մի փոքրիկ, գողտրիկ աղոթարան կա, որ նույնպես պատկանել է կոմս Տիշկևիչին, իսկ շուրջը նստարաններ են, ուր կարելի է նստել, հանգստանալ, երազել և հիշել մեր երախտավոր և խիզախ նախնիներին...

Հանգստացանք... Եվ գնացինք ծովի մոտ: Ահա մեր սքանչելի Բալթիկ ծովը: Այսօր նա շատ անհանգիստ է: Դրոշը սև է, ինչը նշանակում է, որ այսօր լողանալն արգելվում է: Եթե խեղդվես, ապա փրկարարական կայանը պատասխանատվություն չի կրում (մեր մեջ ասած՝ նրանք երբեք ոչ մեկի համար պատասխանատվություն չեն կրել...):

Ահա, նայեք և հիացեք, թե ինչպես են մուգ կանաչ ալիքները աղմուկով մոտենում ափին և դրոտընդոստ փշրվում: Մեր Մայրոնիսը գրել է.

Փրփրուն ալիքներն են անվերջ վազում ու սահում
Դեպի ծովի ափը ավազուտ...
Ասես կհափշտակեն հիմա նրանք մեկին
Ու ծով կտանեն
Ատլանտիկ ծովը՝ լայնարձակ հեռու
Ալիք առ ալիք ծովն է ափ հոսում...
Ասես հրավիրում են անհավասար մարտի.
Օ՜, ծո՛վ, ինձ ասա՛,
Կարո՞ղ է արդյոք խիզախության ճգտել
Նա, ով քանիցս է գոռ մարտում ընկել:
Դու ինձ ասում ես՝ հարկավ:
Ես լսում եմ քեզ ու հավատում,
Շնորհակա՛լ եմ: Դու տվիր ինձ հարություն...
Եվ շնորհակալ լինելով՝ կընծայեմ, ծո՛վ, քեզ
Իմ երգերը լավագույն, հրկեզ:

Այո, այսօր ծովը շատ բարկացած է: Նա աղմկում և ալիքվում է:

Կարծես, թե իրականում տենչում է առևանգել ինչ-որ մեկին և տանել իր մոտ, իսկ հնարավոր է նաև՝ դեպի ընդարձակ Ատլանտիկան: Որպեսզի վիրկարարական կայանն ազատվի ավելորդ հոգսերից, այնպես ավելի լավ է հեռու մնալ ծովից...

Բայց Բալթիկ ծովը լինում է նաև շատ հանգիստ ու մաքուր, ինչպես հայելի: Իսկ ափը, որ ծածկված է ոսկեգույն ավազով, հմայում է քեզ, իսկ արևային, տաք օրերը շոյում և օրորում են քեզ...

Ինչո՞ւ եմ ես այսքան շատ գրում Պալանգայի մասին: Որովհետև 10 տարի անընդմեջ Պալանգայում է հանգստացել Գուրգեն Մահարին: Չէ՞ որ ամառները այստեղ էր անցկանում: Պալանգայում նա գրել է այնպիսի գործեր, ինչպիսիք են «Այրվող այգեստանները», «Ծաղկած փշալարերը» և այլն: Այստեղ են գրվել շատ բանաստեղծություններ, հոդվածներ, պատմվածքներ: Պալանգայում ամեն տարի օգոստոսի 1-ին Գուրգեն Մահարին տոնել է իր ծննդյան տարեդարձը: Այստեղ նա հանգստացել է, ստեղծագործել, երազել և այստեղ է անցկացրել իր վերջին ծանր օրերը, ժամերն ու րոպեները... Պալանգայում է հանգել մեր անխոնջ ստեղծագործող - գրողը, տառապյալ Գուրգեն Մահարին՝ անավարտ թողնելով և՛ «Երիտասարդությունը», և՛ մինչև վերջ չծխված ծխախոտը...

Այստեղ ցանկանում եմ պատմել մի լիտվական լեգենդ, որն այնքան սիրում էր Գուրգենը, և որը շատ էր հուզում նրա բանաստեղծական հոգին: Այդ պատճառով էլ ես ուզում եմ, որ հայ ընթերցողը նույնպես ծանոթանա այդ լեգենդին:

Երբ ծովից զբոսայգու միջով գնում ես, այնտեղ կանգնած է օձերի թագուհու՝ Եգլեի արձանը: Լեգենդը պատմում է, որ շատ-շատ տարիներ առաջ կային-չկային 3 քույր: Ամենափոքրը շատ գեղեցիկ էր, նրա անունը Եգլե էր: Նրանք ապրում էին հենց ծովի կողքին՝ իրենց ծնողների և եղբայրների հետ: Մի անգամ 3 քույրերը գնացին լողալու: Երկուսը լողացին, հագնվեցին և պատրաստվեցին գնալ, իսկ երբ կրտսերը՝ գեղեցիկ Եգլեն ցանկացավ հագնվել, իր հագուստների մեջ տեսավ մի մեծ օձ: Նա սարսափից հետ ցատկեց: Իսկ օձը մարդկային ձայնով ասաց. «Մի՛ վախեցիր, գեղեցկուհի՛: Քո հագուստը ես կտամ, միայն թե խոստացիր իմ կինը դառնալ»: Քույրերը սկսեցին ծիծաղել. «Ահա և քեզ փեսացու, Եգլե՛: Խոստացի՛ր, խոստացի՛ր»: Եգլեն խոստացավ այդ

հրեշին ամուսնանալ նրա հետ: Հենց որ նա իր խոստումը տվեց, օձը անմիջապես դուրս սողաց հագուստի միջից: Ոսկե թագը փայլեց նրա գլխին, և նա չքացավ ծովի ալիքների մեջ...

Ամբողջ ճանապարհին քույրերը ծիծաղում էին՝ հիշելով տարօրինակ դեպքն ու տարօրինակ փեսացուին: Անցավ մեկ շաբաթ, երկու... Նրանք բոլորը մոռացել էին ծովափի պատահարը: Բայց մի անգամ, երեկոյան, հանկարծ տեսան, որ ոսկեզօծ կառքերով իրենց տուն էին գալիս օձերը: Եգլեն վախեցավ և թաքնվեց: Իսկ օձերը կոտրում են դարպասները և պահանջում են իրենց տալ հարսնացուին, հակառակ դեպքում նրանք ամեն ինչ կավերեն և բոլորին կսպանեն: Ծնողները ստիպված էին նրանց տալ իրենց սիրելի դստերը: Նա հրաժեշտ տվեց բոլորին, նստեց ոսկեզօծ կառքը, և նրան տարան: Տանը մնացածները սգում էին նրա համար, քանի որ մտածում էին, որ այլևս չեն տեսնի նրան:

Երբ օձերով լի կառքը մոտեցավ ծովին, արդեն մթնում էր: Եգլեն վախից կիսամեռ է: Հանկարծ վրդովվեցին ալիքները, ծովն աղմկեց, ճայերը պտտվեցին ջրերի վրա և... այնտեղից դուրս եկավ հրաշագեղ արքայազնը գեղեցիկ, երիտասարդ, ոսկե թագը գլխին: «Ողջո՞ւյն, գեղեցկուհի՛ս: Ինչ լավ է, որ դու քո խոստումը կատարեցիր: Ես այն նույն օձն եմ, որի հետ դու խոստացար ամուսնանալ: Ես ծովերի արքան եմ: Գնանք իմ թագավորությունը, կլինես ծովերի թագուհի»: Եվ նա Եգլեին տարավ ծովի հատակը: Այնտեղ նա տեսավ հեքիաթային դղյակներ, որոնք ողողված էին չտեսնված ճոխությամբ: Իսկ ծառաները խոնարհվում և ողջունում էին նրան. «Ողջո՛ւյն ծովերի թագուհուն: Եգլեն զարմացած էր իր տեսած ամեն ինչից: Դա երա՞զ էր, թե՞ իրականություն: Չէր կարողանում հասկանալ: Բայց այդ ամենը իրողություն էր: Եվ ահա, հենց նույն երեկոյան նրանք հարսանիք արեցին, և Եգլեն դարձավ ծովերի թագուհի: Նա շատ սիրեց իր ամուսնուն՝ ծովերի հիասքանչ տիրակալին և անսաման երջանիկ էր...

Անցան տարիներ: Եգլեն ունեցավ երկու որդի՝ Դուբը և Ուասիսը, և մի դուստր՝ Դրեբուլեն: Երեխաները անընդհատ մորը հարցուփորձ էին անում երկրային կյանքի մասին, տատիկի և պապիկի մասին: Եգլեն ամեն ինչ պատմում էր նրանց, ինքն էլ էր հիշում և հանկարծ անտանելի կարոտ զգաց... Նա շատ էր ուզում տեսնել յուրայիններին: Նա

սկսեց խնդրել ամուսնուն. «Թող ինձ գնամ տուն, միայն 3 օր: Ես շատ եմ կարոտել...»: Ծովերի արքան չէր ուզում թույլ տա, բայց կինն այնպես էր խնդրում, նույնիսկ լաց եղավ, որ նա համաձայնվեց և ասաց. «Լավ: Բայց միայն 3 օր, ոչ ավելի: Իսկ երբ կվերադառնաս ինձ մոտ, դու պետք է ձայն տաս. «Ժիլվիտե, ժիլվիտելի, եթե դու կենդանի ես, թող ծովը կաթի փրփուրով լինի, իսկ եթե ոչ՝ արյան»: Այդ ժամանակ ես կգամ ձեզ դիմավորելու: Բայց խնդրում եմ, ոչ մեկին չասեք իմ անունը: Հիշե՛ք սա»:

Նրանք բոլորը հրաժեշտ տվեցին, և Եգլեն իր երեխաների հետ ուղևորվեցին դեպի ափ՝ տուն:

Նրա ծնողները, քույրերն ու եղբայրները շատ ուրախացան՝ տեսնելով Եգլեին այդքան գեղեցկացած, երջանիկ: Նրա հայտնվելն այդքան տարիներ հետո մեծ երջանկություն էր: Բայց եղբայրներն այլևս չէին ցանկանում տանից բաց թողնել իրենց քրոջը: Նրանք սկսեցին քննարկել, թե ինչպես սպանեն նրա ամուսնուն: Նախ պետք է ջանային իմանալ նրա անունը: Հարցրին զարմիկներին: Բայց նրանք, չնայած որ իրենց ծեծեցին, ոչինչ չասացին: Հետո եղբայրները սկսեցին սպառնալ իրենց զարմուհի Դրեբուլեին, որ կծեծեն նրան, եթե չասի իր հոր անունը: Նա վախից դողաց և ամեն ինչ պատմեց...

Մութ գիշերին, երբ Եգլեն հանգիստ քնած էր իր հայրական տանը, նրա եղբայրները թրերով և կացիններով գնացին ծովի մոտ: Այնտեղ նրանք սկսեցին կանչել իրենց քրոջ ամուսնուն. «Ժիլվիտե, ժիլվիտելի...»:

Աղմկեցին ալիքները և ջրի երեսին հայտնվեց կաթնային փրփուր, իսկ մի րոպե հետո, այնտեղից ափ դուրս եկավ ծովերի գեղեցկադեմ արքան: Նա եկել էր դիմավորելու իր կնոջն ու երեխաներին, բայց... Անխիղճ եղբայրներն անմիջապես թրերով և կացիններով մասնատեցին նրան:

Ողջ ծովն արյունից կարմրեց, իսկ ալիքներն ասես սարսափից քարացան: Ճայերը սգավոր կախեցին գլուխները և խղճալի սկսեցին պտտվել ջրերի վրա: Դժբախտաբար եղբայրները այս ամենը չնկատեցին: Նրանք ուրախ էին, որ իրենց սիրելի քույրն այլևս ծով չի վերադառնա...

Հաջորդ առավոտյան Եգլեն պատրաստվեց գնալ ծով՝ ամուսնու մոտ: Եսբայրները ոչինչ չասացին, կարծես թե ոչ մի բան չէր պատահել: Եգլեն հրաժեշտ տվեց յուրայիններին և գնաց: Հասավ ծովին և կան-

չեց ամուսնուն. «Ժիլվիտե, Ժիլվիտելի, եթե դու կենդանի ես, թող կաթնային փրփուր լինի, եթե ոչ՝ արյան»: Սարսափելի քամի բարձրացավ, փոթորիկ, ալիքները վրդովվեցին, ծովը սևացավ... և կարմիր փրփուրը ծածկեց նրա մակերեսը: Այնտեղից ձայն լսվեց. «Ա՜խ, Եգլե՛, Եգլե՛: Քո եղբայրները սպանեցին ինձ: Մեր աղջիկը մատնել է իմ անունը, գնաք բարով ընդմիշտ...»:

Եվ ձայնը լռեց...

Եգլեն սարսափից քարացավ: Նա դեռ երկար կանգնած սպասում էր... Վերջապես հասկացավ, որ տեղի է ունեցել սարսափելին, անդառնալին, որ իր սիրելի ամուսնուն սպանել են իր եղբայրները: Նա շրջվեց դեպի երեխաները, հուսախաբված բռնեց գլուխը և ողբաձայն ասաց. «Ա՜խ, դու, Դրեբուլե՛, աղջի՛կս, ի՞նչ արեցիր: Ուրեմն ուռենի դարձիր, որ դողաս գիշեր-ցերեկ, որ քամին սանրի մազերդ, անձրևը լվանա երեսդ: Իսկ դո՛ւք, որդինե՛րս, այս րոպեից դարձեք ամուր ծառեր՝ կաղնի և ցարասի. սոսափեք անահ՝ առանց վախենալու քամուց ու անձրևից: Իսկ ես՝ ձեր դժբախտ մայրը, եղևնի կդառնամ»:

Եվ մինչև հիմա այնտեղ կանգնած են այդ երեք ծառերը, եղևնին՝ հավերժ արտասվող, կեչին և թխկին՝ ամուր, քամուց ու փոթորիկից չերկնչող: Իսկ նրանց քույր ուռենին զօրուգիշեր դողում է:

Այժմ մենք կանգնած ենք Եգլեի՝ օձերի թագուհու արձանի առջև և մտածում ենք հրաշալի լեգենդի մասին... Այո՛, Պալանգայում շատ հետաքրքիր բաներ կան: Նա ինքը հեքիաթ է, լեգենդ է:

Ահա կրկին հուշարձան՝ Դուրայտեն և Կաստիտիսը: Ըստ լեգենդի՝ ինչ-որ ժամանակ երիտասարդ ձկնորսը ձուկ էր որսում և միշտ նրա ցանցն էր ընկնում գեղեցկուհի ջրահարսը: Նա կանչեց ձկնորսին ծովի հատակը և... տարավ:

Շատ լավ բաներ կարելի է պատմել Պալանգայի մասին, բայց ամեն ինչ չես պատմի: Ով գեթ մի անգամ եղել է Պալանգայում, նա ամպայման կվերադառնա այնտեղ: Նա չի կարող չվերադառնալ: Նա գերում է, կանչում, հմայում և պոկվել նրա հրապույրներից հնարավոր չէ:

Ահա այսպես էլ նա կախարդել էր մեր սիրելի Գուրգեն Մահարուն, իսկ նա հիացրել էր Պալանգային, որը ամեն ամառ սպասում էր Մահարուն սիրով և անհամբերությամբ: Այժմ էլ նա սպասում է, բայց այլևս երբեք չի տեսնի...

«Ես ուզում եմ էլի ապրել, հասնել մինչև գարուն, որպեսզի կրկին գնամ Պալանգա», - ամեն անգամ ասում էր Գուրգենը: Դու վերադարձար և հավերժ մնացիր այնտեղ: Քո անունը, քո հրապույրը, քո ազնվազարմ դեմքը Պալանգան երբեք չի մոռանա:

Իսկ անցորդները, մեր տան կողքով անցնելիս, կասեն. «Ահա այստեղ ժամանակին ապրել է հայ հայտնի գրող Գուրգեն Մահարին: Ահա և նստարանը, որի վրա նա սիրում էր նստել և թերթեր կարդալ...»:

Երևան, 1973թ.

Ահա, թե ինչքան երջանիկ եմ ես

Где ты, подруга родная,
Помнишь ли ты обо мне?
Так же как я, изнывая,
Плачешь в чужой стороне...
А плакучие ивы все шепчут
И шепчут о счастье былом...

Ինչքան ես հիշում եմ, ինձ միշտ նախանձել են՝ դպրոցում, ինստիտուտում և նույնիսկ... բանտում: Իբր՝ իմ բախտը բերում է: Ահա իր համար հանգիստ նստած է, ոչ մի հոգս չունի... Հետո ինձ տարան հեռավոր հյուսիս: Այդ ժամանակ սկսեցին ասել. «Ոնց նրա բախտը բերեց, հիմա արև կտեսնի: Հերոսուհի է գտնվել: Ամեն դեպքում նրա կյանքը հետաքրքիր է: Մեկնում է: Իսկ մենք ահա կորչում ենք այստեղ», և այլն, և այլն:

Այնտեղ՝ հեռավոր այդ երկրամասում, ես ամուսնացա հիվանդ, բայց անտվոր մարդու հետ: Եվ սկսվեց. «Ա՜յ թե խորամանկն է: Ինչքա՜ն երջանիկ է: Հապա, գիտեր՝ ում հետ կապվել: Այդպիսի ամուսի՜ն, այդպիսի ամուսի՜ն...»: Այո, իմ ամուսինը ինքնատիպ էր և հարուստ. տուբերկուլյոզի երկու օջախ թոքերում և 12-մատնյա աղիքի բաց խոց:

Հետո մենք վերադարձանք նրա սիրելի մայրաքաղաքը: Եվ այստեղ՝ այս հյուրընկալ քաղաքում, մեր ընկերների տարբեր զրույցներից ես իմացա, որ աշխարհի ամենաերջանիկ կինը ես եմ: Նույնիսկ անգ-

լիական թագուհին կարող է նախանձել ինձ:

Ես իմացա նաև, որ արժանի չեմ իմ ամուսնուն: Քանի որ ինձանից ոչինչ չէի ներկայացնում, պարզապես՝ «էշ», չնչին մարդուկ: Բայց խորամանկ մարդուկը «ճանկել է լավագույն գրողին և իր համար ապրում է...»:

Այստեղ ես իմացա նաև, որ եթե դու չես պատկանում նրանց դարավոր ազգին և չգիտես նրանց լեզուն, դու մարդ չես, պարզապես փուչ տեղ ես: Եվ այսպես, այստեղ ես «էշ» էի, չնչին մարդուկ և դատարկ տեղ: Այստեղ ես իմ մասին էլի շատ բաներ իմացա: Ինչ լավ է, որ ճակատագիրն ինձ այստեղ բերեց, թե չէ ես այդպես էլ չէի իմանա, թե ինչ եմ ինձանից ներկայացնում և ով եմ ես: Այնուամենայնիվ իմ բախտը բերել է: Ինչպես տեսնում եք, ես երջանիկ եմ:

Սիրելի բանաստեղծներից մեկը ոտանավոր էր գրել՝ դիմելով ատամնաբույժին. «Եթե Ձեզ մոտ հիվանդ կգա և հայերեն չի խոսի, քաշեք նրա բոլոր առողջ ատամները»: Դրանից հետո ես երբեք չեմ դիմել այստեղի ատամնաբույժներին՝ վախենալով կորցնել առողջ ատամներս: Ես միշտ ատամներս բուժել եմ Լիտվայում: Եվ դրա շնորհիվ իմ բոլոր ատամները դեռևս տեղում են:

Ինձ բոլորն այնպես էին նախանձում, որ նախանձից կամ անսահման երջանկությունից ես սկսեցի նիհարել: Սրտի նոպաներ, հեմոգլոբինն ընդամենը 42 է: Գրեթե ամեն օր «շտապ օգնություն» էին կանչում: Բայց, այնուամենայնիվ, ես երջանիկ էի: Նրանք, ովքեր ինձ շատ էին սիրում, անմիջապես ախտորոշեցին. «Նրա բախտը ո՞նց է բերում: Ահա, «շտապ օգնությունը» եկավ... Իհարկե, այդպիսի ամուսին ունի, ահա և կոտրատվում է նրա առաջ, որ սրտի նոպա ունի: Իսկ իրականում ոչինչ էլ չկա: Եզի նման առողջ է» (խնդրում եմ ինձ ներել այսպիսի «քնքուշ» բառերի համար, բայց այդպես էր ասվել):

Ամուսնուս հիվանդանոց պառկեցրին: Վիրահատեցին: Գրեթե անհույս վիճակ է: «Նրա բախտը բերում է, ինչքան խորամանկն է... Դիտմամբ հիմա գիշերում է հիվանդանոցում, որպեսզի բժիշկների հետ ֆլիրտ անի: Իսկ տանը ոչինչ չի անում, ճաշ չի եփում, տունը կարգի չի բերում... Իսկ մենք ահա տառապում ենք...»:

Մի ամբողջ ամիս ես անցկացրի հիվանդանոցում՝ ծանր հիվանդի կողքին... Բայց միևնույնն է, երջանիկ էին համարում և... նախանձում

էին իմ երջանկությանը:

Հետո ես կորցրի նրան, ում համար ինձ այդքան նախանձում էին: Ինձ համար աշխարհում ամենաթանկ մարդուն: Ես միայնակ մնացի օտարության մեջ՝ անչափահաս որդուս հետ, առանց հայրենիքի, առանց ընկերների, առանց իրավունքի... Միայնակ նստած եմ սենյակում, և սիրտս ցավից կտրատվում է: Ինչ-որ մեկը ներս է մտնում և ասում. «Անտոնինա, ամեն դեպքում դու երջանիկ կին ես... ես քեզ նախանձում եմ: Քեզ համար հանգիստ նստած ես: Ոչ մի հոգս, ոչ մի տագնապ չունես: Իսկ իմն, ահա, մահ է գալիս...»:

Սիրելի՛ իմ՝ ինձ ատողներ և նախանձողներ, տիկնա՛յք և պարոնա՛յք, ունակ կանայք և հանճարեղ՝ ամուսիններ. բոլորդ, ովքեր զարդարել են իմ երջանիկ կյանքը, առանց ձեզ այն ծանծրալի և անհետաքրքիր կլիներ: Ի նշան երախտագիտության՝ ես ուզում եմ ձեզ հաղորդել հաճելի նորություն: Մի քանի օր առաջ ես դիմում եմ տվել, որ ինձ աշխատանքի վերցնեն... ավելու եմ փողոցներ (հասկանո՞ւմ եք, իմ ֆինանսական գործերը վատացան): Եվ ահա, ես պետք է ձեզ ուրախացնեմ, իմ սիրելի, հարգարժան նախանձողներ: Ինձ ընդունել են. աղբի գծով պետն ինձ ասաց, որ ես ընդունված եմ և երկուշաբթի օրվանից կարող եմ անցնել աշխատանքի...

Այստեղ էլ իմ բախտը բերեց: Երևում է նրանից, որ հաջողությունը չի լքել ինձ: Կամ գուցե, որովհետև ես հայ դասականի այրի եմ: Ղեկավարն իմ նկատմամբ ինչ-որ հատուկ վերաբերմունք ուներ: Ահա, օրինակ, նա ինձ բոլորովին նոր ավել տվեց: Եվ ես պետք է ավելեմ լավագույն շրջանը՝ կենտրոնը: Եվ այսպես, սիրելիներս, ամեն օր դուք կարող եք ինձ տեսնել օպերայի մոտ՝ նոր ավելը ձեռքիս: Ես գիտեմ՝ դուք ինչ կասեք՝ տեսնելով ինձ օպերայի մոտ ավելիս. «Ինչքա՜ն երջանիկ է նա: Նրա բախտը ոնց է բերել: Ինչքան խորամանկն է: Ճանկել է մեր դասականին, հիմա էլ այրի է համարվում: Գտել է հարմար աշխատանք, և ահա պտտվում է մեր քաղաքի ամենակենտրոնում: Դիտմամբ, որպեսզի բոլորը նրան տեսնեն: Ի՜նչ խորամանկն է: Տե՛ս է, նույնիսկ խոլերան նրան չտարավ»:

Ի՛մ սիրելիներ, նախանձեցե՛ք, բայց նախանձից չպայթեք: Թե չէ ես ստիպված կլինեմ պատասխան տալ ձեզ համար: Հայ ազգն ինձ երբեք չի ների, եթե դուք իմ պատճառով մահանաք: Քանի որ ձեզանից յուրա-

քանչյուրն իրենից ինչ-որ արժեք է ներկայացնում Հայաստանի համար. մեկը՝ մշակույթի, մյուսը՝ գրականության, իսկ երրորդը՝ հայկական խոհանոցի համար: Դուք բոլորդ մեծ արժեք եք, իսկ ես՝ պարզապես «էշ», չնչին մարդուկ... Ես նաև շատ ուրիշ բաներում եմ մեղավոր, գրականության հետ կապված գործերում: Այո՛, հիմա ես հասկացա, որ շատ-շատ բաներում մեղավոր եմ... Եվ եթե սկսվի հայ-թուրքական պատերազմ, իմացեք, որ մեղավորը ես ես:

Ես նաև ձեզ ցանկանում եմ, սիրելիներս, որ իմ երջանկությունը զգաք նաև դուք և ձեր երեխաները: Ես ժլատ չեմ և ուզում եմ կիսել իմ երջանկությունը, հատկապես այնպիսի բարիների և մարդասերների հետ, ինչպիսիք դուք եք: Եվ ի՞նչ էի անելու ես առանց ձեզ... Եվ ինչքա՜ն լավ է, որ ես ձեզ հետ ծանոթ եմ...

Այս օրերին իմ նախկին տնային աշխատողը՝ Նադենկան, ինձ տեսավ փողոցում՝ ավելը ձեռքիս: Իմիջիայլոց, նա միակ մարդն էր, որ ինձ չի նախանձել: Եվ այսպես, նա ինձ տեսավ, և ձեռքերը տարածեց.

- Անտոնինա Միխայիլովնա՞, այդ Դո՞ւք եք: Վա՜յ, վա՜յ: Այդ ինչպե՞ս: Ի՞նչ կասեր Գուրգեն Գրիգորևիչը, եթե տեսներ Ձեզ այստեղ: Այդ դեպքում, ավելի լավ է՝ եկեք մեր բրիգադը, միասին ավելի ուրախ կլինի... Ես Թբիլիսյան խճուղին եմ մաքրում: Երբեմն Ձեզ, կօգնեմ Անտոնի՛նա Միխայիլովնա:

- Շնորհակալությո՛ւն, Նադե՛նկա: Հասկանո՞ւմ ես, այստեղ՝ կենտրոնում, ինձ համար ավելի հետաքրքիր է: Այստեղ կարելի է տեսնել հետաքրքիր մարդկանց, ծանոթների, ընկերների... Ահա, հենց նոր անցավ նա, հիշում ես, ով այնքան հաճախ էր մեր տուն գալիս, և դու նրա համար օդի էիր գնում: Հիշո՞ւմ ես: Նա խմում էր ամեն անգամ երկու լիտր: Ահա՛, նայի՛ր, անցնում է նա, ով շատ էր սիրում Գուրգեն Գրիգորևիչին... Հիշո՞ւմ ես, նա երկար նստում էր, ծխում և խմում, խմում և ծխում: Հիմա նա անցավ անձնական մեքենայով:

- Այո՛, Անտոնինա Միխայիլովնա, լավ եմ հիշում: Դուք շատ ընկերներ ունեիք... Ի՞նչ կասեն հիմա նրանք՝ Ձեզ այստեղ տեսնելով: Ինչ-որ անհարմար եմ զգում Ձեզ համար, Անտոնի՛նա Միխայլովնա...

- Ոչինչ էլ նրանք չեն ասի, Նադենկա: Նրանց հետ դժբախտություն է պատահել, տեսողության հետ խնդիրներ կան: Պատճառն անհայտ է...

- Վա՜յ, վա՜յ, - զարմացավ Նադենկան, - հիշո՞ւմ եք, Անտոնինա Միխայիլովնա, նրանք ասում էին, որ հայ ժողովուրդը երբեք չի մոռանա Ձեզ, չի մոռանա այն, ինչ Դուք արել եք Գուրգենի Գրիգորևչի համար...

- Ասում էին, Նադե՛նկա: Եվ իսկապես չեն մոռացել: Ահա, տեսնո՞ւմ ես, նոր ավելով քաղաքի կենտրոնում եմ աշխատում: Ոչ բոլորին այստեղ կուղարկեն, պետք է վաստակել: Նայի՛ր, նայի՛ր, Նադյա՛, ահա՛, գալիս է այդ նույնը: Հիշո՞ւմ ես՝ նա այնպես հարբեց մեր տանը, որ չկարողացավ տուն գնալ և քնեց մեր բազմոցին: Առավոտյան դու նույնիսկ վախեցար, երբ նրան տեսար: Հիշո՞ւմ ես, թե նա ինչպես էր ծոմվում Գուրգեն Գրիգորևիչի առաջ: Հիմա նա կարևոր անձնավորություն է: Ահա՛, տեսնո՞ւմ ես, Նադե՛նկա, թե ինչքան հետաքրքիր է այստեղ, ոչ թե Թբիլիսյան խճուղու նման... Այստեղ կարելի է տեսնել ողջ հայկական էլիտային, նրանց, ովքեր դեռևս ոչ վաղ անցյալում խմում էին մեր տանը՝ հարբելու աստիճան...

Երևան, 1973թ.

Վիլնյուս

Вот, смотрите! Это виленские
Башни дремлют между горами...
А ночь прикрывает его темной
Туманной одеждой...
Он спит глубоко.

Майронис

Վիլնյուսը հարուստ է իր կաթոլիկ եկեղեցիներով՝ կոստյոլներով: Դրանք շատ են: Դրանք տարբեր դարերի ճարտարապետական հրաշալի ստեղծագործություններ են, տարբեր ոճերի և տարբեր գույների: Դրանցից յուրաքանչյուրն իր պատմությունն ունի: Ամեն ինչ պատմել հնարավոր չէ:

Ահա Գեդեմինասի տաճարը: Կանաչ լեռան վրա XIII դարի կառույց է, որը հիմնադրվել է Լիտվայի իշխան Գեդեմինասի կողմից: Լեգենդը պատմում է, որ XIII դարում այստեղ անանցանելի անտառներ էին: Այդ անտառներում վխտում էին շատ գազաններ: Հիմա դրանք անհետացել

են կամ, մարդկային կերպ ստանալով, փայլուն արտաքինով հանգիստ շրջում եմ Վիլնյուսի փողոցներով: Նրանց այլևս ոչ ոք չի հետապնդում: Ավելի շուտ՝ ընդհակառակը, նրանք՝ այդ գազանները, հետապնդում են մարդկանց: Այո՛, ինչպե՞ս են փոխվել ժամանակները: Ոչ մի բան իր տեղում չէ՝ ո՛չ մարդիկ, ո՛չ կենդանիները: Բայց եկեք ներկայի մասին չխոսենք: Անցյալն անհամեմատ հետաքրքիր է:

Ահա՛ այսպես: Այդ հեռավոր և ոսկի ժամանակաշրջանում, երբ կենդանիներն իրենց տեղում էին, այսինքն ապրում և շրջում էին անտառում, ոչ թե փողոցներում, այդ անանցանելի անտառներ որսի էր եկել իշխան Գեդեմինասը: Նա ողջ օրը որս էր անում և, հոգնելով, քուն մտավ հենց անտառում՝ լեռան լանջին: Նա տարօրինակ երազ տեսավ. իբրև թե այդ նույն լեռան վրա կանգնած է հսկա երկաթե գայլ և այնպես բարձր, սարսափելի ձայնով է ոռնում, կարծես 100 գայլ միասին են ոռնում... Իշխանն արթնացավ, երազը նրան տարօրինակ թվաց, դրա համար նա այն պատմում է գուշակին, որը այդ երազը մեկնաբանեց հետևյալ կերպ. այդ նույն լեռան վրա նա պետք է տաճար կառուցի, իսկ լեռան շուրջը՝ քաղաք: Այդ քաղաքը այնքան հայտնի կդառնա, որ նրա փառքը կտարածվի աշխարհով մեկ: Իշխան Գեդեիմնասն այդպես էլ արեց: Լեռան վրա եկեղեցի կառուցեց և հիմնադրեց Վիլնյուս քաղաքը՝ Լիտվայի այսօրվա մայրաքաղաքը:

Ահա ապստամբների բլուրը: Այստեղ ինչ-որ մի ժամանակ երեք հսկա սպիտակ խաչ է եղել: Բայց երբ եկան «ազատարարները», այդ խաչերը, որոնք տասնամյակներ շարունակ կանգուն էին, հանկարծ մի գիշեր անհետացան: Երևում է, որ այդ խաչերը վախեցնում էին նրանց: Ժողովուրդն ասում է. «վախենում է, ինչպես սատանան՝ խաչից»... Այո, մեզ «ազատարարները» չէին ուզում, որ այդ խաչերը լիտվացի ժողովրդին հիշեցնեին, որ իրենց ապուպապերը քաջ էին և պայքարում էին իրենց կործանողների դեմ: Չէ՞ որ այդ հսկա սպիտակ խաչերը շատ բաների մասին էին պատմում...

Հին վիլնյուսյան փողոցները նեղ էին: Այ, մենք քայլում ենք Պովասարյու, Վասարոս, Սաուլես, Ռուդենյու փողոցներով... Ծառերը երկու կողմերից խոնարհվում են քեզ վրա և պաշտպանում արևից, իսկ թռչուններն ուղեկցում են իրենց դայլայլով... Այստեղ ինչ-որ հանելուկային, հեքիաթային բ՛ան կա... Դու ամենուր քո նախնիների ոգին ես զգում:

Իսկ ահա մի տնակ անտառում: Ցարի ժամանակ մեր լիտվացի գործիչները հավաքվում էին այդ տնակում և քննարկում մեր շահագործված հայրենիքի վերաբերյալ կարևոր հարցեր: Այո՛, այդ տնակը կարող էր շատ բաների մասին պատմել...

Վիլնյուսն իր գոյության ընթացքում շատ նշանավոր մարդկանց է տեսել՝ և՛ Պյոտր I-ին, և՛ Նապոլեոնին, և՛ շատ ուրիշների: Այստեղ ինչ-որ ժամանակ ապրել են լեհ հայտնի բանաստեղծ Ադամ Միցկևիչը և հայ բանաստեղծ Գուրգեն Մահարին:

Երևան, 1973թ.

Հարազատ արյուն

Յուստինա Յասափիտրիտե Գուտաուսկիենե

1958թ.: 13 տարի անց, վերջապես, ես մեկնեցի Լիտվա՝ իմ հայրենիքը: Ինձ հետ էին երկու Գուրգեն(չիկ)ները: Այդ ամենն ինձ երազ էր թվում. վախենում էի, որ կարթնանամ ու հեքիաթային տեսիլքը կցնդի: Մենք ապրում էին Լիտվայի մայրաքաղաք Վիլնյուսում, «Վիլնյուս» հյուրանոցում: Մեր որդին այն ժամանակ 3 տարեկան էր: Շատ ճարպիկ, գեղեցիկ տղա էր: Երեքով մենք զբոսնում էինք փողոցներում: Տխուր հիշողությունները հուզում էին իմ հոգին: Ես Գուրգենին պատմում էի իմ անցյալի մասին: Նա լսում էր՝ տխուր ու մռայլ: Ես շատ էի ուզում գտնել գոնե մի հարազատ մարդու, որպեսզի նա պատմեր իմ ընտանիքի ճակատագրի մասին: Սկսեցի թերթել հեռախոսագիրքը: Երկար փնտրտուքից հետո, վերջապես գտա. Յուստինա Յասափտրիտե Գուտաուսկիենե՝ օպերային երգչուհի: Այո՛, ես նախկինում նրանց տեսել էի բեմի վրա: Ամուսինը խաղում էր Մեֆիստոֆելի դերը, իսկ Յուստինան՝ Մարգարիտայի: Ամեն ինչ հրաշալի էր: Նա հայրական կողմից զարմուհիս էր, սիրում էր ինձ, իսկ ես հիանում

էի նրա տաղանդով: Գեղեցկուհի էր: Շատ հպարտ: Դողացող սրտով ես հավաքեցի համարը.

- Ալո՛, Յուստինա՞: Ես եմ՝ Անտոնինա Պաուլայտիտեն: Իմ հայրը քո քեռի Միկոլասն է: Մենք եկել ենք...

- Եթե դու Անտոնինան ես, ինչո՞ւ ես ռուսերեն խոսում:

Ես ուշքի եկա. ես պետք է խոսեի լիտվերեն:

- Հասկանո՞ւմ ես, Յուստինա՛, մենք շատ հեռվում ենք եղել, հիմա վերադարձել ենք...

- Իսկ եթե դու Միկոլասի աղջիկն ես, ինչո՞ւ ես լիտվերեն այդքան վատ խոսում: Մեր Անտոնիտեն (քնքշանքի արտահայտություն) շատ գեղեցիկ, գրական էր խոսում մայրենի լեզվով: Իսկ քեզ հնարավոր չէ հասկանալ. մի բառ լիտվերեն, երկու բառ ռուսերեն, և ստացվում է վինեգրետ: Շատ տարօրինակ ու կասկածելի է:

Ես հասկացա, որ մոռացել եմ իմ լեզուն: Աստված իմ, ինչ վիճակի եմ ես հասել: Սկսեցի բացատրվել ինչպես կարող էի:

- Յուստինա՛, արի՛, խնդրում եմ, «Վիլնյուս» հյուրանոց, 14-րդ սենյակ: Ամեն ինչ կիմանաս: Մենք ընտանիքով ենք:

- Անպայման կգամ, իհարկե, եթե դուք այդտեղ լինեք, - ասաց նա հեգնելով: - Ես պետք է պարզեմ, թե դու ով ես իրականում:

- Սպասում ենք, Յուստինա՛, - ասացի ես և դրեցի լսափողը:

- Գուրգե՛ն, իմ զարմուհին է գալիս: Դու խոսիր նրա հետ, ես այլևս ուժ չունեմ: Ես չեմ կարող...

- Ես ամեն ինչ կկարգավորեմ, մի՛ վախեցիր: Գեղեցի՞կ է այդ քո Յուստինան:

- Այո՛, էր, իսկ հիմա՝ չգիտեմ: Գուրգենչի՛կ, քո մորաքույր Յուստինան է գալու, երգչուհի է: Արի՛ փոխենք հագուստդ: Խելո՛ք կլինես:

Եկավ: Նրբակիրթ տիկին՝ առաջվա պես գեղեցիկ: Իսկ ես նեղացած կանգնած եմ: Նա նայեց ինձ և ընկավ վզովս:

- Անտոնիտե՛, այդ դո՞ւ ես, Միկոլասի աղջի՞կը: Դու շատ նման ես հայրիկիդ: Ների՛ր, ների՛ր հարազատս, որ ես չհավատացի քեզ: Ասա՛, ինչո՞ւ ես դու կոտրատում լիտվերենը, արտասահմանցի՞ ես խաղում:

Գուրգեն խանը չդիմացավ, նետվեց դեպի այդ տիկինը, համբուրեց ձեռքը, երեսը, ուղիղ շուրթերը: Նա չնեղացավ: Թվում էր՝ ուրախ էր: Գուրգենչիկը զարմացած մեզ էր նայում: Յուստինան գիրկն առավ

տղայիս, համբուրեց, նստեցրեց ծնկներին: Ես նստեցի նրանց կողքին և սկսեցի պատմել:

- Անտոնիտ՛, ինչպես կարող էի ես հավատալ քեզ հեռախոսով, երբ քո դասընկերուհին ասել է ինձ, որ տեսել է, թե ինչպես են քեզ հենց փողոցում գնդակահարել:

- Նշանակում է՝ երկար կապրես, եթե քեզ գնդակահարել են, - ասաց Գուրգենը:

Գուրգենչիկը երջանկացած նստել էր Յուստինայի ծնկներին, սքանչացած նրան էր նայում և ասաց.

- Իմ մորաքույրը շատ գեղեցիկ է, ես սիրում եմ նրան:

Փառք Աստծո, ես գտա հարազատ մարդու, և դա մեծ ուրախություն էր ինձ համար:

Հետո Յուստինան սկսեց պատմել.

- Մի՛ գնա քո հայրենի քաղաքը: Այնտեղ ոչինչ չես գտնի, բացի տխրությունից ու անցյալի մեծ կորստից: Ես գնացել եմ այնտեղ, փնտրել եմ ձերոնց, մերոնց, քեռի Միկոլասին էի ուզում տեսնել: Ո՞ւր են նրանք, մահացե՞լ են, թե՞ փախել: Չէ՞ որ մեր քաղաքը ռմբակոծել են մերթ մի զավթիչները, հետո մյուսները: Գրեթե ոչինչ չի մնացել հսկա շինություններից: Իսկ հիմա, հարազա՛տս, սիրտս ցավում է, այնտեղ քիչ լիտվացիներ են մնացել: Ամենուր ռուսներ են, ռուսներ: Փողոցների անունները ռուսերեն են, չորս կողմը ռուսաց լեզուն է: Նրանք տեր են, իսկ մերոնք շատ-շատ են տառապում:

Գուրգենը պատմեց մեր անցյալից:

Յուստինան լալիս էր.

- Ինչքա՞ն շատ բան ես դու ապրել, սիրելի՛ Անտոնիտ...

- Գիտե՞ս, Յուստինա՛, եթե չլիներ Անտոնինան, իմ ոսկորները, ինչպես շատ ուրիշներինը, կմնային սիբիրյան հողում: Նա իմ բարի հրեշտակն է, փրկել է ինձ մահից:

- Ես հիշում եմ, իմ Անտոնիտեն բարի էր, խելացի և լուրջ: Բայց նրա ճակատագիրը դաժան է, - ասաց զարմուհիս և գրկեց ինձ:

Իմ Յուստինան մեզ հրավիրեց օպերա: Հրավիրեց իրենց տուն: Շատ ջերմ ընդունեց մեզ. նրա ամուսինը օպերային երգիչ էր, ներկայանալի տղամարդ: Մի աղջիկը սովորում էր օտար լեզուների ինստիտուտում, մյուսը՝ թատերական:

Գուրգենչիկն ամենահաջողակն էր: Նրան ձեռքից ձեռք էին փոխանցում: Ուսանողուհիները չէին հասցնում հետևել իրենց փոքրիկ նորահայտ եղբորը:

- Մենք Երևանից ենք եկել: Հայրս հայ է, ես ևս հայ եմ: Ես երեք տարեկան եմ, անունս Գուրգենչիկ է: Ես ձեզ շատ եմ սիրում: Դուք շատ գեղեցիկ եք: Կգա՞ք մեզ մոտ Երևան:

Իմիջիայլոց, նա սիրում էր խոսել և ուրախ էր, երբ իրեն լսում էին:

Գուրգեն խանը բարեկամացավ իմ փեսայի հետ: Մենք հաճելի երեկո անցկացրինք, բայց ափսոս, խոսում էինք ռուսերեն: Իսկ ինձ պետք էր խոսել մայրենիով, որ հարազատ լիտվերենը վերադառնար ինձ մոտ:

Երբ մենք հյուրանոց վերադարձանք, ամբողջ գիշեր չքնեցինք, քննարկում էինք ինձ համար քանկ մարդկանց մասին մեր ստացած տպավորությունները: Ինչքան լավ է, երբ երկար տարիներ հետո դու հանդիպում ես հարազատ մարդու: Հարազատ արյունը ձգում է: Գուրգենչիկը նույնպես այդ զգաց և պտտվում էր Յուստինայի շուրջ: Մինչ մենք Վիլնյուսում էինք, նա ամեն օր գալիս էր մեզ մոտ՝ հյուրանոց:

Ես խնդրեցի, որ Յուստինան երգի ինչ-որ քանկագին բանի մասին.

Որտե՞ղ է այն խրճիթը, ուր ես եմ ծնվել,
Որտե՞ղ է խնձորենին, որ ծաղկում էր այգում,
Որտե՞ղ է այն առվակը՝ քաղցր, խոխոջուն,
Եվ պատանության իմ երազները որտե՞ղ են:
Ավաղ, մեր խրճիթը վաղուց խարխուլ է,
Եվ խնձորենին արդեն չկա...
Եվ ցամքել է առվակը արդեն
Ու միայն տխուր հուշեր են մնացել ...

Քույրս երգում էր, իսկ ես արտասվում էի, ինչպես երբեք: Շնորհակալություն Յուստինա, դու ինձ վերադարձրիր անցյալը: Երկու Գուրգենչիկները լսում էին և նույնպես հուզվում:

- Իսկ հիմա, Անտոնի՛տե, դու կարդա ինչ-որ բան: Հիշում եմ՝ դու շատ էիր սիրում պոեզիա: Երբ ես գալիս էի, դու անպայման ինչ-որ բանաստեղծություն էիր կարդում: Ինձ թվում էր, որ դու միշտ ճախրում էիր երկնքում, ոչ երկրային էակ էիր:

- Լա՛վ, կկարդամ լիտվացի բանաստեղծ Մայրոնիսի բանաստեղծությունը, բայց կթարգմանեմ ռուսերեն նաև քո երգը, որ մեր տղամարդիկ հասկանան: Ահա, լսեցեք.

Ինչքան հիասքանչ ես դու,
Իմ թանկագին հայրենիք,
Երկիր, որտեղ ննջում են հերոսներ:
Իզուր չեն մեր պապերը
Քեզ կյանքով պաշտպանել,
Եվ հերոս մեր պոետները՝
Այսպես գովերգել:

Վերադարձիր մեր պապերի աճյունների մոտ,
Վերադարձիր սլացիկ խաչերի մոտ,
Եվ կրկին կօրորվեն կեչիները,
Եվ կջերմացնի քեզ հարազատ արևը
Հարազատ եզերքում,
Վերադարձիր:

(Մայրոնիս)

- Անտոնի՛նա, ձեր լիտվական պոեզիան մեծ իմաստ ունի, խոր, թևավոր: Շնորհավորում եմ, - ասաց Գուրգենը՝ ինքը պոետ լինելով: Գուրգենչիկը նույնպես իր կարծիքը հայտնեց:

- Երևի ես էլ բանաստեղծ կդառնամ, ինչպես հայրիկը: Իսկ գուցե ոստիկան դառնամ. նրանք գեղեցիկ համազգեստ ունեն:

Բոլորը ծիծաղեցին:

Ահա այսպիսի հաճելի հանդիպում ունեցա քրոջս հետ: Հետաքրքիր ժամանակ անցկացրինք: Մենք արդեն պետք է Պալանգա մեկնեինք, Յուստինան խոստացավ գալ: Նա պետք է շատ լողա, որպեսզի նիհարի:

Գուրգեն Մահարին հիանալի հուշեր գրեց մեր հանդիպման մասին: Նույնիսկ լիտվերեն բանաստեղծությունը ռուսերենով ավելացրել էր:

Հիմա, երբ ես գրում եմ այս տողերը, իմ թանկագին, սիրելի Յուստի-

նան այլևս չկա: Ցավով ու մեծ տխրությամբ եմ հիշում միակ հարազատ մարդուն, որին գտա Լիտվայում՝ Սիբիրից վերադառնալուց հետո:

Թող սուրբ լինի քո հիշատակը, քույրիկս, քեզ ես երբեք չեմ մոռանա:

Սեպտեմբեր, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3
Երկու պոետների՝ Գուրգեն Մահարու
և Պարույր Սևակի բարեկամությունը 5
Հիշողություններ գրողի դառն ճակատագրի մասին 18
Անավարտ վիպակ, վերջին ծխախոտ 24
Ռեքվիեմ... ռեքվիեմ... 26
Հիշողություններ երկու Գուրգենների մասին 29
Տխուր հիշողություններ հիվանդանոցում 36
Անհանգիստ հոգիները 47
Մեր քանկագին Աշոտը 54
Ընկեր Մահարին և պարոն Ծառուկյանը 60
Գուրգեն խանը և նրա պալատականները 63
Մեր քանկագին Վարդան Աճեմյանը 65
Գուրգեն խանը և Վահագն ջանը 79
Գուրգեն Մահարին և Հրանտ Մաթևոսյանը 83
Խոլերա 88
Ակնոց 93
Ինքնահոս 95
Ռադիո 96
Գարուն 98
Ճամփաներ, ճամփաներ 99
Թերթեր 101
Օրի 102
Մայրիկ ջան 105
Պալանգա 108
Ահա, թե ինչքան երջանիկ եմ ես 115
Վիլնյուս 119
Հարազատ արյուն 121

ԱՆՏՈՆԻՆԱ ՍԱՀԱՐԻ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Թարգմանությունը՝ Լ. Մարգարյանի

Տպագրված է

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

9 789939 523217